

ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՊՐԱԿ Ա.

ԼԵՆԻՆԱԿԱՆ

«Ա. Ռ. Բ. Բ.»-ի 8 Գ Ա. Բ. Ա.

1927

631.1

Ա - 76

07.06.2013

631-1  
U-76

ՀԱՎԱԵՓ ՄԻՐԶՈՅԱՆ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՊՐԱԿ Ա.



ԵՐԵՒԱՆԱԿԱՆ  
«Ա. Ռ. Ա. Բ. Գ.»-ի ՏՊԱՐԱՆ  
1927

ՕՐԸ ՅՈՒ 8 Ը

15691

## ՅԵՐԿՈԽ ԽՈՍՔ ԻՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Վաղեմի իղձս եր տալ հայ գյուղացիությանը  
պատրաստի գյուղատնտեսական կրթությամբ ու գի-  
տելիքներով զինված աշխատավորներ, վորոնք ի վի-  
ճակի լինեն կյանքում իրականացնել դպրոցում ձեռք  
բերած իրենց գիտությունը։ Այժմ իրականացած  
եմ տեսնում այդ իղձս։

Նվիրելով գրքույկս ձեզ՝ Լենինականի Ինդուս-  
տրիալ Տեխնիկումի գյուղատնտեսական բաժնի անդ-  
րանիկ շրջանավարտներիդ, լիահույս եմ, վոր պիտի  
արդարացնեք հայ գյուղացության հույսերը և դառ-  
նաք ուհիրաններ մեր գյուղատնտեսության բարգա-  
վաճման գործում։ Կյանքում գործադրեք ձեր գիտու-  
թյունը, ոժանդակեք յերկրի տնտեսական բարձրաց-  
ման, շինարարության մեծ գործին։ Մեծ գործը մեծ  
զոհ կըպահանջի ձեզանից։ Զեր վսեմ աշխատանքի  
առաջ դեռ շատ արգելքների, թերահավատ վերաբեր-  
մունքի կըհանդիպեք, բայց չպետք և հուսահատվեք,  
այլ համբերությամբ և յեռանդով շարունակեք ձեր  
գործը, պայքարեք արգելքների դեմ, և դեպի լավ ա-  
պագան ու հաղթանակն ունեցած ձեր ջերմ ու վառ հա-  
վատը թող ձեզ առաջնորդող փարոսը լինի։

Բարի յերթ եմ մաղթում ձեզ։

Լի հավատով և յեռանդով գեպի գործ։

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քսան տարի առաջ, — զեռ ուսանողական որերում, մեր փափազն ու իղձն եր տեսնել մեր գյուղերում ծըլած ու ծաղկած, գիտական հողի վրա դրած և նոր ու գիտական միջոցներով տարվող գյուղատնտեսություն, տեսնել հատուկ գյուղանտեսական դպրոցներ, ընկերություններ, կայաններ և այլն:

Այժմ, քսան տարուց հետո, կարծես, իրականանում են մեր վաղմի իղձերը: Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունն ամբողջ հողը տալով աշխատավոր գյուղացությանը, հետապնդում և հոգում և բարձրացնել նաև նրա՝ գյուղացության մտավոր ու գիտական մակարդակը, ընդառաջ և գնում նրա բոլոր պահանջներին ու կարիքներին, և այս կարճ միջոցում արդեն մեր գյուղն սկսում է ապրել գյուղատնտեսության վերելքի և բարելավման ամենալարված աշխատանքի ըջանը:

Խորհրդային յերկիրը թեակոխել և խաղաղ աշխատանքի, տնտեսական լայն շինարարության ուղին, վորը հիմնված և նոր սկզբունքների վրա, նպատակ ունենալով ընդմիշտ ազատավել կապիտալիստական հին խոցերից և կառուցել նոր հասարակություն, նոր տնտեսական հիմունքների՝ կոմմունիստական հիմունքների վրա:

Այժմ տնտեսական նոր հիմունքները թելադրում

են նորի և առաջ աշխատանքի ուղիղ ոգտագործում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, նույնպես տեխնիկայի լայն զարգացումն և բնության ուժերի ոգտագործումն մարդկության կարիքների համար: Բայց վորպեսզի տնտեսությունը կանոնավոր կերպով հիմնվի, կառուցվի և աշխատանքը կազմակերպվի գիտական հիմունքներով, վորպեսզի սովորեն մեքենաների հետ վարվել, իսկ գլխավորն է, վորպեսզի հասկանան նոր տնտեսական ձևերի առավելությունը հնի հանդեպ, մարդկի պետք և լինեն բավականաչափ գրադեատ: Դրա համար պետք է ձեռք բերեն գիտություն, իսկ գիտությունը ձեռք է բերվում գլխավորագետ կյանքի փորձից, գպրոցներում կամ գրքերից: Դժբաղդպար մենք չափազանց քիչ ունենք, կամ համարյա չունենք փորձերի վրա հիմնված և նոր հիմունքներով տարվող գյուղատնտեսական տնտեսություններ, իսկ զպրոցներում սովորելու համար հասակավոր աշխատավորը ժամանակի չունի:

Ուրեմն մեռմ և մի բան՝ սովորել գրքից, այսինքն՝ սովորել ինքնակրթությամբ: Այս գրքույկը հենց գլխավորապես կազմված է գյուղական կոմյերի-տական բջիջների, գյուղատնտեսական խմբակների, գյուղյերի գպրոցների համար: Դրգույկի գլխավոր խնդիրն ե—տալ գյուղատնտեսական գիտելիքներ գյուղացիներին, վոր կարողանան գործնականապես և սերտորեն մոտենալ իրականությանը, բուժեն տեղական գյուղական տնտեսության հիվանդութ, ցավոտ խնդիրները:

Յեվ ինչքան ել խոսեն և գրեն ամբողջ յերկրի գյուղական տնտեսություններում, խուլ գյուղերում,

գյուղատնտեսության բարձրացման մասին՝ իսկական լայն բարձրացումը կըսկսի միայն այն դեպքում, յերբ գյուղական մասսաները և մանավանդ յերիտասարդությունը կանցնի այնպիսի գործնական դպրոց, վորտեղ կըստանա տեղեկություններ, թե ի՞նչպես պետք ե իր տնտեսությունը փարե, ինչու հատկապես այսպես ե և գոչ այնպես. Գյուղյերիտպրոցը պետք ե տա յերիտասարդության մի ամբողջ բանակ, կազմակերպված գյուղատնտեսական խմբակներում, կոռուպերատիվ ընկերություններում ևայլն, և գյուղացիներ, վորոնք չերմ կողմնակիցներ և ակտիվ մասնակցողներ կըլինեն ամեն տեսակ խելացի բարելավումների: Գրքույկս նյութ կարող ե տալ ինքնակրթությամբ առաջ գնացող գյուղի և հողի աշխատավորին:

Գյուղաշխատավորների՝ ուսուցիչների, խրճիթվարների և գյուղացիների կողմից բազմիցս բուռն ցանկություն և հայտնիք ունենալ մի գիրք, վոր, ըստ հնարավորության, իր մեջ ունենա բոլոր տեղեկությունները և գործնական ցուցմունքները գյուղական տնտեսության առորյա կյանքում պատահող զանազան հարցերի վերաբերյալ Ընդառաջ գնալով նրանց այդ բուռն ցանկությանը, վորոշեցինք հրատարակել այս գրքույկը: Մեր ծրագրած գիրքը բաղկացած ե լինելու տասը պրակից: Ամեն մի պրակը կըներկայացնի իրենից բոլորովին ինքնուրույն, լրիվ ամբողջացրած գրքույկ, մեկը մյուսից տնկախ, ուսկայն մեկը մյուսի շարունակությունը:

Առաջարկվող գրքույկն ընդգրկում է գյուղացիական տնտեսության կարեռ կողմերը և կրում է ընդ-

հանուր բնույթ. այնտեղ խոսվում ե մեր գյուղատընտեսության աշքի ընկնող պակասությունների մասին և ցուց ե արվում, թե ինչպես ազատվել այդ սիալներից: Արդյոք հարկավոր ե այդպիսի մի զրքույկ գյուղատնտեսական խմբակներին և գյուղյերիտպրոցին: Այդ հարցին թող իրանք պատասխանեն, իսկ մեր կարծիքով, գրքույկն անհրաժեշտ ե, վրովհետև նա տալիս ե զարգացողություն, թե ինչպես պետք ե գյուղացիական տնտեսություններն ուղիղ հիմքերի վրա դրած լինեն, ինչին պետք ե ձգտել նոր տնտեսությունը կազմակերպելիս: Գրքույկն իրեք ուղեցույց ձեռնարկ կարող ե ծառայել գյուղատնտեսական խմբակի ղեկավարին ևայլն: Նա բավականաշափ նյութետալիս, վորպես ներածություն՝ դաստիսություններ կամ զրույցներ կազմելիս, ինչպես գյուղատնտեսների, նույնպես և յերիտասարդության համար:

Ի հարկե, մեր աշխատությունը զերծ չե թերություններից, բայց մի այդպիսի գիրք կազմելը, վորտեղ շոշափված լինեն գյուղատնտեսական գործնական հարցեր—բավական գժվար գործ ե: Ամենեին ցանկություն չունենք կանխել քննադատությունը և թագընել պակասությունները (որինակ՝ մենք հնարավորություն չունեինք գրքույկը նկարներով զարդարել վորվիճեակ վրանով գրքույկի գինը շատ կըբարձրանար, իսկ մենք ցանկանում ենք և ամեն կերպ աշխատում գըրքույկի գինը դարձնել մատչելի), բայց և այնպիս կարծում ենք, վոր մեր գրքույկը կըլինի ընդհանրապես ոգտակար ձեռնարկ գյուղացիների և գյուղացի աշխակերտների համար: Այսպիս թե այնպիս, նա գալիս ե լրաց-

նելու մեր գյուղատնտեսական գրականության պակաս սը: Թող սա լինի մի նախազիծ, վորք, ապազայում մբառիվելով ու կատարելագործվելով, կը հարմարվի մեր ավելի լայն պահանջներին: Թե վորքան և հաջողվել մեզ մեր առաջադրած ինդիրն իրագործել, թող գատի ինքը՝ ընթերցող գյուղացիական յերիտասարդությունը՝ և առաօսարակ գյուղացությունը, վորոնց կարծիք յեզ դիտողությունները մեզ համար շատ գնահատելի կրինեն: Ամեն մի արժեքավոր նկատողություն ու ցուցմունք մեծ շնորհակալությամբ կը նույնականաց: Մենք բավարարված կը լինենք, յեթե այս աշխատանքը ստիպի գյուղացի յերիտասարդին, գյուղյերիտղպրոցի աշակերտին, գյուղխմբակի անդամին հասկանալու, վոր կան լավ ապրելու և աշխատելու ավելի խելացի ձեեր, քան այն, վորով հիմա ապրում ե մեր գյուղը:

Եյս գրքույկը կազմելիս լայն չափով ուժավել եմ գյուղատնտեսական նորագույն դրականությունից և աղբյուրներից, տեղ-տեղ նույնիսկ փոխադրելով և թարգմանելով այդ:

Լենինի ցանկությունն եր՝ վոչնչացնել հավիտյանս հագիտենից գյուղական խավարը, չքավորությունը, տղիտությունը և դրանց անբաժան ուղեկից, անիծված սով—թագավորը, վորպեսզի գյուղը լինի ժաքուր, լուսավոր, զարգացած, կուշտ և հարուստ: Սերտ յեղբայրական միությամբ միացում առաջ բերել բանվոր պրոլետարիատի հետ: Գյուղացիների և բանվորների միությունն անխախտելի, պողպատի ույժ ե, վորը հաղթել ե և կը հաղթի իր ճանապարհին ընկած բոլոր արգելքներին: Պետք ե կառուցել՝

նոր գյուղ—ելեկտրոֆիկացիայի յենթարկված,  
նոր գյուղ—կոռպերատիվով միացած:

Ահա թե ինչ եր մտածում և անցկացնում գյուղի համար մեր մեծ լենինը: Ահա ինչ եր մտածումնա, այն մեծ հանձարը, յերբ անվեհերությամբ Հոկտեմբերյան կոչով աղաղակում եր՝ հողը գյուղացիներին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈԽԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂՅԵՐԻՑԱ-  
ՍԱՐԴՈԽԹՅՈՒՆԸ

«Առանց գյուղացու տնտեսության  
գործնական և ժամանակական բարելավ-  
ման՝ մեզ փրկություն չկա»:

ԼԵՆԻՆ

«Առանց հոգի համայնական մշակ-  
ման մեքենաների կիրառման և գիտա-  
կան կրթված ազգությունների զեկավարու-  
թյան՝ կազիտալիզմի լծից, ստրկությու-  
նից անկարելի յէ ազատվել»:

ԼԵՆԻՆ

Գյուղյերիտասարդներին գյուղատնտեսության  
բարձրացման գործում վեճակված և զրավել չափազանց  
աչքի ընկնող և պատասխանատու տեղ:

Հենվելով գյուղատնտեսության գիտության վրա,  
յերիտասարդությունը պետք է նոր արդյունաբերող  
գյուղատնտեսություն առաջ բերի:

Բոլորի համար պարզ է, վոր հին ձևով ապրել չի  
կարելի:

Հաշտվել վատ բերքի և անոգուտ տնտեսության  
հետ, նշանակում է հաշտվել քաղցի և աղքատության  
հետ:

Գետք և կառուցել նոր տնտեսություն:

Մեր առաջապահ գյուղյերիտասարդությունը, քա-  
ղաքի հետ միացած, պետք է իրագործի այդ պատաս-

խանատու խնդիրը: Ծերերի վրա հույս դնել  
չի կարելի: Ծերերը սովորել են ապրել և մը-  
տածել հին ձևով, բոլոր նորություններին նրանք ան-  
վըստահությամբ են մոտենում:

Նրանց ամբողջ կյանքն անցյալ է, իսկ յերիտա-  
սարդությունը՝ գա ինքն ապագան ե, գալիք կյանքը:  
Կանցնի մի քանի ժամանակ և զյուղյերիտասարդները  
կը փոխարինեն իրենց հայրերին՝ կը գրավին տնտեսու-  
թյան մեջ նրանց տեղերը, կը դառնան պատասխանա-  
տու տնտեսներ, սոցիալիստական կյանքի հիմնադիր-  
ներ:

Ի՞նչ է հարկավոր գյուղյերիտասարդներին իրենց  
առաջ դրված այդ խնդիրը լուծելու, իրագործելու հա-  
մար. — հարկավոր են գյուղատնտեսական գիտելիքներ  
և հմտություն (նրանց հարմարեցնել և ոգտագործել  
իր գործնական կյանքում և աշխատանքում): Այդ գի-  
տելիքները յերիտասարդությունը կարող է ձեռք բե-  
րել ինքնազործունեյությամբ և ինքնոգնությամբ՝  
կազմելով գյուղատնտեսական խմբակներ: Գյուղատնե-  
սուական խմբակներ — անա առաջին յել մասշելի մասսա-  
յական դպրոցը գյուղյերիտասարդության համար մեր եեր-  
կա պայմաններում: Աւրեմն՝ գյուղյերիտասարդներ, կոմ-  
սոմուներ, պիոներներ, անմիջապես անցեք գյուղատըն-  
տեսական խմբակների կազմակերպման: Խմբակում  
քայլ առ քայլ սովորեք կանոնավոր տնտեսություն  
հիմնել: Լսեցեք գյուղատնտեսական գիտությանը: Մի-  
արան, ներդաշնորհ, կազմակերպված աշխատանքով և  
ուժեղ ջանքերով շինեցեք, հիմնեցեք նոր և արդյու-  
նավետ տնտեսություն: Մի մոռանաք լենինի խոսքե-  
րը՝ կոմսոմոլը պետք է լինի հարվածային խմբակ,

վորն ամեն տեսակ աշխատանքին ոգնություն և հասցընում և արտահայտում և իր ինիցի տական, ձեռներեցությունը:

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿՈՒՄ Ե

Բերքը կրկնապատկելու համար անհրաժեշտ և տասնապատկել գիտելիքները, իմացականությունը և հմտությունը:

Պետք ե գիտենալ, թե ինչպես ե ապրում յեվ ըրենցում նոդը, ինչպես ե գոլորշիանում հողի խոնավությունը: Միայն այդ ժամանակ կարելի կը լինի հաջող կերպով կովել յերաշտի դեմ: Պետք ե գիտենալ, թե ինչպես ե ապրում յեվ սննդում բույսը, վորապեսզի ստացվի յերեք հասկ այնտեղ, ուր առաջ մեկն եր բուսնում:

Պետք ե գիտենալ, թե ինչպես ե կազմված յեվ աւխատում կենդանու որգանիզմը, վորապեսզի, ամենաքիչ կեր ծախսելով, ստացվի ամենաշատ բանակությանք արդյունք:

Պետք ե գիտենալ, թե ինչպես պետք ե պահել, կիրակրել յեվ խնամել կովին, վոր ստացվի որական յերեք վեղրո կար այնտեղ, ուր առաջ ստանում ելին 10—20 ֆունտ:

Յեվ այդ բոլորը պետք ե գիտենալ նրա համար, վոր գուըս գանք նեղ զրությունից, կարիքից, ծայրահեղ չքավորությունից, անձարակությունից և քաղցից:

Իսկ դրա միակ ճանապարհը՝ գիտուրյունն ե:

Գիտությամբ զբաղվողների համար չկա սահման, չկա արգելք ու խոչընդոտ, նրանք գիմում են հաղթությունից հաղթություն:

Գիտությունը հաղթել և աշխարհիս ամենահամառ ույժին՝ յերկրի ծանրությանը: Նայեցեք այերոպլանին՝ նա շինված և մետաղից, բայց նա քարի նման չի ընկնում ցած, այլ ինչպես թռչունը, ազատ ճախրում և, պատռում և ոգային ամրությունը:

Գիտությունը բռնել և անհամելի ձայնը և փակել և նրան արկղի մեջ, վորը կոչվում և գրամմոֆոն: Միթե հրաշք չե, վոր, յերբ դարարել և հնչելուց յերաժշտությունը կամ մարդկային ձայնը, դարձրել են հավիտենական արձագանք և սրանք վերակենդանանում են ամեն անգամ մարզու ձեռքի շարժումով:

Գիտությունը թափանցել և բնության գաղտնիութիւնի մեջ և սովորել և նրան զեկավարել, ինչպես փորձված կառապանը զեկավարում և վայրենի ձիյերին: Նայեցեք ելեքտրական հաղորդիչներին: Միթե հրաշք չե, վոր այդ բարակ լարերի մեջ վազում և մի ռուժ, վորը ընդունակ է լուսավորելու ամրող գյուղը կամ թե շարժելու մեքենաները: Տիրելով ելեքտրական գաղտնիքին, գիտությունը հաղթել և տարածությանը:

Միթե հրաշք չե, վոր տելեֆոնի լարի ոգնությամբ մարդիկ խոսում են հազարավոր վերստ հեռավորության վրա: Կարծես թե նրանք գտնվիլիս լինեն հարեան սենյակում:

Յեվ միթե հրաշքների հրաշքը չե, յերբ ուղիոյի ոգնությամբ մարդկային ձայնը տարածվում և ամբողջ աշխարհիս վրա, վոչ վոքի կողմից անտեսանելի և անշղափելի ելեքտրական ալիքների միջոցով:

Յեվ այսպես անվերջ, անհամար են որինակները:

Յեվս առավել յերկրագործության մեջ չկա սահման գիտության հաղթող շարժմանը, վորը վոչ այլ

ինչ ե, յեթե վոչ մշտական պայքար բնության նույնույթերի դեմ:

Յեվ յեթե, այնուամենայնիվ հողը յերբեմն գառնում ե չար, խորթ մայր և չի արդարացնում յերկրագործի աշխատանքը, և անասունը չի վարձատրում կերտվողին—ապա այդ բոլորն առաջ ե գալիս միմիայն մի պատճառից՝ բնության որենքները չիմանալուց և հողի թագնված ույժն ու կենդանու որդանիզմը ղեկավարելու անկարողությունից:

Գնացեք փորձնական կայանների դաշտերը, և դուք կըտեսնեք ու կըհամոզվեք, վոր այնտեղ կարուղանում են յերաշտ ժամանակ ել բերք ստանալ:

Գնացեք փորձնական—ցուցադրական անասնաբուծարանները, և դուք կատարելապես կըհամոզվեք, վոր այնտեղ կարողանում են ոգուտը յեռապատկել ամեն տեսակ կերից:

Հետևապես քաղցը, սովը վոչ թե յերաշտից ե, և անասունների կոտորածը վոչ թե անձարակությունից ե, այլ սկիտուրյունից ե, անօտուրյունից:

Ուստի զինվեցեք գիտության լավտերով կավելու բնության չար ույժերի դեմ: Գյուղատնտեսական գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհներ շատ կան՝ դպրոցը, կուլտուրը, գյուղատնտեսի զրույցները, գյուղատնտեսական խմբակները, ևայլն:

Այն անհատները, վորոնք հարմարություններ չունեն ոգտվելու դրանցից, պետք ե դիմեն գյուղաքանական ինքնակրուրյան:

Այս գործին մասամբ ոգնելու համար, հրատարակում ենք մեր գրքույկը: Նրա նպատակն ե ոժա-

գակել գրքի միջոցով ձեռք բերել գյուղատնտեսական գիտելիքներ:

Գիտությունն ույժ ե: Նա փրկում ե:

## ԱՐԴՅՈՒՆ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գյուղացիների մեջ ընդհանրապես տարածված ե այն կարծիքը, վոր իբր թե գյուղատնտեսությամբ զբաղվելը մի հասարակ գործ ե՝ սովորել նույնիսկ մտածել անգամ այստեղ հարկավոր չե, այլ միայն իմացիր լավ գործադրել գութանը և գերանդին—և ամբողջ գործը պատրաստ ե:

Յեթե ուզենանք դարբին, կոշկակար, ատաղծագործ, փականագործ դառնալ՝ հարկավոր ե մի քանի տարի սովորել իսկ գյուղական անտեսության մեջ ամեն մեկն իրեն ընդունակ ե համարում յերկրագործ դառնալու:

Այդքան ցած ե գնահատում գյուղատնտեսական գիտությունը միմիայն մեր յերկրագործը, Գերմանացիները կամ ֆրանսիացիները գյուղատնտեսական ըգբաղմունքը հաշվում են շատ դժվարին, բարդ և լուրջ գործ, վորը պահանջում ե, ֆիզիքական ույժից ու փորձից, շատ գիտելիքներ:

Փականագործը կամ կոշկակարն ամեն տեղ և ամենուրեք կարող ե միատեսակ, լավ կատարել իր աշխատանքը, միայն թե լինի իրեն համար նյութ: Բոլորովին այլ գրության մեջ ե գտնվում յերկրագործը: Նախքան իր գործին անցնելը, նա պետք ե ուշադրությամբ նայի, դիտի, զննի, մի քանի անգամ հաշ-

վի, լավ մտածի ու կշոր՝ և միայն այդ ժամանակ անցնի գործի: Չպետք ե նույնպես մոռանալ, վոր ամեն մի արհեստավոր գործ ունի մեռած նյութի հետ, մինչդեռ գյուղական տնտեսն իր ամբողջ կյանքը անց ե կացնում կենդանի եյակների հետ, վորովհետեւ բույսերն ել նույն կենդանի եյակներն են, ինչպես և մարդը: Բույսերը, ինչպես և մարդը, ծնվում են, մհծում են, բազմանում են և մեռնում են: Բույսը, ինչպես և մարդը, կարիք ունի սննդի, ոդի, լույսի և տաքության: Յեթե յենթակա հիմանդրություններին յերկրագործը կարողանա տրամադրել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ ե բույսի անման համար, միայն այն ժամանակ նա կարող է հուսալ մեծ բերք ստանալու:

Առաջներում, յերբ աղատ հող շատ կար, իսկ ազգաբնակչության թիվը քիչ եր, ապա շատ հաց ըստանալու համար, բավական եր ավելացնել վարելու տարածությունը: Աղաքես հեշտությամբ և հասարակ ձեռվ գործը վճռվում եր պատրաստի հողի վերաբերյալ վորը գեռ մշակման չեր յենթարկված: Իսկ այժմ այն չե, ուրեմն պետք է հոգալ, վոր արդեն զբաղված է բնակված հողի տարածությունից մեծ բերք ըստացվի:

Թեև մենք ամենեին չպետք ե նեղանանք, վոր քիչ հող ունենք, բայց ստացված ցածր բերքը վատ և կերակրում յերկրագործին, վատ են վարձատրում նրան հողի վրա թափած աղխատանքի համար: Մեր յերկրագործը շատ ե աշխատում ու տանջվում: Սկսած վարից մինչև հունձր, ահագին ժամանակ ե գործադրում, և քրտինքը ջրի պես թափվում ե: Ուերեն անհամար են, այնինչ ամերիկական յերկրագործը այդ բոլոր գործի

վրա կորցնում և 21 ժամ մարդկային աշխատանք և 57 ժամ տրակտորի: Տարբերությունը խոշոր ե, զուրս և գալիս, վոր ամերիկական յերկրագործը մեզանից շատ հմուտ ե, բանիմաց և վարպետ: և այդ հմտությունը նա ձեռք ե բերել լավ տեղյակ լինելով գյուղատնտեսական գիտության: Դիո այդ բավական չե, նա ամեն տարի լրացնում ե իր գիտությունը, կարգալով գրքեր և թերթեր, ձմեռը լուսմ ե գասընթացներ, գասախոսություններ, վորտեղ նրան հայտնում են գյուղատնտեսական բոլոր նորությունները:

Պետք է ասեմ վոր գիտությանը շատ բան են ավել հենց իրենք՝ ամենատաշագեմ, հմուտ և գիտակից յերկրագործները: Այժմ ամեն մի գուղացի ծանոթ և միմիայն իր և իր համագուղացիների տնտեսություններին իսկ գիտությունը տալիս ե բոլոր փորձված և ոգտական գուրս յեկած գյուղատնտեսական տեղեկությունները, այն ել զոյ միայն մի վորեն պետության մեջ, այլ ամբողջ աշխարհում: Հետևապես գյուղատնտեսական գիտությունը ներմուծում և զոյ միայն այն, ինչվոր հնարել են, գտել են գիտնականները փորձնական կայաններում կամ գիտական առանձնանյակում, այլև շատ բան նրանից, ինչ վոր գործագրել են խելացի և լրջամիտ տնտեսները:

Չի կարելի կանգ չառնել և մի հանգամանքի վրա, այդ այն ե, վոր հողի տարածությունը մնում ե նույնը (յեթե չառնք պակասում ե), իսկ ուտողների թիվը տարեց տարի ավելանում ե: Հողի ույժը հետզհետեւ թուլանում ե, և յերկրագործը պետք ե միջոցներ ձեռք առնի հողի ույժն ավելացնելու համար: Ուրեմն նշանակում ե, պետք ե գիտնական թե գիտությունն ինչ-



պիսի միջոցներ ունի հողի արտադրությունն ու կենացանիների արդունավետությունը բարձրացնելու համար:

Այստեղից պարզ է, թե ինչքան կարևոր է ամեն մի հողագործի համար գիտությունը: Գիտությունը նրան կըպատմի բույսերի կյանքի, նրանց սննդի, հողի մասին, վորի վրա նրանք ապրում են, ինչպես լավացնել բույսերը, ինչպես կիրակեր կինդանիների ևայլն, դա հնարավորություն կըտա յերկրագործին մտածված և խոհականորեն վարվել զանազան դեպքերում իր տնտեսական կյանքում:

Առանց գիտելիքների մենք շարունակ կըմնանք միևնույն տեղում, մնալով գյուղատնտեսական տեսակետից բոլոր յերկրների համեմատությամբ ամենից հետամնաց յերկրագործ: Պետք է ավելացնել և լավացնել գործը տանելու հմտությունը և գիտենալը, պետք է ուսումնասիրել ուրիշ յերկրագործների փորձը և այն, ինչ վոր ձեռք է բերված գիտության միջոցով, վորպեսզի կրկնապատկել յեռապատկել մեր բերքը:

## ԳՅՈՒՂԱԾՆՑԵՍԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ ԿԱՄ ԲԶԻՀՆԵՐ

Մեր ամբողջ գյուղատնտեսական ոլրոպագանդան գլխավորապես հենվում ե գյուղատնտեսական խմբակների վրա: Այսպիսի խմբակներ կազմելու փորձերը Ամերիկայում և Յելլուպայում, վորտեղ նրանք արդեն տասնյակ տարիներ ե, ինչ զոյություն ունեն, իրոք վոր հակայական են: Կարելի յե ասել, վոր վերջին տասնամյակում տեղի ունեցած գիտության և տեխնի-

կայի նորագույն նվաճումները մուտք են գործել Ամերիկայի գյուղերը և ամերիկյան գյուղացու առորյատնտեսության մեջ՝ համարյա բացառապես շնորհիվ գյուղատնտեսական այդ խմբակների գործունեյության:

Այդպիսի խմբակների կազմակերպելու առաջին փորձերը Խորհրդային Հանրապետություններում, մասնավանդ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.ում այնպիսի փայլուն արդյունքներ են տվել, վոր այժմս այլևս վոչ մի կոնոնավոր կազմակերպված գյուղատնտեսական աշխատանք, պրոպագանդա կամ «կամպանիա» առանց այդ խմբակների անկարելի յե պատկերացնել իսկ:

Այդ խմբակներն առանձնապես աչքի ընկնող գերեն խաղացել կարմիր բանակում, վորտեղ գյուղատնտեսական խմբակների թիվը շատ շատ ե:

Շատ գյուղատնտեսական խմբակներ ունեն իրենց փորձնական դաշտերը, բանջարանոցները, մեղվանոցները ևայլն:

Գյուղատնտեսական խմբակը՝ գա ընկերների մի փոքրիկ, սերտորեն միացած, կապված գրուպվա յե, վորը հանձն ե առել ուսումնասիրել գյուղական տնտեսությունը, մշակել գյուղի տնտեսության վերաբերյալ հաստատում, գիտական հայացքներ: Գյուղատնտեսական խմբակի հիմնական խնդիրը կայանում ե նըրանում, վոր իրենց շուրջը համախմբեն, կազմակերպեն միենույն հարցերով հետաքրքրվող ընկերներին:

Յեթե ասենք, մեղվաբուծությամբ պարապող շրջանում գյուղացիների մեջ հետաքրքրություն ե առաջացել դեպի խմբակային աշխատանքը, ապա սխալ կըինի, յեթե ամբողջ այդ շրջանում ել կազմակերպվեն միենույն նպատակն խմբակներ,

մեղվաբուծությունն ամբողջապես ուսումնասիրելու համար: Ավելի ճիշտը կըլինի այսպես անել՝ գյուղացիներից կազմակերպել այնպիսի մի խմբակ, վոր զբաղվեր հատկապես փթախոտով, մի ուրիշ խմբակ հետաքրքրությունից իրավու փեթակների տեսակներով և դործիքներով, յերրորդը՝ ուսումնասիրի մեղվաբուծությունը, ևայլն:

Գյուղատնտեսական խմբակի հիմքը, ուղն ուծուծը պետք ե գառնան գյուղական կոմյերիտականները, յերիտասարդությունը, պիտոներները և աշակերտությունը: Կոմմունիստները պիտի որինակ ծառայեն: Գյուղատնտեսական պրոպագանդան հաջողություն կունենա միայն այն դեպքում, յերբ տեսական զբաղմունքի նետ միանել տարվի յել կենդանի գործը:

Այսպիսով, գյուղատնտեսական խմբակն իրենից ներկայացնում ե մի շտար, վոր զեկավարում և զորքերին՝ խմբակի մեջ մտած ընկերների տնտեսությունները:

Այդ շտարի գլուխը կանգնած պետք ե լինեն զյուղատնտերը և պատախանատու ընկերները:

Խմբակի անդամները պես ե խմբակի մեջ մտենքառապես իրանց ազատ կամքով, կամավոր հիմուներով:

Խմբակի անդամների թիվը շատ մեծ չպետք ե լինի: Մեծ թվով անդամներով խմբակը կըլինի դանդաղութեած, դիսցիպլինան ընկած յեկ կրպակափ սեր կապը:

Խմբակի զեկավարը պետք ե լինի գյուղատնտես, գյուղատնտեսական հրահանգիչ կամ, ծայրահեղ դեպքում, գյուղատնտեսությանը բավականին ծանոր ու գիտակ ընկեր:

Սրա հնատ միաւին պետք ե ի նկատի ունենալը վոր խմբակի զեկավարը այդ այն չե, ինչ վոր ուսուցիչը դպրոցում:

Խմբակը չպետք ե ազիտատորներ պատրաստե, այլ զգաստ, խելացի, բանիմաց անտեսներ, վորոնց ազիտացիան հետագայում կըլառնա իրանց տնտեսությունները բարեկալվելն ու վերականգնելը: Ուստի ե զեկավարի գերը պետք ե լինի՝ տալ վոչ միայն հիմնական ցուցմունքները, այլ նոր մտքեր և ուղղել սըխաններն ու բացերը: Իսկ ամբողջ աշխատանքները պետք ե կատարեն խմբակի անդամներն իրանք, առանց քաշվելու արտահայտեն իրանց մտքերը, սովորելով իրենց իսկ կատարած սխալներից և մոլորությունից, համառ կերպով հետապնդեն իրանց իսկ խելքով համենելու և ձեռք բերելու կանոնավոր յեղբակացություններ և արդյունքներ:

## ԽՆՉ ՍՈՎՈՐԵՑՐԵՅ ՓՈՒՅԻԿ ԴԱՆԻԱՆ\*

Դանիան մի շատ փոքրիկ պետություն ե, վոչ ավելի, քան Խուսաստանի վորսե նահանգը. սա մի քիչ մեծ և մեր Խորհրդային Հայաստանից: Ունի ընդամենը յերկու և կես միլիոն բնակիչ: «Պատիկ բայց չստիկ ե»—ասում ե առածը: Սա միւլյուղական գրախան է: Մի յերկիր, ուր հազիվ կըգտնեք մեծ քաղաքներ, բայց շատ ու շատ կըգտնեք գյուղական հարուստ տընահսություններ, աներ: Մի յերկիր, ուր յերկրագործությունը, անասնապահությունը, թունապահությունն որինակելի հիմքերի վրա յեն դրված: Յեղյուրագոր

\*) Տվյալները նախապատերազմական են:

կենդանիների թիվը հասնում և յերկուս և կես միլիոնի: Ցուրաքանչյուր տարի հինգ միլ. փութ յուղ և արտահանում Անգլիա և այդ յուղն Անգլիայում ամենաշընտիրն և համարվում և ամենաբարձր գնով ծախշում: Միս ու մասցու կենդանիներ արտահանվում են Դանիայից 20 միլ. ոռորդու, իսկ ձու՝ ավելի քան յերկու միլ. ոռորդու: Վիճակագրությունը ցույց է տալիս, վոր յուրաքանչյուր դանիացի միջին հաշվով խընայողական գանձարկղներում ունի հարյուր յերեսուն և հինգ ոռորդի, մինչ զեռ ֆրանսիայում այդ թիվը հասնում է 40 ոռորդու, իսկ Ռուսաստանում՝ միմիայն 7 ոռոր: Ուրեմն՝ դանիացին սկ որվա համար յերեք և կես անգամ ավելի յետ զցում, քան ֆրանսիացին և 20 անգամ ավելի՝ քան ոռուսաստանցին: Դանիայի ազգաբնակչությունը փոքր է Ռուսաստանից 52 անգամ, բայց նրանից հարուստ և 22 անգամ և այդ բոլոր հարստությունը դիզել և դանիական գյուղացին իր հոգի մշակությամբ, իր հաջող աշխատանքով:

Ումից պիտի որինակ վերցնի մեր հետամնաց, աղքատ, քաղցած գյուղացին, յեթե վոչ դանիական գյուղացուց, Վերջինս կուշտ և և ապահով, իսկ մեր գյուղացին վոչ միայն զուրկ և մարդավարի ապրուստից, այլև չգիտե, թե ինչպես պիտի յերբեն հասնի նրան և իսկի չի ել հավատում, վոր գյուղացու համար հնարավոր և կարգին ապրուստ ունենալ: Ուստի անհրաժեշտ ե՝ ակներեն, շուշափելի փաստերով համոզել հարկավոր և ներենչել գյուղացուն, վոր հողը վոչ թե խորթ, այլ հարազատ մայր ե, վոր այդ բանն առասպել չե, այլ անհերքելի ճշմարտություն: այն ժամա-

նակ նա ինքը կըցանկանա իմանալ, թե Ի՞նչ ճանապարհով են առաջ գնում ուրիշները և ինքն ել կըգնանույն ուղղությամբ:

Բավական չե ավանդել գյուղացուն գյուղատընտեսական գիտելիքներ, պետք և նրա սրտում հավաքարթեցնել դեպի այդ գիտությունը, վորպեսզի նա գիտակցի այդ գիտության անհրաժեշտությունը: Հարկավոր և փոքր ինչ ինքնավակսահուրյուն ներշնչել նըրան, հասկացնել, վոր գյուղացիությունը պիտի իր վոտների վրա ամուր կանգնի, ինչպես ամուր են կանգնած Դանիայի, Նոր Զելանդիայի և Կանադայի գյուղացիները: Յերբ գյուղացիները կըտեսնեն, թե ինչ հրաշքներ և գործում դաշտերի բարելաված մշակությունը, թե ինչ նշանակություն ունի արհեստական պարարտացումը, ինչպես կարելի յետ անասնապահությունը շահավետ դարձնել, ինչպես կարելի յետ ընկերություններ ու մատչելի վարկ կազմակերպել եայլն, եայլն, իրանք ել կաշխատն նմանվել և հետեւ նըրանց:

Դանիական գյուղացին յուրացրել է այն միտք, վոր գյուղացու մտավոր ասինանի բարձրուրյունը երածինական առաջադիմուրյան ամենավասթելի հիմնաւարն է յեվ ապահով պատվանդանը:

Դանիական և գերմանական պայմանները համեմատելով, գտնում ենք, վոր Դանիան նույնքան տոկոս վոչ հողագործ ունի, վորքան և Գերմանիան, և չնայած դրան՝ 1903 թվին Դանիան ավելի վաճառահանել ե, իսկ Գերմանիան ավելի ներմուծել մարդագրուխ հաշված:

|  |                       |
|--|-----------------------|
| Դանիայի վաճառահանու-   | Գերմանիայի ներմուծման |
| թյան ավելացումը  | ավելացումը            |
| Յուղ 45 մարկ   | Յուղ 0,40 մարկ        |
| Զու 6 »  | Զու 2,00 »            |
| Խոզի միս 22 մարկ   | Խոզի միս 0,64 մարկ    |
| Գումարը՝ 73 մարկ   | Գումարը՝ 3,40 մարկ    |
| Դանիական գյուղացիներն իրանք ել հավատա-<br>ցընում են, վոր հիշյալ առարկաների արդյունահանու-<br>թյունը վերջին տասնամյակներում սաստիկ աճել ե և<br>վոր աճումը պետք ե ամրողացվին վերագրել գյու-<br>ղացու մտավոր առաջադիմության: Մինչ ել ի հարկի,<br>կատարելապես համաձայն ենք այս տիրապետող կար-<br>ծիքին, վոր գյուղական ազգաբնակության իմացակա-<br>նության բարձրացումը՝ արդյունաբերական ույժի կա-<br>րգորագույն լծակն ե: |                       |

## Ի՞նչՊես Ե՞ն ԱՊՐՈՒՄ ԴԱՆԻԱՅԻ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Դանիան, ինչպես վերն ասացինք, մի փոքրիկ պե-  
տություն ե, իսկ և իսկ Բյազանի նահանգի չափ.  
Բյազյանի ազգաբնակչությունը յերկու միլիոնից մի-  
քիչ ավել ե, իսկ Դանիայինը՝ 2 և յերեք քառ. միլիոն,  
համարյա թե միատեսակ են: Դանիայի բնակչության  
չափը վերցրված ե մինչև պատերազմը 1914—1918 թ.  
Վորից հետո նրա սահմաններն ու ազգաբնակչությու-  
նը մի քիչ ավելացել ե: 1916 թվին Բյազյանի նահան-  
գում հավաքված եր համար, գարի, ցորեն և կորեկ  
մոտ 58 միլ. փութ: Դանիան նույն տարածությունից  
հավաքել ե 224 միլ. փութ, այսինքն՝ 4 անգամ ավել:

Կարտոֆիլն այստեղ հավաքել ելին 2 անգամ ավել:  
Սակայն Դանիան վոչ հացով, վոչ ել կարտոֆի-  
լով առևտուր չի անում, այլ վերամշակում և ինքը  
մսի, ճարպի, յուղի, կաթի և պանրի,—այսինքն՝ հացը  
չործադրում ե անասուններին գերացնելու համար:  
Դանիայի յեղջյուրավոր անասունը 4 անգամ ավել է  
Բյազյանի նահանգի յեղջ. անասունից և գանիտական կո-  
վը յեթե տալիս ե կես վեղրո կաթ որական, առա նը-  
րան հաշվում են վնասաբեր, և գերացնում են մորթե-  
լու համար: Բյազյանի նահանգը 1916 թվին ունեցել  
է 280,471 խոզ, այնինչ Դանիան ունեցել ե մի միլ.  
467,822, այնինքն՝ 5 անգամ ավել: Հավը մեզ մոտ  
ամենափոքը խնամքով անգամ չի ոգտվում: Դանի-  
այի գյուղացին թռչնաբուծության վրա շատ լուրջ  
ուշադրություն ե դարձնում: Այստեղ 1916 թ. հաշ-  
վում եր 12 միլ. հավ, այսինքն՝ 6 անգամ ավել Բյա-  
զյանի նահանգի հավերից:

Հետեանքն այն ե, վոր Դանիան անասունների  
և թռչունների մեծ առևտուր ունի Անգլիայի և այլ  
յերկրների հետ: Դանիայի առևտրական փաստաթղթե-  
րից յերկում ե, վոր նա տարեկան արտահանում է  
արտասահման:

Ընտիր կարագ 5 միլ. փթից ավել

Կաթ և սեր 2 միլ. փթից ավել

Խոզի միս 7 և կես միլ. փթից ավել

Զու 430 միլ. հատ:

Հետաքրքրական ե այստեղ հիշել վոր դանիա-  
կան ամենաաղքատ գյուղացին ունի մեկ և կես գե-  
յատին հող, լավ տուն և անասնանոց իր բակով: Տըն-  
տեսության մեջ կան՝ մեկ ձի, յերկու կով, յերկու

խող և 100 հազ. (Մեր հայացքով սա չքավոր չե, այլ բավական ունեոր ե): Խոկ միջակ գյուղացին ունի 4-6 դես. հող, 3 ձի, 4 կով, 2 յերինջ, 2 լծկան, 3 խող և 26 հավ: Տնտեսությունը փոքր ե, բայց ունի 8-դաշտյան սերմնափոխություն՝ 1. զբաղված ցել, 2. աշն. տարեկ, 3. գարի, 4. բազուկ, 5. վարսակ, 6. գարի, 7. խոտ և 8. խոտ: Նրանք վարում են իրենց անտեսությունները գիտության համաձայն, այդպես են անում վոչ միայն դանիական գյուղացիները, այլև ուրիշ յերկը ըստներում: Ցել ահա ինչ է ստացվում:

|              |    |      |       |     |      |       |
|--------------|----|------|-------|-----|------|-------|
| Ֆրանսիայում  | մի | դես. | տալիս | 86  | փութ | ցորեն |
| Գերմանիայում | »  | »    | »     | 132 | »    | »     |
| Անգլիայում   | »  | »    | »     | 147 | »    | »     |
| Բելգիայում   | »  | »    | »     | 156 | »    | »     |
| Հոլանդիայում | »  | »    | »     | 170 | »    | »     |
| Ռուսաստանում | »  | »    | »     | 45  | »    | »     |
| Հայաստանում  | »  | »    | »     | 35  | »    | »     |

### Տարեկան բերքն այսպես ե.—

|              |   |   |     |      |    |            |
|--------------|---|---|-----|------|----|------------|
| Ֆրանսիայում  | . | . | 70  | փութ | մի | դեսյատինից |
| Գերմանիայում | . | . | 110 | »    | »  | »          |
| Բելգիայում   | . | . | 149 | »    | »  | »          |
| Ռուսաստանում | + | . | 51  | »    | »  | »          |

Արտասահմանում ամենուրեք յեռադաշտը փոխված ե բազմադաշտով, խոտերի ցանքսով. զրա համար ել հնարավոր ե անասուններ բուծել:

Ամեն մի 100 դես. վարելահողում Ավստրիայում պահում են 66 գլուխ յեղջուրավոր անասուն.

|              |   |     |                   |          |
|--------------|---|-----|-------------------|----------|
| Ֆրանսիայում  | . | 69  | գլուխ յեղջուրավոր | անասուն. |
| Գերմանիայում | . | 93  | »                 | »        |
| Բելգիայում   | . | 150 | »                 | »        |
| Անգլիայում   | . | 184 | »                 | »        |
| Ռուսաստանում | . | 29  | »                 | »        |
| Հայաստանում  | . | 36  | »                 | »        |

Ցեթե կա անասուն, ուրեմն կա և աղբ, պարարտանյութ գաշտերի համար: Պարարտացրած գաշտերը շատ են բերք տալիս, շատ հաց, շատ ել անասուն: ահա ինչպիսի անտեսական շրջանառություն կա:

Իդեալ՝ վերցնենք, մեր ցըրջանառությունը: Մեր անկվը շուռ ե գալիս հակառակ կողմը՝ «չկա կեր» նշանակում ե չկա անասուն, չկա աղբ, չկա հաց, —իսկ չկա հաց, չկա և կեր:

Թե ինչպես են ապրում Իյազանի գյուղացիները և ինչ են արտահանում արտասահման, զրա մասին գիտեն վոչ միայն իրենք ոյազանցիք, այլև Խորհրդային Հանրապետությունների ամբողջ Միությունը: Հենց իրենց ել հացամթերքները ամեն տարի չեն բավականցնում, իսկ ծախելու մասին, իհարկ ե, խոսք լինել չի կարող:

Իսկ ինչո՞ւմն ե կայանում դանիական գյուղացու անտեսության հաջողությունը:

Գուցե նրանց հողը լավն ե: —Վաչ, այնտեղ մեծ մասամբ ավագ և կավ ե, և նրանց հողը վատ ե մերից: 100 տարի առաջ, Դանիայի անտեսությունները յեղել են ճիշտ այնպես, ինչպես մեղ մոտ: Այն ժամանակավանից Դանիայի գյուղացին ձեռք ե բաւել պապենական պատվերերից, վաղեմի հասկացողուրյուններից յեվ վարում ե Տնտեսությունն այնպես, ինչպես պատվիրում ե

անել գյուղատնեսական գիտությունը: Ահա հաջողության դադարնիքը: Դանիական գյուղացին աշալուր հետևում է գյուղատնտեսական գիտությանը: Ամենից առաջ, բոլոր հասակավոր մարզիկ այնտեղ գրագետ են: Ամեն մի գյուղացի ստանում է թերթեր և ունի բավականաչափ գրքեր: Յերկիրն ունի 30 մասնագիտական գյուղատնտեսական գպրոցներ: Վերջապես դանիական գյուղացիությունը մասնակցություն և ցույց տալիս գյուղատնտեսական ընկերություններին, հաճախում է գասախոսությունների, կազմակերպում է թանգարաններ և գյուղատնտեսական ցուցահանդեսներ: Մեր գյուղական տնտեսությունը սասարիկ տուժում և յերաշտից, չափաղանց խոնավությունից, կարետի հասցըրած վնասներից, անասունի կոտորածից և այլ տարերային դժբաղբություններից: Դանիական գյուղացին նման բան յերբեք չի ճաշակում:

Խնչիցն ե, կրնարցնեք գուք. դանիական յերկրագործը խոմ յերկնքից անձրի ցած չի բերում: Զե, բայց նա միջոց ունի, վորով յուս յեն գնում այն խոնավությամբ, վորը թափում է յերաշտ տարին: Այդ միջոցները մատչելի յեն և մեր գյուղացիության համար, պետք է միայն գիտենալ և ոգտագործել: Դանիական գյուղացին գիտե և ոգտվում ե: Իսկ դժբաղբության գեպքում նա պահեստում գեռ միջոց ունի, այդ ապահովագրությունն ե: Դանիայում ապահովագրված է ամբողջ գյուղացիական տնտեսությունը՝ տունը, անասունը, ցանքսերը, ևայլն:

Ապահովագրությունը տեղի յե ունենում գոխադարձ ոգնությամբ, կոոպերատիվով, և յեթե կարելի յե այդպես արտահայտվել, դանիական գյուղացին ի-

րան շրջապատել և կոոպերացիայով: Դանիայում կոոպերացիան շատ և զարգացած: Յերբ գյուղացուն հարկավոր և գրամ, նա այդ ստանում է վարկային կոոպերատիվից և, հասկանալի յե, կարիք չի զգում վաշխառուների ծառայության:

Կոոպերատիվի միջոցով դանիական գյուղացին գնում և գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, լավ սերմեր, պարարտանյութ, անասունների համար կեր: Կոոպերատիվի միջոցով նա ծախում և արտասահմանում իր տնտեսության մթերքները և այդպիսով մասնավոր չարչիներին գուրս և շպրտում ասպարեզից: Կոոպերատիվի միջոցով դանիական գյուղացին վերամշակում և մթերքները՝ կաթը, յուղը և պանիրը, կազմակերպելով յուղագործական արտելներ, մորթում և անասունը ևայլն, ևայլն: Յեկ գանիական կոոպերացիան ամուր վոտի յե կանգնած՝ բավական և ցույց տալ վոր գյուղացիական մթերքների առևտրի մեծ մասը կատարում և կոոպերատիվի միջոցով:

Ահա վարտեղ և դանիական գյուղացու ուժիք՝ Երազուղատնեսական գիտուրյանը հետեւիլու յեկ կոոպերացիայի մեջ, զիտելիների յեկ վոխադառ ոգնուրյան մեջ:

## ՀՈՂԸ ՅԵՎ ԲՈԽՑԱՐ

Բոլոր գյուղատնտեսական զբաղմունքներն ամբողջովին վերցրած սովորաբար կոչվում է յերկրագործություն: Այդ ցույց և տալիս այն նշանակությունը, վորպիսին հողն ունի գյուղական տնտեսի համար:

Գյուղատնտեսության մեջ ամեն ինչ կապված է հողի հետ: Հողի արդյունաբերությունից ե, վոր ամ-

բողջ տնտեսությունը ծաղկում եւ հողի մեջ կա այն ամենը, ինչ վոր պահանջում եւ բույսը Յեթե բույսի արմատներն ազատ, հանգիստ են ապրում և հողում աճում, մեծանում են, յերկրագործը լավ բերք կըստանա իր դաշտերից:

Իռլուսուրական բույսը հողից մի շարք պահանջներ ունի: Բույսը պետք է հողի մեջ սննդարար նյութերի վորոշ պաշար դժոնի: Բույսը հողից պահանջում ե, վոր նա ողի համար թափանցիկ լինի, վորը անհրաժեշտ է արմատների շնչառության համար: Բույսին անհրաժեշտ է իր աճման զարգացման համար ջրի բավականաչափ պաշար: Վերջապես, հողը պետք է լինի տաք: Հետևապես հողը հանդիսանում է բույսի համար սեռնեղ, ոդ, խօնավուրյուն յել տաքուրյուն մատակարարող: Բույսի հաջող աճումը, մեծանալը կախված է նրանից, թե ինչ չափով հողը կարող է ապահովել բույսին սննդով, խոնավությամբ, ոդով և տաքությամբ: Յեթե թեկուղ այդ հիշված պայմաններից վորեն մեկն հողը չկարողանա բավարարել ապա բույսի զարգացումը վատ կըլինի:

Բույսի մարմինը կազմված է յերկու տեսակ նյութերից՝ այրվող և չայրվող:

Բույսն այրվելուց հետո թողնում է փոքր քանակությամբ մոխիր: Որինակ՝ 100 գրամ բույսի չոր նյութ այրվելիս մնում է մոտավորապես 5 գրամ մոխիր: Այրվելուց հետո մնացած նյութերը կոչվում են մոխրային կամ հանիքային նյութեր:

Այն, ինչ վոր այրվում է, կոչվում է որգանական նյութ, Ուրեմն ամենից շատ դրանից և գտնվում բույսի մարմնի մեջ:

Մոխրային նյութերը բույսը վերցնում է հողից: Կա ևս մի նյութ, վորը բույսը վերցնում է հողից, սակայն մոխրի մեջ մենք նրան չենք տեսնում: Այդ նյութը կոչվում է ազոս (բորակածին): Բույսն այրվելիս, ազոտը մոխրի չի դառնում, այլ ցնդում, անհետանում է ողի մեջ:

Բույսի այրվող մասն այն նյութերից է առաջանում, վորոնց բույսերը վերցնում են ողից տերևների միջոցով: Որի մեջ այդ նյութերից շատ կան, դրանց պակասը յերբեք չի զգացվում: Այսպիսով յերկրագործը կարիք չի զգում հոգալու այն սննդի մասին, վորը բույսն ստանում է ողից: Այլ բան պետք է ասել մոխրային, սննդարար նյութերի մասին, վորը տալիս է հողը բույսին: Այդ նյութերից հողում շատ չկան, և նրանք գտնվում են հողի մեջ մեծ մասամբ այնպիսի դրությամբ, վոր բույսը չի կարող նրացնից ոգտվել:

Գիտնականները ստույգ կերպով իմացել են, թե բույսերն ի՞նչպիսի սննդարար նյութեր են վերցնում հողից: Բույսը հողից ընդամենը ստանում է 8 զանազան սննդարար նյութեր, բայց յերկրագործին հարկավոր է, վոր նա հաստատ, լավ հիշե միայն 3 կարեվորագույն նյութերի անունները՝ այդ ազոտն ե, ֆոսֆորը (լուսածին) և կալի (առանձին տեսակ բուսական աղ). մնացած նյութերը հողի մեջ գտնվում են առատությամբ, բույսերն ել նրանց վերցնում են չափազանց քիչ քանակությամբ:

Մի քանի խոսք ասենք այդ յերեք կարեւորագույն սննդարար նյութերի մասին, վորոնց բույսերն ստանում են հողից:

Ազուր՝ գաղ ե (ողի նման), Դրանից սպում շատ կա, բայց բույսերը (բացառությամբ յերեքնուեկի, միկի, սիսինի և այլ այսպես կոչված լորիացեղ—բակլայանման բույսերի) ազուր վերցնում են հողից. Ազուր մտնում է բորակի կազմի մեջ, վորը գոյանում է և հողի մեջ. Հենց այդ բորակից բույսերն ստանում են ազուր իրենց սննդի համար:

Ֆոսֆորը մտնում է վուկրների նյութերի կազմի մեջ և նույնպես, կրի հետ միանալով, գոյացնում է, առաջ և բերում բնության մեջ տարածված ֆոսֆորի (Փոսֆորաքար) հանքը: Ֆոսֆորը, ճիշտ ե, շատ քիչ քանակությամբ և մտնում շատ քարոտ տեսակների մեջ, որինակ՝ գրանիտի մեջ: Իսկ վորովհետև մի ժամանակ հողն առաջացել ե քարատեսակների մանրանալուց, ապա ֆոսֆորն այդպիսով մտել և հողի մեջ:

Կալին մյուս հասարակ նյութերի հետ միասին գոյացնում ե կալիոն:

Բույսի մոխրի մեջ բավականաչափ կալիոն կա: Մի քանի հանքեր պարունակում են իրենց մեջ կալի: Նույն գրանիտն ել, վորը ծառայել ե վորպես գլխավոր նյութ հողի առաջանալուն, պարունակում ե կալի:

Հողի արգավանդությունը, պտղավետությունը կախված է ի միջի այլոց նրանից, թե ինչքան շատ և պարունակում ազուր, ֆոսֆոր և կալի, և ինչքան հեշտությամբ այդ նյութերը կարող են ընդունել բույսերը՝ սննդի համար:

## ՊԱՀՊԱՆԻՐ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ

Դիտողությունները ցույց են տալիս, վոր կուլտուրական բույսերն իրենց աճման համար պահանջում են խոշոր քանակությամբ խոնավություն:

Փորձերից պարզվում է, վոր արտից մի փութչոր նյութ, այսինքն՝ հատիկ, հարդ, ծղնոտ, արմատի մնացորդ ստանալու համար, բույսերն իրենց աճելու և հասունանալու համար գործադրում են միջին թվով մոտ 400 փութչ ջուր կամ 530 վերո, հաշվելով ամեն մի վերոն միջին թվով 30 փունտ մաքուր ջուր: Նշանակում է—մի գեսյատինից 200 փութ՝ հացահատիկի և 400 փութ դարմանի լավ բերք ստանալու համար արտի բույսերին հարկավոր ե ընդամենը մոտ 320,000 վերո ջուր: Բայց կարող ենք այդպիսի մեծ քանակությամբ ջուր ստանալ անջրդի, յերաշտի յենթակա վայրերում: Բանից յերեսում ե, վոր կարող ենք:

Գիտնականները գիտել են, յենթակա վայրերում մի տարվա ընթացքում թափված մթնոլորտային տեղումները (անձրես, ձյունը, կարկուտը, ամպը վոր յերաշտի) մի դեսյատինի վրա միջին թվով հավասար ե 330,000 վերոյի: Ինչպես տեսնում ենք, այդ քանակությունը լիովին բավական ե բավարար բերք ստանալու համար: Ուրեմն՝ յերաշտի գլխավոր պատճառը վոչ թե նրանումն ե, վոր տարվա ընթացքում քիչ են թափվում տեղումներ, այլ ամբողջ դիբաղդրյունը նրանում ե, վոր այդ տեղումները յերեմն դասավորվում են անհավասար կերպով: Զրի մեծ քանակությունը, այն ե՝ յերկու յերրորդը (220,000) տեղում բավական է աշնանը յեվ ձմռանը, իսկ ամառը տեղում

ե միայն մի յերրորդը (110,000), այն ինչ մեր անգիտակից գյուղացիներն իրենց ամբողջ հույսերը դնում են ամառվա անձրևների վրա: Միամտորեն կարծում են, վոր վորքան ուժեղ հեղեղ գա; այնքան առաջ բերք կըլինի:

Դառն փորձերը ցույց են տվել վոր ամառվա անձրևները գյուղացու տնտեսության համար միանգամայն վատ ոդնություն են: Ամառվա ջրերի մեծ քանակությունը կորչում և տնտեսության համար: Ամառվա անձրևների ջուրը չի կարող խորը թափացնել հողի մեջ: Հողի ուժեղ տաքանալու չոր քամիների և ողի չորության շնորհիվ, այդ ջուրը համարյա ամբողջովին գոլորշիանում ե ողի մեջ: Ուժեղ, կարճատև հեղեղներն ել համարյա անոգուտ են: Զրի մեծ քանակությունը հոսում է գաշտերից կատաղի վտակներով, առուներով դեպի ձորերը, գետերը, հովիտները, անոգուտ և աննպատակ կորչելով գյուղացիական դաշտերի համար: Ընդհանուր առմամբ բույսերը ոգտվում են ամառվա տեղումներից վոչ ավելի քան 25—30 տոկոսով:

Իսկ ձմեռվա և աշնան տեղումների կորուստն աշվելի քիչ ե լինում: Վերջինս 30 տոկոսից չի ավելանում: Մնացած 70 տոկոսը գյուղացիները կարող են մեծ հաջողությամբ ոգտագործել իրենց տնտեսության համար:

Ուստաստանի մի շարք գյուղատնտեսական փորձնական կայանները հետազոտություններ կատարեցին, թե գարնան սկզբին մի գեսյատին հողը վնրքան ոգտակար ջուր և պարունակվում բույսերի համար: Ցեղաբարգվեցին այսպիսի հետևանքներ.

- 1) Ողեսսայի փորձնական կայան 80,000 վեդրո ջուր
- 2) Պոլտավայի » » 105,000 » »
- 3) Սամարայի » » 93,000 » »
- 4) Սարատովի » » 115,000 » »

Ցեղե հաշվենք ամենաքիչ ջրի պաշար ունեցող Ողեսսայի փորձնական կայանի տվյալները և յենթագըրենք, վոր ամբողջ ամառվա ընթացքում վոչ մի կաթիլ անձրեն չի յեկել սակայն պահպանած ու ամբարած լինենք հողի մեջ յեղած ջուրը, կարող ենք ստանալ մի գեսյատինից 50 փութ հացահատիկ և 100 փութ գարման:

Ցեղ յերաշտի գեմ կռվելուամբողջ անհրարեշտությունը զլիսավորապես մեզ բերում ե այն յեզրակացության, այն համոզմունքին, վոր այդ խոնավությունը պետք ե պահպանել թույլչտար, վոր ողի մեջ գոլորշիանա, մի խոսքով՝ պետք ե տիրել այդ խոնավությանը և կանոնավոր կերպով ոգտագործել նրան տնտեսության մեջ:

Պահպանիր խոնավությունը—ահա միակ կոիվը յերաշտի գեմ:

## ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՒԽՄԸ ՀՈՂԻՑ: ՄԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զուրը մի անգամ մտնելով հողի մեջ յերկար չի կարող մնալ այնտեղ, և այսպես թե այնպես, կամ ըսպառվում ե, կամ դուրս ե գալիս այնտեղից: Խոնավությունը հողում սպառվում է յերեք ճանապարհով.—

- 1) Հոսում ե դեպի ներքեն, ավելի ցած գտնվող խոր շերտերը.
- 2) Վերև բարձրանալում կամ շոգիանալում, և
- 3) հողի վրա աճող, մեծացնող բույսերի արմատների գործադրությամբ:

Սպառման այդ յերեք ճանապարհները հողագործի համար շատ կարևոր նշանակություն ունեն: Խոնավության հոսելը դեպի ներքեւ տեղի յեւ ունենում հողի մասնիկների մեջ յեղած բավականին խոշոր անցքերով: Ինչքան հողն ավելի մեծանատիկ և փուխր լինի, այնքան խոնավությունն արագ կանցնի նրա միջով և կըգնա ներքին շերտերն ու ստորահողը: Յեթե այդ ներքին շերտերը և ստորահողը կազմված են թեթև ավազից կամ ավազառառատ հողից, ապա խոնավությունը հեշտությամբ անցնում է դրանց միջով, և հողը բավական արագ չորանում եւ Յեթե ընդհակառակը՝ ներքին շերտերը և ստորահողը կավային են, իսկ սա կավը իր միջով խոնավություն չի անցկացնում, ապա վերին շերտը հաճախ յերկար ժամանակ չի կարող չորանալ և նրա վրա աշխատելը շատ դժվար և դառնում:

Դրանից վոչ պակաս, թերևս նույնիսկ ավելի մեծ դեր ե կատարում խոնավության սպառման գործը, նրա գոլորշիացումը հողից: Գոլորշիանում և անցնում ողի խոնավությունը, նույնիսկ հողի մեջ խոր անցած և նրա խորին շերտերը գրաված հողերից: Գոլորշիացումը տեղի յեւ ունենում չնորհիվ խոնավության ներքեց վերև բարձրանալուն: Խոնավության բարձրանալն ել ներքեց վերև տեղի յեւ ունենում հողի մասնիկների մեջ յեղած ամենաբարակ մաղի հաստության անցքերով: Հողի այդ նեղ անցքերը կոչվում են մազական խողովակիկներ, իսկ ջրի բարձրանալու այդ յերեւյթը կոչվում է մազականություն: (Մազական խողովակիկների ընդունակությամբ են բացատրվում շատ յերեւյթներ, որինակ՝ ծծողական թղթի թանաք չո-

րացնեալու հատկությունը, շաքարի կտորը մի ծայրը կպցնելով ջրին, իսկույն ամբողջովին թրջվելը. նույնն ե պատահում սպունգի և շատ առարկաների հետ, վորոնց ծակոտիկները մազական խողովակիկների մի ամբողջ ցանց և կազմում): Ինչքան մանր լինեն հողի այդ մասնիկները, ինչքան հողը շատ և փոշիացած և պնդացած լինում՝ այնքան ավելի սոտ են հողի մասնիկներն իրար հետ կպած, այնքան ավելի շատ են այդպիսի հողում մազական անցքերը կամ ջրատար խողովակիկները:

Իսկ սրանց վրայով ջուրը հեշտությամբ բարձրանում և ներքեց վերև, իսկ և իսկ այնպես, ինչպես նավթն ե բարձրանում պատրույզի (փիլթա, փիտիլ) միջով լամպի մեջ; Նավթը բարձրանում և պատրույզի թելիկների շատ մանր անցքերի միջով, իսկ ջուրը հողի մասնիկների մեջ յեղած մազական խողովակիկներով: Ջուրն այդ խողովակիկներով, ինչպես նավթը պատրույզի միջով, հեշտությամբ կարող և բարձրանալ ներքեց մինչև հողի մակերեսը և այդտեղից ել անհետանալ, գոլորշիանալ ողի մեջ: Գոլորշիացած խոնավության փոխարեն բարձրանում և մյուսը և այդպես շարունակվում է մինչև հողի չորանալը: Իսկ այդ չորանալը բոլորովին ցանկալի չեն հողագործի համար, վորովհետեւ բույսերը կարիք ունեն խոնավության: Առանց խոնավության հողում չեն կարող ապրել բակտերիաները (մանրենիկները), իսկ առանց սրանց չի կարող տեղի ունենալ աղբի և բույսահողի քայլայումը. հողում չեն կուտակի, չեն հավաքի անհրաժեշտ սընդդարար նյութեր: Այդպիսով շատ ցամաքած հողը դառնում և վոչ թե միայն չոր, այլև անպատղավետ,

բույսի կյանքի համար անպետք, Հենց նույն դրության մեջ են գտնվում մեզ մոտ ամառը հարսուները, յերբ հողը ցամաքած ե, վորովհետև նրա վրա արածող կենդանիները տրորած, վոտնատակ են արած լինում:

Ի՞նչ պետք ե անի հողագործը, վորպեսզի վերջ տա հողի միջից խոնավության գոլորշիացմանը:

Պետք ե անել նույնը, ինչվոր յեթե ուզում ենք, վոր նավթը չրարձրանա պատրույզի միջով. կտրում ենք պատուոյզը լայնությամբ և թողնում վոր կախված մեա 2—3 թելիկների վրա: Նավթը կըհասնի մինչև կտրած տեղը, իսկ նրանից դենը չե կարող բարձրանալ:

Նույնը կարելի յե անել հողի հետ: Բավական ե, վոր վարենք կամ փուխրացնենք հողը մակերեսից, և խոնավության գոլորշիացումը նրա միջից կըդադարի: Վարելիս հողի գնդերը խառնվում են իրար, և նրանց միջև անցքերն արդեն այնքան փոքր չեն լինի, ինչպես նստած, պինդ հողինը:

Դրանք կըլինեն վոչ թե մազական խողովակներ, այլ բավական խոշոր անցքեր, վորի միջով ջուրը կառող ե միայն ներքեւ իջնել, իսկ վերև բարձրանալ չի կարող: Վարելիս և փուխրացնելիս բոլոր մազական խողովակները կըկարվեն, վորոշ խորության վրա կըքանդվեն, կըվոչնչացվեն հողի մակերեսութից, ջուրը կարող կըլինի բարձրանալ մինչև հողի կտրած տեղը, իսկ նրանից դենը մինչև մակերեսույթին հասնել չի կարող, նրա գոլորշիացումը հողից կըվերջանա: Խոնավությունը, վորը մտել ե հողի մեջ անձրեներից, նրա մեջ ել կըպահվի:

Վերջապես, յերբորդ ճանապարհը, վորով հողի խոշնավությունն անհետանում ե, դա հանդիսանում է բույսերի կողմէց ջրի գործադրությունը:

Բույսերը հողից հավաքում և տերեների միջով շոգիացնում են մեծ քանակությամբ ջուր, վորն արտահայտում ե 100 հաղարավոր փթերով:

Յեթե մեր ցանած բույսերը վերցնում են հողից այդ ջուրը, հենց իրոք, այդ նույնն ե, ինչ վոր հարկավոր ե. իսկ յեթե գիծ խոտերը, քոլերն են անում այդ, ուրեմն՝ շատ վատ ե: Սակայն մեզ մոտ պատահում ե, վոր, հողագործի անփիթության շնորհիվ, նախքան կուլտուրական բույսերի հողի խոնավությունից ոգտվելը, այդ խոնավությունն արդեն վորոշ չափով պարզում, սպառում են անկոչ հյուրերը— գիծ բույսերը, վորոնք հարսուից հետո բույսի զարգացման ժամանակ խլում են մեր վորդեգըրերից և ջուրը ու սննդարար նյութերը. խեղդում, ընկճեցնում են նրանց. խլում են նրանցից լույսը և ողը, իսկ մենք շարունակ լուսմ ենք: Հաճախ ցանում ենք այնպիսի հատիկներ, վորոնց մեջ ավելի շատ աղբի սերմեր կան, քան թե հացահատիկ: Ցանում ենք քարի պես պնդացած, բոլորովին անկենդան, մեռած, ցամաքած հողում: Զգիտենք, ի՞նչ ենք աճեցնում—հաց, թե գիծ խոտեր: Յեվ գեռ մենք մտածում ենք, վոր վոչ թե մենք ենք մեղավոր, այլ հողը, վորը մեր ժըրածան աշխատանքից հետո բան չի տալիս:

Մեր հողագործները շատ գիտակից ու հոգատար պիտի լինեն դեպի իրենց կերակրող մայր հողը: Այս հանգամանքն ամեն մի հողագործ շատ լավ պիտի յուրացնի:

Խ՞ԶՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՄԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈՐՁԵՐԸ

Փորձ կըուելով, վերցնում են յերկու բաժակ. լըցնում են նրանց մեջ հողի միատեսակ նմուշներ, գնում են կշիռի վրա, — կշռում վոր հավասար լինեն. Այդ բաժակի հողը տրորում, սեղմում են, իսկ ձախ բաժակը մնում է փուխրու հետո կշռությունը դնում են արեգակի դեմ: Կարճ ժամանակից հետո պնդացած հողով կշռությունը բարձրանում է: Տրորած հողով բաժակը թիթեացավ նրանից, վորովհետև պնդացած հողի միջից խոնավությունը շատ արագ զոլորշիացավ, իսկ փուխր հողով բաժակի մեջ բավականաչափ խոնավություն մնաց:

Փորձ ավագով յեվ կավով.—Խոշոր, մանր ավաղը և մի կառոր կավը դնում են ջրի մեջ: Խոշոր ավաղը միայն տակից և թրջվում, մանր ավաղի միջով ջուրը բարձրանում է բավական բարձր, իսկ կավն ամրոշովին թրջվում է:

Ուրիմն՝ վորքան ամուր և հողը, վորքան նեղ լինեն հողի մասնիկների միջի անցքերը, այնքան ջուրը վերև կըրարձրանա, ջուրը մակերեսությունը, յերեսը գուրս կըրա և, ինարկե, իսկույն ևեթ կըդուրշիանա, իսկ ներքեկց, ցածրաքած, չորացած ջրի տեղը, նորից կըրարձրանան ջրի նոր բաժիններ: Այսպիսով ամեն մի պնդացած հող կարող է չորանալ մինչև տակը:

Փորձ ապակու հետ.—Յերկու կտոր ապակի կտպում են թելով: Նրանց մեջ ամեն մի անկյունում դընելով սեկական լուցկի: Ապա այդ դնում են ջրի մեջ: Յեթե հանենք մեկ ծայրից մեկական լուցկի և նորից

ձգենք ապակու թելով, ապա ջուրը կըրարձրանա միշապատի միացած մասի մեջ գոյացնելով շեղ, թեք գիծ: Ամենածայրի ջուրը բարձրանում է մինչև վերելը. վորքան միջապատերը լայնանում են, բարձրացած ջրի մակերեսությունը ցածրանում է: Հետևապես, վորքան նեղ լինեն միջապատի անցքերը, այնքան ջուրը կըրարձրանա վերել: Շատ նեղ անցքերով ջուրն ընդունակ է բարձրանալ ապակու մեջ մինչև ամենավերելի ծայրը:

Փորձ բարակ խողովակիկներով.—Ամենահետաքրքիւրը մի շարք ապակյա բարակ խողովակիկներով կատարված փորձն ե, նման այնպիսիներին, ինչպիսիք գործադրվում ե ջերմաչափի համար—ըստ վորում զրանցից ամենաբարակը պետք ե ունենա մազից վոչ հաստ անցք: Դժբաղդաբար այդպիսի խողովակները հաղվագյուտ են: Անցնենք մեր ձեռք բերած խողովակների փորձին: Լայն խողովակի միջն ջուրը չի շարժվի, իսկ բարակների մեջ ինքնառուսմամբ բարձրանում է վերև. վորքան բարակ լինի խողովակը, այնքան ափելի կըրարձրանա ջուրը: Հետևաբար, ջուրն ընդունակ է մազանման խողովակներով բարձրանալու:

Խ՞նչ են ասում այս փորձերը.—այն, վոր պնդացած հողերում, վորոնի ունեն առ մանր մասնիկներ յեվ նեղ անցքեր, ջուրն ավելի նեւըուրյամբ յեվ առ ե վերեվ բարձրանում, բեյնի մի քիչ դանդաղ, բան փուխր հողերինը:

Ուրիմն՝ պինդ, տրուված, ամրացած հողերն ավելի ուժեղ յեվ խոր են չօրանում, բան փուխր, Պինդ հողերի ջուրը ուու և գոլորշիանում: Ընդհակառակը՝ փուխր, փափկացրած հողի մասնիկների տարածությունը լայն է յեվ մեծ անցքերն ել ավելի առ են լինում, վորոնցով ջուրը

չի կարողանում հետուրյամբ յել մեծ շափով բարձրանալ յել նոդի խոնավուրյան գոլործիանալը մասամբ կանգ է առնվում:

Հողագործի համար այդ բոլորից հետո շատ պարզ պիտի լինի, վոր նա հողի կերին շերտը միշտ փուխը դրությամբ պետք է պահի: Փիրեցը ած վերին շերտը կը կանգնեցնի ջրի վերև բարձրանալը և այդպիսով կը պահասկցնի հողի յերեսի խոնավության գոլորշեցումը:

Ով հոդի խոնավուրյանը կրպահպանի, նա կը սանա բերք նույնիսկ յերած ժամանակի:

## ԽԾՉ Ե «ՄՇԱԿԵԼԻ» ՀՅՊ.Բ.

Զուր չե ժողովուրդը հողին «կերակրող մայր» առում: Հողը և հատկապես հողի վերին շերտը, վորը կարող ե արտադրել կուլտուրական թանկագին բույսեր, ուր պահվում են և տարածվում բույսերի արձակած արմատները՝ իսկապես վոր կերակրող ե և սնուցանող:

Նա կերակրում ե բույսերին և սրանց կյանքը կախված է հողից: Կենդանիների կյանքն իր հերթին կախված ե բույսերից, քանի վոր բույսերը սնունդ են տալիս կենդանիներին: Սակայն առանց բույսերի և կենդանիների չե կարող ապրել և մարդը:

Հարկավոր ե մշակել հրդը: Այս ոգտակար աշխատանքը կատարում ե գյուղական տնտեսը, յերկրագործը, բանջարաբույժը, ևալյն: Հողագործը, մայր հողի առաջարկում ուժիամբ միավորը իր աշխատանքով իր աշխատանքը, կերակրում ե և հագեցնում վոչ միայն իրեն և ընտանիքին, այլ և ամբողջ մարդկությունը: Այդ իսկ պատ-

ճառով ել վար անողին, հողագործին՝ մարդկության կերակրող են անվանում: Զուր չե, վոր մի մեծ գրող ասել ե, թե գյուղատնտեսությունը, գյուղական աշխատանքը մարդկանց բոլոր զբաղմունքներից, ամենանըպատափոր, ամենասոգտակար և ամենաազնիվ աշխատանքն է: Յեթե այդ այդպես ե, ել ինչպես ամեն մեկը, և մանավանդ հողագործը, չիմանա, չճանաչե իրեն կերակրող մայր հողին, թե ինչ հատկություն ունի նա, ի՞նչ բաղադրություններից, խառնուրդից ե կազմված հողը, ի՞նչպես ե նա կերակրում բույսերին, ևալյն, ևալյն: Հողի վերին մասը կամ վերնաշերտը, վոր յենթարկվում ե մշակման և վորի վրա բոնում են, աճում, բարգավաճում, ամրանում և զորանում են դաշտային բույսերի, մարգախոտերի, ծառերի և ամեն տեսակ բույսերի արմատները՝ կոչվում ե մըշակելի հող: Յերկրագործության մեջ ասում են՝ վարելանող: Ուրեմն, մշակելի հողից ե կախված բոլոր բույսերի, նրանց հետ միասին և հացահատիկների աճեցողությունը:

Հողը մի այնպիսի միջավայր է, վորտեղ զարմանալի կերպով միաձուլված են, իրար են խառնված հանքային և որգանական նյութերը: Այդպես ել պիտի լիներ, վորովհետեւ հողը վոչ միայն կյանքի կրող, պահող ու պահպանողն է, այլ և կյանքի աղբյուրների մի շտեմարան, ամբար ե, Հողի խորքից, նրա ծոցից են կյանք առնում, ծլում ու աճում ազնիվ ու լավ տեսակի բույսերը:

Հողի խորքերից ե, վոր ստանում ենք զանազան տեսակի թանկագին մետաղներ՝ վոսկի, արծաթ, յերկաթ, պղինձ ևալյն, վորոնք դարձյալ մեր կյանքը

պահպանելու տեսակետից շատ մեծ նշանակություն ունեն: Հողի խորքերում և աճում, զարգանում ստորին միկրոբային բուսականությունը, վորն ավելի ամուր և կապված և ավելի սերտորեն և նյուսվում անորգանական կյանքի հետ:

Ամենքն ել ի հարկե, գիտեն և շարունակ տեսնում են այն մշակելի հողը, բայց շատ շատերը չգիտեն, թե ինչ կազմություն ունի մշակելի հողը, ինչից և բաղկացած, ինչպես և կերակրում բույսերին և վերջապես ինչպիսի մշակելի հողեր կան: Մինչդեռ մշակելի հողի կազմը, նրա բաղադրիչ մասերի գիտենալը անհրաժեշտ է յերկրագործին, բանջարաբույծին, և այլն:

Ինչպես անհնարին և բժշկին հաջողությամբ բժշկել մարդուն առանց գիտնալու, ձանաչելու և ուսումնասիրելու մանրամասնորին մարդու կյանքը, նրա մարմնի կազմն ու հատկությունները, այնպես ել չի կարելի մշակել, պարարտացնել և խնամել դաշտը, հողը և նրանից առատ բերք-արդյունք սպասել, յեթե չեն ձանաչում մշակելի հողի պահանջները, կազմը և հատկությունները:

Մշակելի հողը կամ մշակվող հողի վերին շերտը իր ավելի մուգ գույնով սովորաբար տարբերվում է հողի ներքին, խորքի շերտերից: Այդպիսի մշակելի հողաշերտը զանազան տեղերում տարբեր հաստություն և ունենում է Յերբեմն մի քանի վերշոկ խորություն և ունենում և յերբեմն ել այս խորությունը հասնում է մեկ արշինի կամ արշինից ավելի:

Վերնաշերտի տակ գտնվում է մի ուրիշ շերտ, վորը ներքնաւերտ, լենքահող, սուրահող կամ «մեռյալ» հող և կոչվում: Մշակելի հողն առաջանում է ստորա-

հողից ողի, ջրի (խոնավության) և բուսականության ազդեցության հետևանքով: Այդ գործում դեր են կատարում նաև կենդանիները, վորոնք փորփրում են հողը և հողի մասնիկները շարունակ այս ու այն կողմն են փոխադրում: Մշակելի հողը, վերնաշերտը սովորաբար անմիջապես չի առաջ գալիս; այլ հետզհետե՛ս ոտորակից: Յերբեմն մշակելի հողի և ստորահողի սահմանը լինում է խիստ նկատելի վորոշ, բայց մեծ մասմբ մշակելի հողի առաջ գալը, կատարվում է աստիճանաբար, թերևս հազիվ նկատելի. ուրեմն՝ մշակելի հողի և ստորահողի մեջ և ընկնում մի այլ շերտ, այնպես վոր շատ դժվար է լինում ասել՝ վորտեղ և վերջանում մշակելի հողը և վորտեղից և սկըսվում ստորահողը: Այդ և պատճառը, վոր ընդունում են գոյությունը նաև միջանկյալ, անցողական հողաշերտի, վորը բանում և մշակելի հողի և ստորահողի միջին շրջանը և վորն ավելի բաց գույն ունի վերնաշերտից, բայց ներքնաշերտից ավելի յե մուգ:

Ինչպես իմացանք, մշակելի հողի շերտի տակ պարունակվում է մի այլ անմշակ շերտ, վորի մեջ ևս թափանցում են ծառերի և մի քանի բույսերի արմատները: Այս վերջինը մի տեսակ անցողական շերտի հետում և ավելի խոր ընկած շերտը, վորը, ինչպես ասացինք, ստորահող և կոչվում կամ մայր շերտ: Այդ հողը մայր շերտ և կոչվում նրա համար, վոր շատ հին ժամանակներում հենց այդ շերտիցն է գոյացել, առաջացել մշակելի վարելահողը, վորը մինչեւ այժմ վարում, մշակում ենք: Յենթադրում են, վոր առաջներում չի յեղել մշակելի վարելահողի մշակելի շերտը, վոր այժմ մենք տեսնում ենք, այլ յեղել և միայն մի հարազատ զանգված,

Վորը սակայն ժամանակի ընթացքում ցրտի, շոգու, անձրեների և ողի ազդեցությունից քայքայվել փըշրվել և հող և դարձել

Յեթե մոտիկից ուշադիր դիտելու լինենք, կըտեսնենք, վոր մեծ մասամբ վերնաշերտն իր բնույթով շատ և մոտիկ ներքնաշերտին, բայց առաջինի մեջ են գըտնվում մեծ քանակությամբ այն բույսերի արմատները, վորոնք աճում են հողի վերնաշերտում։ Այդ արմատները, հետզհետե մեռնելով, փթում են և տալիս մուգ բուսահող, վորը ներկում ե վերնաշերտը մուգ գույնով և այդպիսով խիստ բաժանում նրան ներքնաշերտից—ստորահողից, վորտեղ շատ քիչ են արմատները և բնական ե, վոր դրա համար քիչ ե նաև բուսահողը վորը կոչվում ե ոտար բառով «հումուս»։

Բուսահողը գոյանում ե յերկար տարիների ընթացքում մեռած բույսերի և կենդանիների մնացորդների հետզհետե փթելուց և քայքայումից։

Մշակելի հողը ինքն անմիջապես, առանց ուրիշի ոգնության, իր ազդեցությունը դնում ե բույսերի կյանքի վրա։ Բույսերը մեծ մասամբ մշակելի հողից են ստանում ջուր և ուրիշ սննդարար նյութեր։ Միայն մի քանի բույսեր, մանավանդ ծառերը, վերնաշերտից ավելի խորն են տանում իրենց արմատները, և գրավելով ստրօհանողը, սննդն են քաղում նաև ներքնաշերտից, վորն այսպիսով մի վորոշ չափով մասնակից և լինում բուլսերն աճեցնելու գործում։ Յեկայսպես, հողի այն շերտը, վորը մշակելի հողից ավելի խորն է գըտնվում, այլև չի կարող մեծ ազդեցություն, մասնակցություն ունենալ բույսերի աճեցողության գործում։ Սակայն, չնայելով դրան, հողագործը կամ գյուղա-

տընտեսը առհասսարակ ուշագրություն պետք ե դարձնեն և ուսումնասիրեն ներքնաշերտ հողը նույնպես։ Այդ ներքնաշերտի մեջ ե ամբարվում վերնաշերտից ավելացած ջուրը, սամատիկ անձրեներից և մանավանդ ձյունը հաշվելուց հետո։ Հենց այդ ներքնաշերտից ե ջուր ստանում վերնաշերտը, յերբ վերջինս իր ջրային պաշարը սպառած, վերջացած ե լինում։ Ստորահողը հաճախ ծառայում ե բույսերի համար վորպես սննդարար նյութերի աղբյուր։

Այդ խկանքառով բույսերի կյանքը կախված ե մասամբ և այդ խոր շերտի հատկությունից, թեև ներքնաշերտն իր վորեա ազդեցությունը բույսերի վըրա կատարում և գլավորապես հենց վերնաշերտի միջոցով։ Բայց և այնպես, վորքան քիչ ե մշակելի հողի խորությունը, այնքան նա մեծ ազդեցություն կունենա ստորահողի կուլտուրական բույսերի աճեցման և զարգացման վրա։

## ՀՈՂԻ ՎԵՐՆԱՇԵՐՏԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Դաշտային բույսեր ցանելուց առաջ հողը հարկավոր ե մշակել։ Սրա գլխավոր նպատակն ե վերացընել այն բուլը անբարեհաջող պայմանները, վորոնք արգելվ են հանդիսանում բույսերի աճեցման և զարգացման։ Ավելի նեղ մտքով՝ հողը մշակում են, վորպեսպիս 1) նա այն աստիճան փափկանա, վոր ողը և խոնսավությունը նրա մեջ ազատ մուտք ունենան։ Նրա մեջ գտնված ավելորդ խոնսավությունը կարողանա հեշտությամբ գոլորշիանալ և հողն ավելի ուժեղ տաքանա։ 2) վորպեսպիս հողում գտնված որգանական մար-

մինսերը հավասարապես խառնվեն հողի մասնիկների հետ. 3) վորպեսզի որդանական մարմիններն, ըստ կարելույն, արագ փթեն, տալով ամենասննդարար նյութեր. բացի դրանից հողի մշակությունն ուժեղ չափով նպաստում ե ողի և քամու ազդեցությամբ անորդանական մարմինների քայլքայմանը պետք ե սընդդարար նյութերի քանակությունը վերնաշերտի մեջ ավելանառում ե ի հաշիվ նրա մեջ գտնվող անպետք նյութերի:

Հողի մշակություն ասելով պետք ե հասկանալ յերկու աշխատանք՝ վարել և տափանել. Վարելը կայանում ե նրանում, վոր արորով կամ գութանով կողքերից և տակից կտրած հողային շերտը, բաժանվելով գետնից, փշում, մանրանում ու տակն ու վրա յելինում. Գյուղացու գլխավոր հոգսն այն պետք ելինի, վոր կտրված ու տակն ու վրա յեղած շերտը վորքան կարելի յել յերկար ժամանակ յենթակա լինի ողի և մթսոլորտային խոնավության (ցողի, անձրեի, ևալլն) ազդեցության և վոր բուսական մնացորդները՝ խոտը, արմատները, խողան, ևալլն կարողանան լավ փթել. Դրա համար հարկավոր ե աշխատել վորպեսզի հերկի և ցանքսի մեջ յեղած ժամանակամիջոցը, ըստ կարելույն, յերկար լինի. Սակայն չպետք ե տարվել չափազանց վաղ հերկով:

Հերկը չի կարելի սկսել ջրերի գարնանային վարաւումն անցնելուց անմիջապես հետո:

Այն գյուղացիները, վորոնք այդպես կըվարվեն, ավելի վնաս բերած կըլինեն, քան ոգուտ:

Պետք ե որենք դարձնել՝ նախ քան հողի չորանաւը, վոչ մի դաշտային աշխատանք չձեռնարկել.

Զավագանց խոնավ հողը մացուցիկ ելինում և հետո այնպես ե կոշտանում ու պնդանում, վոր նրա ապագա փափկացումը շատ դժվար ե դառնում. Յեթե գութանի առը պառկում ե փոկի նման, առանց ջարդվելու և կոշտերի բաժանվելու՝ նշանակում ե հողը շատ խոնավ ե և վարը պետք ե հետաձգել. Ակոսի լայնությունը (2—4 վերշոկ) և առի խորությունը (2<sup>1/2</sup>—8) կախված ե այն բույսերի հատկությունից, վորոնք ցանվելու յեն վարած հողում:

Վորքան հաստ ե վերնաշերտը, այնքան խորը պետք վարել նրան: Սակայն պետք ե զգույշանալ վերնաշերտի տակ գտնված խավը (մեռած հողը) յերես հանելուց, վրովհետև կավը և ավազը, վերնաշերտի հետ խառնելով, ընդունակ են հունձը պակասացնել: Յեթե վերնաշերտը շատ բարակ ե, յերես ե, ազա վոչ մի դեպքում չի կարելի նրան խորը վարել: Վերնաշերտը խորացնել կարելի յել աստիճանաբար՝ ամեն տարի, մեռած հողի շերտը կես վերշոկի չափ վարելով, այն ել միայն այն ժամանակ, յերբ հողը պարարտացվում ե աղբով: Աղբի և ողի ազդեցության տակ վերնաշերտի տակի խավը վերամշակվում ե և զառնում բերրի: Վարելաշերտի խորության և նրանում մշակվող բույսերի հատկության փոխադարձ կապակցությունը պարզ յերեսում ե հետեւյալից:

1) Յերե բույսերի մշակության նպատակն ե հատիկներ սանալը, ապա խոր վարը միշտ հաջող հետեւյանքի չի հասցնում, քանի վոր նա բույսերի աճեցման, զարգացման ժամանակամիջոցը յերկարացնում ե, ուժ տալով ցողունների խիս զարգանալուն, իսկ հատիկների հասնելը գանդաղում ե, բացի դրանից հա-

ցահատիկները, վորոնց արմատները հողի մեջ շատ խոր չեն նստած՝ խոր վարած հողում ավելի յեն տուժում յերաշտից, քան յերես վարած դաշտերում։ Սրանից հետեւում ե այն, վոր հացահատիկների համար վարը պետք ե լինի վոչ խորը։

2. Ընդհակառակը, յերե բույսերի մշակուրյան նըպատակն ե մեծ բանակուրյամբ կանաչ նյութ՝ ցողուններ ստանալը, ինչպես որինակ՝ կենդանիների սննդի համար խոտ, նույնպես և արմատապտուզներ, ապա այս դեպքում շատ ցանկալի յե խոր վարը, վորովհետև յերես վարած հողում արմատները ներքենի պինդ մնացած կավի կողմից խիստ դիմադրության կարող են հանդիպել։

## Ի՞՞Զ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՑԵ ՀԱՍՑՆՈՒՄ ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բացի վերնաշերտի Փիզիքական հատկությունը լավացնելուց, հողի մշակությունը տալիս ե նաև հետեւյալ ոգուտները։—

1. Վերնաշերտի մասնիկները խառնվում են թե միջյանց և թե հողին տփած պարարտացուցիչ նյութերի հետ։ Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի վոր բույսերի կանոնավոր զարգացման համար անհրաժեշտ է, վոր վարելաշերտը լինի միատեսակ և վորպեսզի նա իր ամբողջ մասսայի մեջ պարունակի սննդարար նյութեր։ 2. Վերնաշերտը մաքրվում ե զանազան գիծ խոտերից, քոլերից (տատասկ, բոշխ, ևայլն), քանի վոր վերջններս վնասակար են վոչ միայն նըանով, վոր խլում են մշակվող կուլտուրական բույսերի տեսը և ստվեր են ձգում նըանց վրա, այլև նըանով, վոր

հողից ծծում են սննդարար նյութեր, վորոնք կարող ելին ծառայել մշակվող բույսերին վորպես սննդնով։

3. Մշակության ոգնությամբ հարթփում ե հողի մակերեսույթը և դրանով նպաստում տնտեսական բույսերի մրակերպ աճելուն։ 4. Հողով ծածկում են բույսերի սերմերը կամ նըանց բազմանալուն ծառայող այլ մասերը։

## ՎԵՐՆԱՇԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆՁԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ

Վերև ասածներից գժվար չե յեզրակացնել, վոր այն հողերը կը տան առատ բերք, վորոնք պարունակում են իրենց մեջ բույսերի կյանքի համար անհրաժեշտ նյութերի ամենամեծ քանակությունը։ Բացի դըրանից առատ հունձ ստանալու համար կարենը և նաև վոր վերնաշերտն ունենա Փիզիքական այնպիսի հատկություններ, վորոնք բույսի աճման ամբողջ ընթացքում նպաստեն նըանց համար գժվար յուրացվող սննդարար նյութերի գյուրին գըրության փոխելուն։ Այս բոլորի համար անհրաժեշտ է, վոր հողը չպարունակի իր մեջ խոնավության չափազանց մեծ կամ չափազանց փոքր քանակությունն, վորպեսզի ողը կարողանա մուտք գործել նըա մեջ և վորպեսզի նա ունենա բավականին տաքություն։ Նման պայմաններում միայն վերնաշերտը կարող է հաջող կերպով քայլեայվել-քամահարվել (յենթարկվել ողի և քամու աղղեցության) հետեւապես և ավելացնել իր մեջ բույսերի կողմից հեշտ յուրացվող

սննդարար նյութերի քանակությունը: Մշակությունը իսկ և իսկ հնարավորություն և տալիս մեղ վերնաշերտի ֆիզիքական հատկությունները բարելավել և դրանով, հետևաբար, նպաստել նրա արգավանդության բարձրացմանը. ահա թե ինչու գյուղացուն հարկավոր եւ խտացած և ամրացած հողերը—վորոնք տուժում են անչափ խոնավությունից—փափկացնել և չորացնել: Հողի մշակության անհրաժեշտությունն ակներև դարձնող պատճառներից մենք այստեղ մեջ կըքերենք նաև հետևյալը՝ զանազան տնտեսական բույսերի արմատներն ունենում են հողի մեջ ինչպես տարբեր խորություն, նույնպես և տարբեր հաստատություն. այսպես որինակ՝ հաճարի, ցորենի, վարսակի և մի քանի այլ տնտեսական բույսերի արմատների գլխավոր մասը թաղվում է հողի մեջ 3—4 վերշոկ խորությամբ: Բացի զըրանից, այս բույսերը լինում են ընդհանրապես շատ բարակ, այդ պատճառով ել նրանք համեմատաբար ավելի հեշտ են աճում և մեծանում հողում: Ճակնդեղի (տակ), գաղարի և մի քանի այլ բույսերի արմատները վերոհիշյալների միայնգամայն հակապատկերն են ներկայացնում: Սրանց արմատների գլխավոր զանգվածը 7—8 վերշոկաչափ մտնում են հողի մեջ և դրա հետ միասին արմատները հասնում են զգալի հաստության: Այս պատճառով հացաբույսերի ցանքսի համար նշանակված դաշտերի վարը պետք է 3—4 վերշոկ խորություն ունենա, ընդհակառակը, հաստ արմատներ ունեցող և նրանց գետնի մեջ ափելի խորը տարածող բույսերի (տակ, գաղար, ևալին) ցանքսի համար նշանակված դաշտերը պետք է վարել մոտ 7 վերշոկ խորությամբ: Յեթե այս պայմանը չկատարվի, այն ժա-

մանակ այդ բույսերի արմատները կըսկսեն վատ զարգանալ ըստ խորության և լայնության, վոր, անկասկած ե, արդյունքի վրա շատ վատ ազդեցություն կունենա:

Հողի մշակությունը կարող է լինել հաջող, այսինքն՝ լավ, և անհաջող: Այս տարբերությունը յերեմն այն աստիճանի մեծ ելինում, վոր միենալոյն հողամասի տված հունձը բոլորովին տարբեր և լինում հենց միայն մշակման մեջ յեղած զանազանության շնորհիվ. նույնիսկ հողի պարարտացումը կարող է շատ աննշան ոգուտ բերել, յեթե հողը պարտարացման հետ միասին չի մշակվում այնպես, ինչպես հարկն եւ վերոհիշյալի համաձայն՝ մենք հողը պետք է համարենք լավ մշակված, յեթե կատարեն հետևյալ պայմանները՝ 1) յեթե դաշտի վայրի բույսերը արմատապես միանգամայն վոչնչացված են այնպես, վոր այդ դաշտում նրանց շուտով բուսներու յերկյուղ չկա: 2) յերբ հողը փափկացրած է այն աստիճան, վոր նույնիսկ հորդառատ անձրեներից հետո նրա վրա չի կարող ճանալ ջուրը և ողն անարգել կերպով կարող է մտնել նրա մեջ. սակայն այս գեղքում անհրաժեշտ է, վոր հողը հնարավորություն ունենա յերաշտի ժամանակ ներքեւ չուրը բարձրացնել մինչև վերնաշերտը: Վերջնականապես հողիայդ գրությունը պետք է լինի ըստ կարելույն յերկարատե, վորպեսզի անձրեները չկարողանան վոչնչացնել նրան կարճ ժամանակամիջոցում: 3) յերբ բուսական մնացորդները և աղբը, յեթե հողը պարարտացրած է, կարողացել են մինչև ցանքսի ժամանակը, հնարավոր յեղածին չափ, լավ փթել: Ամենից լավն է, յեթե նրանք այն-

պես են փթել, վոր անհնար և այլես նըանց հետքը գտնել հողի մեջ։ Սրա հետ միասին վերնաշերտի բոլոր մասերը պետք եւ լավ խառնված լինեն, վորպեսզի բուսական սնունդը բոլոր վերնաշերտերի մեջ համաշխափ բաժանվի։

## ԲՈՒՑՄԱՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԻ ՄԱՍԵՐԸ

Պարարտացնել՝ կընշանակի հողին վերադարձնել նորից այն բաղկացուցիչ մասերը, վորոնց բույսերը խլել են հողից։ Վորպեսզի պարարտացման ելությունը կարողանանք հասկանալ, անհրաժեշտ եւ բույսերի բաղկացուցիչ մտանիկների հետ առանձին-առանձին ծանոթանալ։

Այն մի բույս բաղկացած ե՞ւ ջրային և չոր մասերից։ Զոր մասերը բաղկացած են՝ այրվող կամ որգանական, և վոչ այրվող կամ անորգանական (հանքային, մոխրից) նյութերից։ Որգանական և անորգանական բույսի բաղկացուցիչ մասն այրելիս հեշտությամբ իրարից բաժանվում են։ Որգանական բաղկացուցիչ մասերն ածուխ են դառնում, լուծվում և շոգիանում, այնինչ անորգանական մասերը մնում են և այրվելուց հետո դառնում են մոխրի։ Այրվելիս անհետանում են՝ ածխածինը, ջրածինը, թթվածինը և բորակածինը, իսկ մոխրը կազմում ե՝ կալի, կիր, մագնեսիա, յերկաթ, ֆոսֆոր, քլոր, ծծումբ և նատրոն։

Այդ նյութերը կազմում են բույսերի սնունդը, վորոնք մտնում են մոխրի մեջ զանազան աղերի ձևով։

Ուրեմն՝ մենք կարող ենք բույսի բաղկացուցիչ մասերը հետեւյալ կերպով ներկայացնել՝

|           | Բ Ո Ւ Յ Ո | Զոր        |
|-----------|-----------|------------|
| Ջրային    |           | Վոր        |
| Ջրվող     |           | Վոչ այրվող |
| Ածխածին   |           | Կալի       |
| Զրածին    |           | Կիր        |
| Բորակածին |           | Մագնեսիա   |
| Թթվածին   |           | Յերկաթ     |
|           |           | Ֆոսֆոր     |
|           |           | Քլոր       |
|           |           | Ծծումբ     |
|           |           | Նատրոն     |

## ՀՅՈՒ ՊԱՐԱՏԱՑՈՒՄԸ

Բույսի կյանքը կախված է այն նյութերից, վոր նա ձեռք եւ բերում հողի և ողի միջից։ Քիմիական տարրալուծման յենթարկվելով բույսը, մենք կընկատենք, վոր նա կաղմված է զանազան որգանական մարմիններից, վորոնց մեջ տեղ են զրավում սպիտակուցային, ճարպային մասեր՝ ոսլան, շաքարը, ևայլն։ Շարունակելով մեր քննությունները մենք հետագայում կընկատենք, վոր այդ բոլոր բաղադրիչ մասերը բաղկացած են՝ ածխածնից, ջրածնից, թթվածնից և բորակածնից։ Բացի հիշատակված 4 եկամենաներից-տարրերից, վորոնք և կազմում են բուսականության մեծ մասի եյությունը, պատահում են նաև հանքային նյութեր, վորոնցից գլխավորներն են՝ ֆոսֆորը, կալին, կիրը, յերկաթը, նատրիոնը, քլորը, ծծումբը, մագնեսիան։ Այս բոլոր նյութերն անհրաժեշտ են բուսական կյանքի համար, և, յեթե սրանցից վորնե մեկը պակասի

բույսի մեջ, վերջինս անկարող կըլինի շարունակել եր գոյությունը։ Այս ելեմենտաները, ի հարկե, բույսերի կողմից չեն կլանվում անարատ, մաքուր դրությամբ, այլ ոգտվում են մշտապես միացումով՝ ածխածինը միացած թթվածնի հետ, - ածխաթթվի, ֆոսֆորը ֆոսֆորաթթվուտար, ևայլն Հանքային նյութերի մեծամասնությունը հողի մեջ գտնվում ե այնպիսի առատությամբ, վոր, բացառությամբ ֆոսֆորից, կալի- ից և կրից, կարիք չի զգացվում հոգալու նրանց կըլ- ին հողին վերադարձնելու Որգանական մասսա կազ- մող ելեմենտներից մեզ համար միակ անհրաժեշտու- թյունն ե համարվում բորակածինը։ Իսկ ածխածինն ածխաթթվուտային դրությամբ այնքան շատ ե տա- րածված մեր մթնոլորտային ոգում, վոր միշտ բավա- կանեցնում ե հարկավոր չափով մեր ամենաճիխ բու- սական կյանքը պահպանելու համար։

Բորակածին-ազոս։ Զնայած այն հանգաման- քին, վոր ազոտը կազմում ե մթնոլորտի  $\frac{4}{5}$  մասը, այնուածենայնիվ նա գյուղացու համար ամենաանհրաժեշտ և թանկագին պարարտանյութն ե։ Բույսերը կլանում են ազոտին ազոտա-թթվուտային դրությամբ, վորն իրենից միանգամայն հեղուկ ե ներկայացնում և վորը կազմված ե 2 մաս ազոտից 5 մաս թթվածնից և ջրից։ Ազոտային թթվուտը միա- նալով կալիի կամ նատրիոնի հետ գոյացնում ե կալի և նատրիոնի բորակ։ Վաճառքի հանած չիլիական բո- րակը պարունակում ե իր մեջ մոտ  $18^{\circ}/_0$  ազոտ և ներ- կայացնում է իրենց շատ արժեքավոր պարարտանյութ։ Բորակը գործադրվում ե համարյա բոլոր բույսերի համար, բայց նրա չափությունը կազմում է մոտավորապես 10% ։

վոչ միայն առաջ կըրերի տերեալատ սաղարթ, վոր- պիսի հանգամանքը վատ կանդրադառնա հատիկ- ների և պտուղների վրա և կըհարկադրի հացարույնե- րի պառկելուն—շուռ զալուն, այլև կըդանդաղեցնի վերջիններին հասունացումը։ Բորակի բնական քանա- կություն համարվում ե 14—16 փութը մի դեսյատի- նին, վորը մինչ հողին հանձնելը՝ մանրացնում են և շաղ են տալիս զաշտի վրա ու ապա շատ յերես հերկում են։ Մարգագետինների, կաղամբի և աշնան զաշտերը պարատացնելու համար բորակը գործադրվում ե վոր- պես մակերեսույթային պարարտացումն։ Բորակը շատ հեշտ կերպով լուծվում ե ջրի մեջ, հողը չի կլանում նրան, վողողվում ե և կարող է կորչել ապարդյուն, յե- թե գործադրած ե աշնանը, խոր հերկված ե, կամ թե մուծված ե հողի մեջ ցանքից քիչ առաջ։

Կանաչ պարարտացում։ Դիտող, ուշագիր գյու- ղացիները վազուց արդեն նկատել են, վոր յերե- նուկը, առվույտը և ուրիշ թիթեանածաղիկներ (լորի- ացեղ բույսեր) վոչ միայն առանց վորեն պարարտաց- ման շատ լույս զարգանում, աճում են, այլև հողը հարըս- տացնում, վորակավորում են ազոտային նյութերով, վորը պարզապես հաստատել են այդ հիշատակված բույսերից հետո հետեւ բերքահավաքները։ Այս պա- րագան յիրկար ժամանակ ընդունվում ե գիտական աշխարհի կողմից անբարեացակամ և անվստահարաբ։ Վերջի վերջո համոզվեցին, վոր բույսերն իրենք չեն ան- միջականորեն կլանում ազոտին, այլ մանրեները (բան- տերիաները), վորոնք բնակվում են թիթեանածաղիկ- ների արմատների վրա։ Ուսուցկանաման, կոճղկանման, պալարանման գնդաձև մասերը թիթեանածաղիկների

արմատների վրա—ահա բակտերիաների այն մեծ և  
ամբողջ գաղութները, վորոնք աներկրա հարստաց-  
նում են հողը ազոտով: Դրանով զյուղացիների հա-  
մար աղբյուր ե բացված բոլորովին անհրաժեշտ և  
թանկարժեք նյութերի: Թիթեռնածաղիկների գոր-  
ծադրումը, որինակ՝ լլուպինը վաղուց հայտնի յե վոր-  
պես լավագույն կանաչ պարատացում, վորը գործակ-  
ցում, աջակցում ե և ապահովում ե հացահատիկների  
աճելը ամենաաղքատ ավագու հողերում: Ինքնին հաս-  
կանալի յե, վոր թիթեռնածաղիկ բույսերի պարատա-  
ցումը ազոտային պարատացումով, որինակ՝ չիլիա-  
կան բորակը, բոլորովին ափելորդ ե:

Կանաչ նյութերով հողի պարատացումը կայա-  
նում ե նրանում, վոր ցանելով որինակ՝ լլուպին, չեն  
հավաքում բույսերը այլ ամենաուժեղ զարգացման  
ժամանակին (ծաղկելու) հողի հետ հերկվում են:

Ֆուֆորաբրիզուտային պարատացում: Ֆուֆորային  
թթվուտի պաշարը շնորհիվ մեր անսխտեմ անտեսու-  
թյան, վորը միորինակ հյուծում ե հողը, շատ սահ-  
մանափակ ե: Ահսելի քանակություն կազմող ֆուֆո-  
րային թթվուտը, վորը դուրս ե տարգում սերմերի և  
ծախվող անսպունների վոսկորների միջոցով, չեն կա-  
րող յետ վերադարձվել հողին աղբի միջոցով: Ֆուֆո-  
րային թթվուտի պակասությունն ե գլխավոր պատ-  
ճառը, վոր բերքատվությունը տարեց տարի վատա-  
նում ե նույնիսկ սեահող վայրերում: Դրա համար ել  
ֆուֆորաթթվուտային արհեստական պարատացումը  
առաջնակարգ նշանակություն ե ձեռք բերում զյու-  
ղատնտեսության մեջ: Հանքային ֆուֆորաթթվու-  
տային պարատանյութերից ամենից տարածվածը

համարվում ե թումաս ոլակը-կողմնակի եժանազին  
նյութը, վորը ստացվում ե թուղից (չուգունից) յեր-  
կաթ և պողպատ պատրաստելիս: Թումաս-շակն իր մեջ  
պարունակում ե 15—25% ֆուֆորային թթվուտ և  
45—50% կիր. այդպիսով վոչ միայն դաշտերի հա-  
մար և լավագույն պարատանյութ կազմում, այլև  
խոտհարքի և թթու տորֆային մարգագետիների: Մեկ  
դեյտինին աշնան գործադրած 15—20 գութը միև-  
նույն հողամասում ներգործում ե շարունակաբար 3  
տարվա ընթացքում:

Վոսկորից ստացված ալյուրը մնացած վոսկո-  
րային ֆուֆորներից ամենալավ նշանակությունն  
ունի: Նա պարունակում ե (նայած պատրաստելուն)  
իր մեջ 4—5% ազոտ և 17—20% ֆուֆորային թթվ-  
վուտ: Ֆուֆորաթթվուտային պարատանյութերը  
պետք ե հավասարապես շաղ տաւ շատ լավ խառնել  
հողի հետ, խնամքով հերկել և ապա լավ տափանել  
Այս պարատանյութերը բարձրացնում են հացահատի-  
կի հարաբերությունը ծղնոտի հետ համեմատելիս,  
ինչպես և շտացնում ին արմատապտուղների բերքը  
և վորակապես նրանց լավացնում:

## Պ Ո Խ Ի Բ

Բույսերը ծծում են հողի միջից մոխրի նման  
աննդարար նյութեր: Սրանից պետք ե հասկանալ, վոր  
ոգտակար ե պարատացնել դաշտն այն մոխրանյու-  
թով, վոր ստացվում ե բույսերը այրելուց: Մոխրը  
վորտեղ քիչ ե հավաքվում, այնտեղ նրան ել խառնում

են կոմպոստի հետ, բայց մի քանի տեղերում մոխիրը շատ և լինում, որինակ՝ գործարաններում, և վորպես առանձին պարարտանյութ և գործածվում: Մոխիրի պարարտացնող ուժը զանազան և լինում. դա կախված է նրանից, թե ինչ տեսակ բույսերից և (տես՝ ներքեւ բերված աղյուսակը) ստացվում:

Փայտի մոխիրների մեջ ամենալավը կեչի ծառինն ե. նրանից հետո՝ բարդի, կաղնու և, դինեգործական շրջանում խաղողի վորթինը, Ամենաթույլ մոխիրը ստացվում և յեղենուց և սոճուց: Ծղնոտներից մնացած մոխիրների մեջ ամենալավը հունական ցորենինն ե, նրանից հետո, տարեկանինը և արեածաղկինը: Իսկ ամենավատն ե՝ տորֆայինը և աթարինը: Բամբակի չոփի մոխիրը ևս բավական ուժեղ ե: Առնասարակ ծղնոտների մոխիրն ավելի ուժեղ ե, քան թի փայտի մոխիրը: Վորովչետե մոխիրը տնտեսության մեջ քիչ և հավաքվում, նրան պետք ե պահել չոր տեղում, թե չե ջուրը նրա միջից կըլվանա այն սննդարար նյութերը, վորոնք հեշտ են հալվում, ինչպես կալիի աղը, և մոխիրի մեջ կընան կարծր չհալվող մասեր՝ փոփորաթթվուտային աղեր: Մոխիրը լավ ե ամեն տեփության վրանից համար, բայց առանձնապես ոգտակար և կարտոֆիլի, ծխախոտի, արևածաղկի, կտավհատի, գաղարի, գալու, կանեփի և մարզագետինների ու հունական ցորենի համար: Սրանք շատ են սիրում կալի, վորայնքան շատ կա մոխիրի մեջ: Աչքի առաջ պետք ե ունենալ, վոր մոխիրն սկսում ե իր ուժը ցույց տալ յերկրորդ, մինչև անգամ յերրորդ տարին շաղ տալուց հետո: Մոխիրը գործածվելուց առաջ պետք ե մալու և հանդարա յեղանակին շաղ տալ վարելահողի վրա:

Դրանից հետո պետք ե տափանել 1 և կեսից մինչև 2 վերշոկ: Մոխիրը հողին դանդաղ ե ազդում, այդ պատճառով ել նրան պետք ե շաղ տալ դաշտում գոնե 6 ամիս ցանելուց առաջ (որինակ՝ դարնանցանի համար աշնանից), Մոխիրը լավ ե, յեթե խառնել առաջուց չհանգած կըի հետ. մեկ մաս կիր և 5 մաս մոխիր: Այն ժամանակ մոխիրն աղդում և ավելի լավ և շուտ: Մի դեսյատինին տալիս են 50—100 գ., նայելով թե ինչ տեսակ մոխիր ե և ինչ բույսի համար: Մոխիրը ներգործում և արոտատեղիների վրա: Խոնավ, թթու արոտատեղերը, մոխրով պարարտացնելուց հետո, տալիս են ամենալավ խոտը: Մոխիրը հարկավոր և շաղ տալ վաղ գարնանը կամ աշնանը, տալով մի դեսյատինին 70—200 գ. և տափանել: Սակայն մոխիրը չեներկայացնում իրանից լիակատար պարարտացում, վորովհետև դրա մեջ յերբեք չի լինում բորակածին: Մոխիրը, գործադրելով բանջարանոցներում, լավացնում և բանջարանոցների վորակը: Մոխիրի միջին բաղադրությունը տոկոսներու տոկոսներու:

| Տորֆը                 | Գ Ա Յ Տ Ը | Տարեկանի<br>հոսարեր աերեալոր | Տղնու |
|-----------------------|-----------|------------------------------|-------|
| Ֆոսֆորաթթվուտ         | 1,2       | 3,0                          | 4,0   |
| Կալի                  | 1,0       | 6,0                          | 10,0  |
| Կիր                   | 45,7      | 35,0                         | 30,0  |
| Հունական ցորեն        |           | Արեածաղկիկ                   | Աթար  |
| Ֆոսֆորաթթվուտ         | 6,0       | 4,0                          | 4,8   |
| Կալի                  | 25,0      | 14,0                         | 11,0  |
| Կիր                   | 9,5       | 7,0                          | 8,0   |
| ՓԱՅՑԻ ՄՈԽԻՐՆ ՈՒՆԻ     |           | ԾՂՆՈՑԻ ՄՈԽԻՐՆ ՈՒՆԻ           |       |
| Կալի . . . 7,64 տոկոս |           | Կալի . . . 15,6 տոկոս        |       |
| Ֆոսֆորաթթվ. 3,03 »    |           | Ֆոսֆորաթթվ. 1,45 »           |       |

## ԿՈՄՊՈՍԻՑԻԱՆ (Աղբախառնուրդ)

Կոմպոստ կոչվում է այն պարարտացուցիչ նյութը, վոր պատրաստվում է տնտեսության մեջ ստացված զանազան մնացորդների խառնուրդից, վորպիսիք են՝ ամեն տեսակի գիրիլը, զանազան բույսերի մնացորդները, խոտերը, կենդանական մնացորդները, վուկորները, ցեխը, մոխիրը, փայտի թեփը, կիրը, լվացքաջուրը, գործարանային մնացորդները, մուրը, հայքաջուրը, մուսքով չկա մի առարկա, վոր անպետք լինի լըն։ Մի խոսքով չկա մի առարկա, վոր անպետք լինի կոմպոստի համար։

Այդ բոլորը շատ կամ նվազ չափով պարունակում են իրենց մեջ բույսերի աճեցողության համար անհրաժեշտ, սննդարար նյութեր։ Պինդ մարմինները փթելու համար պահանջում են համեմատաբար ավելի ժամանակ, դրա համար ել փթելն արագացնելու համար հարկավոր ե առաջուց նրանց մանրացնել։ Կոմպոստն ունի և այն առավելությունը, վոր շատացընում և մի քանի անգամ աղբի քանակը։ Կոմպոստը միշտ պահում են կույտերով։ Կոմպոստի կույտերը պետք ե պահել շվաք տեղերում, վորպիսդի ամառ ժամանակ նրանք սաստիկ չըլչորանան։ Այդպիսի կույտեր կազմելու ժամանակ գլխավորապես հարկավոր ե ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, վոր նըղբը քանի հնարավորություն ունենան համաշափ կերպով փթելու։ Խոկ այսպիսի փթման գլխավորապես պայմանն ե նրանց փխրունությունը և պարունակած խոնավությունը։ Կոմպոստի կույտերի մեջ վորոշ խոնավությունը պահպանելու համար գործ են ածում կենցանիների մեջը, սպանած (մորթած) կենդանիների

արյունը, լվացքաջուրը և առհասարակ ամին տեսակ հեղուկներ։ Իսկ վորպիսդի կույտերը շատ չխտանան ու նրանց փթելը շատ չգժվարանա, հարկավոր ե ըստ կարելույն շուտ-շուտ խառնել՝ տակն ու վրա անել նրանց։

Բացի այս բոլորից, յեթե ողն ազատ չի կարողանում մուտք գործել նրանց մեջ, վորով կանգ և առնում աղբախառնուրդի մեջ գտնվող նյութերի լուծվելը, ապա անհրաժեշտ է կույտերը ծակծկել յերկար ձողերով։ Կան հեշտ (արյուն, խոտ, կղկղանք) և գժվար (փայտի թեփ, տաշեղ) փթող առարկաներ, լինում են նույնպես անորդանական մարմիններ (կիր, մոխիր), վորոնք բոլորովին չեն փթում։ Կոմպոստի կույտը կազմելիս ձեռքի տակ յեղած նյութերի դասավորումը պետք է յենթարկել վորոշ ձեր և վոչ թե դասավորել անկանոն կերպով։ Նախքան կույտը դասավորելը, մի քանի նյութեր նախորոք յենթարկվում են առանձին նախապատրաստման։ Այսպիս որինակ՝ վոսկորները և բոլոր խոշոր նյութերը, նախքան կույտում գնելը, մանրացնում են։ Հետո ընտրում են կույտի տեղը։ Անհրաժեշտ ե՝ 1) վոր նա հեռու չլինի տնտեսությունից, 2) անպայման շվաք տեղում լինի։ Տեղը պետք ե լինի բարձր, չոր, վորպիսդի կույտի տակ ջուր չհոսի և չլվանա նրանից բույսի համար սննդարար նյութերը։ Այդպիսով, ընտրելով կոմպոստաեղը, հարթեցնում են, իսկ հետո կիտում են կույտը։

Կույտը, ինչպես ասացինք, պետք է կիտել այնպիս, վորպիսդի հեշտ փթող նյութերը դժվար փթողների հետ դասավորված, խառնված լինեն։ Այսպիսի կույտեր կազմում են հետեւյալ կերպով։ Որինակ՝ մի

քառորդ արշին շերտ ունեցող բանջարանոցի կամ հումուսային հողի վրա կիտում են մի յերկու վերշոկ հաստությամբ կրի կամ մոխրի շերտ, նրանց հետո մի քառորդ արշին հաստությամբ տղմային կամ տորֆային շերտ, հետո դարձնում են զանազան անպետք նյութեր, ինչ վոր ունենք, հետո նորից հող, նորից գիրիլ, նորից մոխրի և տիղմ, տորփ, եայլն, և այնպես, վոր մեկը մյուսին հետեւ շերտեր կազմեն: Ամեն մի շերտ կազմելուց հետո ջրում են: Ոգտակար ե ջրել մեղով կամ հեղուկ դրության հասած մարդու արտաթորությամբ: Կոմպոստի կույտի վերին շերտը շեռ նում են հողից կամ տորփից և նորից ջրում են: Նպատակահարմար ե կույտը կազմել միանգամբց: Դրա համար անհրաժեշտ ե պատրաստ ունենալ բոլոր կարեվոր նյութերը: Կոմպոստի կույտը կարելի յե կազմել նաև ավելի հեշտ ձևով: Հարկավոր ե միայն շաղ տալ հողը նրա վրա, փոխել մյուս նյութերը, ածել նորից հող կամ տորփ, հետո նորից նյութեր, և այդպես շարունակ: Սակայն ամենավերին շերտը պետք ե լինի հողից կամ տորփից: Վորպեսզի կոմպոստակույտի մեջ յեղած նյութերը հեշտ ամրացնութերը կամ տորփից կամ տորփից: Վորպեսզի կոմպոստակույտի մեջ յեղած նյութերը հեշտ ամրացնութերը կամ տորփից կամ տորփից: Վորպեսզի կոմպոստակույտի մեջ յեղած նյութերը հեշտ ամրացնութերը կամ տորփից:

Կոմպոստակույտի տակ հող են ածում նրա համար, վոր նրա միջից չվողողվեն, չկորչեն սննդարար նյութերը, բացի դրանից հողն արագացնում ե փթումը, հավաքում և ազոտային նյութերը: Փթումը կատարվում ե բակտերիաների շնորհիվ, վորոնք քանակով շատ են բանջարանոցային հողում: Հողի հետ մենք ներմուծում ենք կոմպոստի կույտի մեջ մեծ քանակ կությամբ այդպիսի բակտերիաներ և նրանք արագ

բազմանում են փթող կույտի մեջ և հավաքում են շատ թանկագին ազոտային նյութեր պարարտացման համար և ուժեղացնում են դժվար փթող նյութերի լուծնումը: Բացի այդ, հողը շուտ չի չորանում, պահում ե իր մեջ խոնավություն, իսկ լուծվելը և փթելը հնարավոր ե միայն այն ժամանակ, յեթե փթող նյութերը բավականաչափ խոնավ են: Մոխրը և կիրը մի կողմից արագացնում են նյութերի տարրալուծումը, իսկ մյուս կողմից՝ պահում են փթելուց առաջացած գոլորշին և ուրիշ գազերը և միացնում ե նրանց ազոտով հարուստ նյութերի հետ: Առանց կրի և մոխրի՝ պարարտացման համար մեծ զին ունեցող այդ գազերը կը ցնվի ողի մեջ և կը կորչեն: Տիղմը և տորփը կատարում են նույն դերը, ինչ զեր կատարում ե հողը: Կոմպոստակույտը շատ մեծ չպետք ե շինել նա պետք ե լինի քառանկյունաձև մի կամ յերկու սաժեն յերկարությամբ, մեկ ու կես կամ յերեք արշին լայնությամբ և մեկ ու կես կամ յերկու արշին բարձրությամբ: Կարելի յե կազմել կլոր կույտ, վորը վերելում նեղանում ե, ներքենում ունենում ե մեկ ու կեմից մինչև յերկու արշին լայնություն, իսկ վերենում լայնությունը մեկ ու կես—յերկու արշին ե, բարձրությունը նույնպես մեկ ու կես—յերկու արշին: Այդպիսի կլոր կույտում հավաքում են մոտ 300-ից 400 փ. կոմպոստ: Կույտի գագաթում սովորաբար շինում են մի փոքրիկ փոս, ջրելու հարմարության համար: Կույտը կազմելուց հետո շարունակում են ջրել, ցանկալի յե մեղով: Ջրում են ամեն յերկու յերեք շաբաթը մի անգամ, վորպեսզի չըչորանա, թորանալիս կույտը պիտի բահերով խառնել, ձողերով ծակծկել, վորպեսզի փությանա:

Գյուղատնեսարքյան բարձրացման ուղիները 3

Այդ տակն ու վրա անելը կատարվում է ընդհանրապես կույտը պատրաստելուց 2—3 ամիս հետո և նորից կրկնում 2 ամիս հետո Լավ խառնելս կոմպոստին ավելացնել կիր Առաջին անգամ խառնելուց հետո կույտում կարելի յէ ցանել վարունք կամ դրում: Այս բույսերի տերեները շվաք են անում կույտի վրա և չեն թույլ տալիս նրան չորանալու: բացի դրանից տալիս են լավ բերք: Ձմեռը կոմպոստակույտը ծածկում են կարտոֆիլի տերեներով, ցախով, ծղուոտվ, աղբով ևայլն նման նյութերով, վորպեսզի չսառչի: Կույտն ուժեղ լրւծվելուց ստացվում է միակերպ փոշշիաձև նյութ, վորն իրենից ներկայացնում է ուժեղ պարարտանյութ: Կոմպոստն իր գործունեյության ուժով յերբեմն վատ չի աղբից, այլ նույնիսկ լավ: Նա շուտ և ուժեղ ե ներգործում:

Այն տնտեսություններում, վորտեղ աղբ քիչ ե հավաքվում, (իսկ այդպիսի տնտեսություններին համարյա ամբողջովին պատկանում են մեր գյուղացիները) կոմպոստը ծառայում է վորպես աղբի լավագույն ոժանդակիչ, ավելացնելով նրա քանակը: Ընդհանրապես նրա վրա շատ լուրջ ուշադրություն պետք է դարձնել. առանց կոմպոստի կույտեր կազմելու մեր տնտեսություններում ի զուր տեղը կորչում են շատ թանկագին պարարտանյութեր: Կոմպոստի լիակատար տարրալուծման համար հարկավոր է 2 ամսից մինչև 2 տարի, յերբեմն նույնիսկ ավելի ժամանակ, նայելով, թե ինչ նյութեր կան այդ խառնուրդի մեջ: Ի հարկե, յեղանակն ել ահագին նշանակություն ունի այս դեպքում: Տաք ժամանակ կոմպոստն ավելի արագ է լուծվում կամ փթում: Կոմպոստով պարարտացնում են

դաշտերը, մարդագետինները և բանջարանոցները: Լավ լուծված կոմպոստը կրում են դաշտ, ցանքսից առաջ շաղ են տալիս և վարում սերմերի հետ 1 ու կեսից միչև 2 վերշոկ խորությամբ: Յերբեմն բարակ շերտով 1—2 մատնաչափ տարածում են նաև արդեն ծլած դաշտերի յերեսին: Մի գեսատին հողաբաժնին հարկավոր է 1000—5000 փութ կոմպոստ:

Կոմպոստը գործադրում են աշնանացանի համար, գարնանից: Շուտ կրելը միտք չունի, գորովհետեւ բույսերի համար անհրաժեշտ սնունդը նրա մեջ կա արդին, լուծված և ավելի փթելու յել կարիք չունի: Շատ անգամ շուտ կրելն ահազին վնասներ կարող ե հասցնել, վորովհետև կոմպոստի մեջ յեղած բորակը, վորին հողը չի կարող պահել անձրկների ազդեցության տակ, հեշտությամբ կարող է մղվել վարած վերնաշերտից և թափանցել ավելի խորը՝ գետնի մեջ: Իսկ այդ բանը կոմպոստի թույլ ներգործման պատճառ կը լիներ: Մարգագետիններում կոմպոստը շաղ են տալիս աշնանը և գարնանը հողի յերեսին, իսկ վորպեսզի նա համաչափ տարածվի, լավ է մարգագետինն ուժեղ տափանել կոմպոստն իբրև լավ պարարտացուցիչ նյութ, ծառայում է նաև բանջարանյութերի համար, վորոնց հողը գարնանը ծածկում են կոմպոստի շերտով և ապա վարում են, կամ արդեն բուսած ամեն թփի տակ հողի յերեսին լցնում են 4—5 բուռ այդ պարարտանյութից: Շատ ոգտակար է այսպիս վարփել կազմը, դրումի, սեխի, վարունդի, ձըմերուկի և այլ նման բույսերի վերաբերմամբ: Շատ պիտանի է կոմպոստն այդիններում խնձորենի արմատների մոտ դնելը: Վրանից խնձորը մեծանում է:

## ԻՆՉՈ՞Ն ԳՅՈՒՂԱՑԻՆ ԻՐ ԴԱՇՏԻՑ ՔԻՉ ԲԵՌՔ Ե ՍՏԱՆՈՒՄ

Մեր գյուղական տնտեսությունն իմպերիալիստական և քաղաքացիական կոկվների շնորհիվ սաստիկ ընկել, քայլարվել եւ, ջանքսի տարածությունը կրճատվել եւ, անասունների քանակը պահանձել եւ կիսով չափ, հացի բերքը մի գեսայատինից իջել եւ մինչեւ 40 փութ, յերբեմն ավելի քիչ:

Աշխատավոր գյուղացիությունն իր գոյությունը պահպանում ե կիսաքաղց դրությամբ: Հայտնի զիտնական Տիմիրյազեվն ասում ե՝ «ա, ով վոր կերակրում ե ամբողջ հանրապետությանը, ինքը կիսաքաղց ե մնում, և բոլորովին չի կշտանում նրա համար, վորովհատե կերակրող մայր հողը հրաժարվում ե նրան առաջկա պես սնունդ տալուց»: Այսպիսի պայմանների և դրության հետ այլևս հաշտվել անհնարին ե: Առաջին հրատապ խնդիրը, վորը դրված ե մեր գյուղական տընտեսների առաջ, կայանում ե նրանում, վոր գյուղական դաշտերի բերքը պետք ե բարձրացնել: Ստանալ յերկու—յերեք համկ այնտեղ, ուր առաջ մեկն եր բուսնում՝ ահա այս ե մեր մոտիկ ապագայի նպատակը:

Ի՞նչպես իրականացնել այդ և ի՞նչն ե ցածր բերք ստանալու պատճառը:

Ցածր բերք ստանալու պատճառը թագնվում ե մեր անսիստեմ, առանց վորեւ սերմնափոխության տնտեսության մեջ:

Քանի վոր գործադրվում ե, քանի դեռ գոյուրյուն ունի ու ապրում ե մեր անսիստեմ տնտեսությունն իր ուր

առոտի ցելով—հարոսով, յերբեք խոս չի կարող լինել բերքի բարձրացման մասին: Պետք ե ընդմիւս բողնել, պետք ե հրաժարվել անսիստեմ սերմնափոխությունից, ձեռք բաւել երանից յեվ փոխարինել այն կանոնավոր—բազմասերմնափոխությամբ—բազմադաշտով, այսինքն՝ դաշտերում ցանել խոներ, կարտոֆիլ յեվ արմատապտուններ:

Սա յե միակ յելքն այդ գրությունից ազատվելու համար:

Յեվրոպայում բազմագաշտը 100 տարուց ավելի գոյություն ունի, իսկ անսիստեմ տնտեսության մասին նույնիսկ այնտեղ շատ տեղերում շատ վաղուց մոռացել են և բնավ չեն հիշում: Բազմացանի և կանոնավոր մշակման շնորհիվ Յեվրոպայում գյուղացիներն ստանում են մեկ գեսայատինից մի քանի անգամ ավելի: Մեզ մոտ հացի միջին բերքը հաշվում են մի գեսայատինից 40 փութ, գուցե և պակաս: այնինչ յեվրոպացիք ստանում են միջին հաշվով 120-ից մինչև 160 փութ մի գեսայատինից: Բայց նրանց հողաբաժինը մեզնից շատ ու շատ քիչ ե, և հողի վորակը մերինից նույնպես լավ չե: Նույն կավախառն և ավագախառն հողերը, ինչպես և մերը: Ուրեմն՝ բանը հողի մեջ չե, այլ նրա մշակման ձեր մեջ:

Հմտությունն ե, գիտենալն ե, վորը բացակայում ե, պակասում ե մեր գյուղացիների մեջ: Յեվրոպայից վոչ պակաս բարձր բերք կարելի յե ստանալ և մեզ մոտ:

Ուռասաստանի մի շարք փորձադաշտեր իրենց յերկարամյա գործունեյությամբ փայլուն կերպով այդ ապացուցել են:

Մեզ մոտ փորձադաշտերի գործը նոր և դրված,

բայց և այնպես նրանք ել նույնն են հաստատում: Հայաստանի վերաբերյալ առայժմ տվյալներ չկան հը-րատարակված, բայց լայնածավալ Ծուսաստանում կան մի շարք փորձագայթեր, վորոնք գալիս են գեղեցիկ կերպով հաստատելու մեր ասածները:

Հենց վերցնենք որինակի համար թեմիրյազկի անվան (Նախկին Պետրովակո-Ծաղումովսկի) Գյուղա-տընտեսական ակադեմիայի փորձնական դաշտը, վորը գտնվում է Մոսկվայի մոտ: Այնտեղ տարեկանի բերքը մի շարք տարիների ընթացքում միջին թվով մի գես-ից տվել ե վաղահարոսի վրա 168 փութ: Յեղել են տա-րիներ, վոր այդ (տարեկանի) բերքը բարձրացել ե մին-չև 247 փ: Խսկ ցորենը տվել ե մինչև 257 փութ: ։

Ուրիշ փորձագայթերի արդյունքը մոտավորապես նույնն ե ցույց տալիս:

Բայց այդպիսի բերք վոչ թե միայն փորձագայ-տերից կարող են ստանալ, այլև մասնավոր տնտեսու-թյուններից: Ծուսաստանի ամեն մի նահանգում քիչ չեն առաջադեմ գյուղացիներ, վորոնք կանոնավոր տնտեսություն են վարում, վորոնց բերքը յետ չի մը-նում Յեվրոպայի գյուղացիների ստացած բերքից: 1923 թ: Կայացած Ծուսաստանի Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսում այդպիսի կուլ-տուրական առանձին տնտեսատերեր շատ են յերկա-ցել: Այդպիսի մասնավոր տնտեսատերերից—գյուղա-ցիներից մեկն ել՝ Դոգոնովն ե, Մոսկվայի նահանգից, Գիմիտրովի գավառից:

Գյուղացի Դոգոնովը, ոգտվելով գյուղատնտեսների խորհրդներից և գյուղատնտեսական գրքերից, առաջ ե բերել իր տնտեսության մեջ բազմադաշտ սիստեմ ե,

շնորհիվ հողի կանոնավոր մշակման, ստացել է հացի բերք մի գեսատինից 150 փութ, այն ինչ իր հարեան-ները, վորոնք դեռ պահպանում են անսիստեմ տնտե-սութուն՝ ստացել են 40—60 փութ:

Մեզ մոտ նույնպես նկատվում է այդպիսի շար-ժում: Մոտ ապագայում մեր տնտեսությունների բեր-քը կը բարձրանա, յեթե մենք ընդմիշտ ձեռք քաշենք, հրաժարվենք այդ անսիստեմ տնտեսություններից:

Բանիմաց գյուղացիությունը և գիտակից յերի-տասարդությունը բոլոր միջոցները պետք ե ձեռք առ-նեն տարածելու գյուղացիների մեջ գիտություն: Գի-տությունն ե մեր գյուղատնտեսության փրկությունը: Գիտությունը և տեխնիկան են, վորոնք յեռապատկե-լու յեն ձեր բերքը և ստեղծելու յեն ձեզ համար բա-րեկեցիկ կյանք:

## ԱՆՍԻՍՏԵՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ

Ինչով ե վատ անսիստեմ տնտեսությունը: Ան-սիստեմ տնտեսությունը վատ ե նրանով, վոր չի ա-պահովում հողագործի ընտանիքին՝ հացով, և վոչ ել անասուններին՝ կերպվ:

Առանձնապես մեծ վնաս ե բերում անասուննե-րի արածելը հարոսի վրա, վորի շնորհիվ հողն ուշ ե վարվում:

Հարոսի վրա բուսնում են գիծ խոտեր, վնասա-կար քոլեր, բույսեր, վորոնք իրենց մեջ պատապարում են գյուղատնտեսության համար շատ վնասատուներ: բացի դրանից հողից քաշում են մեծ քանակությամբ

ջուր և աննդարար նյութեր: Այդ գիֆ խոտերը, քոլերը՝ վորպես անասունների կեր վոչ մի նշանակություն չունեն: Անասունները միայն քաղցից ստիպված, ուրիշ կեր չգտնելու պատճառով ուտում են դրանցից մի քանիսը: Շատ գիֆ խոտերն ել ունեն անախորժ և դառն համ: Այդ դառնությունը կերի հետ անցնում ե և կաթին: Կովերն այդպիսի կեր ուտելուց տալիս են քիչ կաթ:

Հարոսի վրա անասունների արածացնելով, ուժեղ կերպով ամրացնում ենք հողը և նրա մշակումը զարձնում շատ գժվար: Հողը ամրանալով, գոլորշիացնում ե այդ տարածության վրա մեծ քանակությամբ ջուր: Չորացած և ամրացած հարոսի ուշ մշակումը չի թողնում, վոր հողը հանգստանա և վերականգնի իր ուժերը նոր բերքի համար:

Միայն հացահատիկներ ցանելն առաջ ե բերում հողի վերնաշերտում գտնվող սննդարար նյութերի միակողմանի նվազում, հողի ուժասպառություն և նպաստում ե ուժեղ կերպով մոլախոտերի զարգանալուն:

Ի նկատի ունենալով, վոր մի քանի հարյուր տարի յե, ինչ մենք վարուս ենք տնտեսությունը անսիստեմ և հողը վատ և մշակվում, չի խնամվում ու չի պարարտացվում, բնական ե՝ տարեց տարի հողն սկսում ե ուժասպառ լինել, կորցնել իր նշանակությունը, վորից և նվազում ե հացի բերքը:

## Կիրիլ ԱՆՍԻՍՏԵՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ

1. Մի մոռանաք, վոր դաշտի քիչ բերքը, անբերիությունը դաշտային տնտեսության անարդյու-

նաբերությունը և գյուղացու ընտանիքի կիսաքաղց մնալը անսիստեմ տնտեսության հետեւանք ե:

2. Հիշեք, վոր անսիստեմ տնտ. ժամանակ հողամասի մի մասն իզուր, անոգուտ կորչում ե, քանի վոր մնում ե ուշ արոտի՝ հարոսը: Նրա համար հարկ ե վըճարում, իսկ տնտեսությունն այդպիսի հարոսից միայն վնաս ե կրում:

3. Իմացեք, վոր գիֆ, վնասակար խոտերը, քոլերը, վորոնք վաղ գարնանից ծածկում են հարոսը, սպառում, գործադրում են մեծ քանակությամբ ջուր և հողի մոխրային նյութերը՝ զրկելով տնտեսական, կուլտուրական բույսերին սննդից:

4. Ինքներդ ստուգեցեք, վոր գիֆ խոտերը վատ կեր են անասունի համար: Անասունն ուտում ե մի քանի գիֆ խոտերի հյութալից, քնքույշ վերին մասերը: Մնացած խոտերն անարգել կերպով չորացնում են և ուժասպառ են դարձնում հողը: Անասունը հարոսում շրջում ե, ման և գալիս և կեր չի ստանում կամ ուտում:

5. Փորձով համոզվեցեք, վոր, հարոսի վատ և անբավարար կերի շնորհիվ, կովը ըիչ կաթ և տալիս, վորի շնորհիվ կաթը լինում ե դառն, աղի և անհամ:

6. Ի նկատի ունեցեք, վոր անասունի հարոսի վարածելը խոշոր վնաս ե հասցնում: Հողը ուժեղ կերպով ամրանում ե գոլորշիացնում ե այդ տարածության մեջ մեծ քանակությամբ ջուր: Ամրացած և չորացած հարոսի վարելը դառնում ե ավելի քան գժվար վոչ թե միայն յերկրագործի, այլև կենդանու համար:

7. Իմացեք, վոր անսիստեմ մեջ միմիայն հացատիկ ցանելն ուժասպառ ե անում միմիայն հողի վեր-

նաշերտը: Հողի ավելի խոր շերտերը մնում են չոգտագործված: Անսիս. տնտ-յուն վարելիս զժվար և պայքարել մոլախոտերի դեմ: Վոչ միայն հարոսը, այլև հացի ցանքը սաստիկ կերպով աղտոտվում է:

8. Յեթե չմաքրենք սերմացուն, կավելանա հողում գիշ խոտերի քանակը:

9. Անսիստեմ տնտ-յունը չի ապահովում յերաշտարին անբերիությունից և սովից:

10 Անսիստեմ տնտ-յունն անասուններին կերով չի ապահովում տնտեսության մեջ:

11. Չոր խոռը քիչ և անասունի համար, վորպես կեր, վորովհետեւ ուշ հարոսից խոտ չի կարելի ստանալ: Արոտատեղերը մեզ մոտ քիչ են: Կերի և արոտի պակասության պատճառով անսիստեմ տնտեսության ժամանակ ստիպված անասուններին պետք և հարոսում արածացնել: Հարոսն ուշ են վարում, իսկ ուշ վարած հարոսի վրա բերքը լինում և վատ:

12. Լավ իմացեք, ուշ հարոսի վրա գարնանից բուսնում են խոտեր, վորոնք դաշտին հանգիստ չեն տալիս: Չորացած և պնդացած հողը չի հանգստանում և ուժ չի հավաքում:

13. Լավ յուրացրեք, վոր շահավետ տնտեսության միակ ճանապարհը անսիս. տնտ-յան՝ պիտության այդ ժանդախտի վոչնչացումն և բազմացան սիստեմին անցնելը. անասնապահության բարձրացումը և զյուղատնտեսական կոռպերացիայի զարգացումն ել դրանից և կախված:

14. Բազմացանի դեպքում, կանոնավոր և հերթով զանազան բույսեր ցանելով և վաղահարոսով. կըբարձրանա հացի բերքը մեկ ու կես կամ յերկու անգամ:

15. Բազմացանը՝ «զբաղված» հարոսով, դաշտում կարտոֆիլ ու արմատապտուղներ ցանելով, տնտեսությանը կապահովե անասունի կերի կողմից:

16. Բազմացանը հնարավորություն կըտա ավելացնել անասունների քանակը և պարապել կաթնատընաեսությամբ:

17. Մի մոռանաք, վոր հողն աղբով լավ պարապացնելու և հողի պտղաբերությունը վերականգնելու համար աղբը չի բավարարում: Աղբը չի բավականացնում հողն ուժեղ կերպով պարարտացնելու համար, վորովհետեւ մենք քիչ ունենք, անասունը քիչ և նրան ստանալու համար, քանի վոր այնքան կերով, ինչքան սովորաբար ստացվում և մեր տնտեսության մեջ, շատ անասուն չի կարելի պահել, կերակրել:

18. Բազմացանը պալար արմատապտուղ հողամասով ապահովագրում և տնտեսությունը յերաշտից: Արդյունավետ անասնաբուծությունը և գյուղատնտեսական կոռպերացիան վոտի կըկանգնեցնեն գյուղացիական տնտեսությունը:

19. Հաշվեցեք, ինչ են կորցնում ձեր առանձինառանձին տնտեսությունները և ձեր գյուղի բոլոր տնտեսատերերը միասին անսիս. տնտ-նից և ինչ կարող ելին շահեւ յեթե առաջ բերեյին բազմացանը՝ խոտարույսեր, պալար-արմատապտուղներ ցանելով դաշտերում և «զբաղված» հարոս թողնելով:

20. Մտածեցեք, թե ինչպես պետք և կերակրել անասնին՝ յեռաղաշտից բազմացանին անցնելիս:

21. Խորհրդակցեք գյուղատնտեսների հետ, դիմեք և նայեք ուրիշ շրջաններ կամ տնտեսություններ, կամ կարդացեք գրքերի մեջ, թե ինչպես լավ կըլինի անցնել

անսիստեմ տնտեսությունից բազմացանին, բազմացանի ինչպիսի սերմափոխությունը լավ կը լինի ձեր պայմանների համար:

22. Մտածելով և հաշվի առնելով այդ ամենը, կազմակերպեք յերիտխմբակներ ձեր գյուղում վորպեսպի համոզեք ըստ կարելույն բոլոր հողագործներին, վոր վոչնչացնեն անսիստեմ տնտեյունը և անցնեն բազմացանին:

23. Ապացուցեք խոսքով, գործով, որինակով, վոր անսիստեմ տնտեյունը դարավոր, կատաղի թշնամի յեռ չարիք, տնտեսության կործանում, վոր անսիստեմ. ձեզ համար սորկություն ե: Յերիտասարդ, կազմակերպված ուժերով պայքարեք անսիստեմության դիմ: Հաղթեցք՝ նրան, ամրացրեք և խտացրեք ձեր շարքերը, Այդ և ձեր պարտքը:

## Վ Ա Պ Ա Հ Ա Ր Ո Ւ

Գյուղացիական դաշտերի բերքը բարձրացնելու համար հարկավոր ե հարոսի մշակումը շատ վաղ սկսել և ուշ հարոսի փոխարեն առաջացնել վաղահարոս: Հարոսը չպետք է ինի արոտատեղ: Վաղահարոսը, համեմատած ուշ հարոսի հետ, ամեն տեղ մեկ ու կես, յերբեմն ել նույնիսկ 2 անգամ ավելացնում ե բերքը: Այդպես որինակ՝ Տիմիրյագեկի Գյուղատնտեսական ակադեմիայի փորձադաշտը տասը տարվա ընթացքում վաղահարոսից ստացել ե ամեն մի գեսյատինից 168 ֆ. հաճար, իսկ ուշ հարոսից 112 ֆութ: Վաղահարոսը տվել ե բերքի ավելցուկ կես անգամ ավելի ուշ հարոսից:

Մոսկվայի նահանգի գյուղացիության դաշտերից նույն տարիներում բերք ստացվել ե ուշ հարոսի մի գեսյատինից 62 ֆութ հաճար: Տարբերությունը համեմատած փորձադաշտի հետ խոշոր ե—106 ֆութ հաճար մի գեսյատինից:

Ծնորհիվ վաղահարոսի և գաշտի կանոնավոր խընամքի, փորձադաշտը տալիս ե. 106 ֆութ հացահատիկ ավելի, քան Մոսկվայի նահանգի գյուղացիների նույն հողը:

Մի ուրիշ փորձադաշտ Նովգորոդի նահանգի վաղահարոսի մեկ գեսյատինից ստացել ե 96 ֆութ, իսկ ուշ հարոսից՝ 60 ֆութ հաճար:

Թե այս և թե մյուս գեպքում վաղահարոսը փորձադաշտի պայմաններում տվել ե բերքի հավելում մեկ ու կես անգամ շատ:

Բայց գյուղացիական ուշ հարոսը և փորձադաշտի ուշ հարոսը—միենույնը չեն: Փորձադաշտերի հարոսի վրա անասունը չի արածում և հետևաբար հողը վոտնատակ չի անում:

Դրա համար գյուղացիական պայմաններում վաղահարոսից բերքի հավելում մեկ ու կես անգամ ավելի շատ կը լինի: Գյուղացիական վաղահարոսի վրա կատարած փորձերն այդ են հաստատել այդ յեղակացության են բերել:

Դաշտերի բերքի նույնիսկ մեկ ու կես անգամ ավելանալն ունի գործնական մեծ նշանակություն Հանրապետության համար: Բանն այն ե, վոր մեր հացը մեզ չի բավակացնում, և մենք ստանում ենք դրսից: Ուրեմն, վաղահարոսն ապահովում ե գյուղացիական տնտեսության իր հացով մի ամբողջ տարի:

Վաղահարոսը միենույն ժամանակ պետք ե լինի և մաքուր հարոս, այսինքն՝ ամբողջ ամառվա ընթացքում դաշտը պետք ե ազատ պահվի մոլախոտերից, գիծ խոտերից, իսկ ամենավերին շերտը՝ փափուկ դըրությամբ:

Վաղահարոսը վոչ միայն բերքն ե բարձրացնում, այլև ոժանզակում ե նույնպես դաշտերը գիծ խոտերից մաքրելուն: Վերականգնում ե հողի պաղապետությունը և ստեղծում ե բույսերի համար՝ հողին անհրաժեշտ մանր գնդաձե կազմ:

Բացի դրանից, վաղահարոսն ամենից լավ ե հավաքում խոնավությունը և պահպանում: Ցերաշտի ժամանակ այդ շատ կարեոր ե:

Բույսերը ջուր շատ են գործադրում: Մի փութ բերքի չոր նյութը պահանջում է 300—500 փութ ջուր, նայած բույսի տեսակին. այդպիսի քանակությամբ ջուրը կարելի յե հավաքել, պաշտել կանոնավոր և իր ժամանակին մշակված վաղահարոսում:

Սամարայի նահանգի մի փորձադաշտ վորոշել ե, թե վորքան խոնավություն ե հավաքվում զանազան հարոսների մեջ, աշնանացան հացահատիկի ցանքսի նախորյակին:

Վերելի 5 և կես վերշոկանոց հողի շերտերը վաղապիկ հարոսում մի դես. վրա 91,000 դույլ ջուր և պահել մայիսի հարոսը—81,500 դույլ. իսկ ուշ հունիսի հարոսը—56,000 դույլ:

Ապրիլի վաղահարոսը հավաքել եր ջուր 35,000 դույլ հունիսի հարոսից ավելի, և այդ ավելցուկ խոնավությունից բերքն ել տվել ե մի դես.-ին 42 և կես փութ ավել քան ուշ հարոսը:

Մննդարար նյութերի քանակը հավաքվում ե վաղահարոսում աշնանացանի ցանքսի մոմենտին նույնպես մի քանի անգամ ավելի, քան թե ուշ հարոսը:

Տիմիրյազեկի Գյուղատնտեսական ակադեմիան ուսումնասիրել ե այդ հարցը և իր աշխատանքների արդյունքները յեզրափակող հետեւյալ թվերն ե տվել՝ վաղահարոսը հավաքում ե մի դես.-ի վրա 35 փութ բորբակ—սելիտրա, իսկ ուշ հարոսը միայն 7 փութ, այսինքն՝ 5 անգամ պակաս: Բացի բորբակից, վորի գլխավոր բաղկացուցիչ մասը հանդիսանում ե բորբակածինը-ազուրը, բույսերը պահանջում են, վորպեսի հողում լինի բավականաչափ ֆուֆորաթթվուտ և կալիոն. այդ նյութերն ել վաղահարոսի վրա գոյանում են ավելի շատ, քան ուշ հարոսի վրա:

Մի խոսքով վաղահարոսի վրա հողն իրոք վոր հանգստանում ե և ուժ հավաքում նոր բերքի համար:

Բայց անսիստեմ տնտեսության մեջ վաղահարոս չես կարող առաջ բերել: Ամբողջ հողի 3-րդ մասը դատարկ ե մնում, իսկ դրա տուրքը պետք ե վճարել և բացի գրանից անսասունի համար կեր ել չենք ստանում: Ուրեմն՝ պես ե անցնել բազմացանին լեվ դրանով ել կրնաել հարոսի հողի տարածությունը. լավ ե նույնիսկ բոլորվին վոչնչացնել:

### Զ Բ Ա Ղ Վ Ա Ծ Յ Ե Լ

Անսիստեմ տնտեսությունից հետո, յերկրորդ հարցը, վորով հիվանդանում, տառապում ե մեր դյուղական տնտեսությունը, հանդիսանում ե անասունի կերի պակասությունը.

Կերի կարեքը ստիպում ե զյուղացիներին անառունին քշել բաց թողնել հարոսի վրա, վորի հետևանքով ել հարոսի բերքը կորչում ե:

Հարոսից կարելի յե լավ կեր ստանալ: Փոխանակ թողնելու, վոր այդտեղ գիծ խոտեր աճեն, հարոսի վրա կարելի յե ցանել կերի համար ոգտակար բույսեր: Այդպիսի հարոսը կոչվում ե զբաղված ցել:

Ամենից համար բույսը հարոսի համար հանդիսանում ե վիկի և վարսակի խառնուրդը: Վիկի խառնուրդն անասունների համար ամենից հաճախ գործադրվում ե վորպես կանաչ կեր, բայց վորպես չոր խոտ ել են հնձում: Հունձը կատարվում ե վիկի ծաղկելու ժամանակ: Վիկ-վարսակային խառնուրդի հնձից հետո անմիջապես պետք ե վարել դաշտը, իսկ աշնանը ցանել հացահատիկ: Նպաստավոր, խոնավ տարին վիկի խառնուրդը կարող ե տալ մինչև 250 փութ չոր խոտ: Ցանքսի համար խառնուրդ կազմում են 6 փութ վիկից և 6 փութ վարսակից:

Հարոսի վրա կարելի յե բուսցնել և կարտոֆիլ: Դրա համար պետք ե վերցնել ամենից վաղ աճող տեսակները: Բերքը պետք ե հավաքել, չսպասելով կարտոֆիլի լիակատար համենելուն: Կարտոֆիլի բերքի քանակությունը կը լինի մոտավորապես իսկականի 3-րդ մասը—աշնան նորմալ բերքի կեսի չափ: Բայց ի նկատի առնելով, վոր ամառը մատղաշ կարտոֆիլը շուկայում բարձր գին ե ունենում և հանդիսանում ե լրացուցիչ կերակրային մթերք զյուղական ընտանիքի համար, նրա ցանքսը հարոսի վրա դառնում ե ոգտակար: Աղը թե վիկի և թե կարտոֆիլի համար դուրս ե տար-վում աշնանից:

Մի կերակրային բույս ել կա, վորը դեռ լայն չափով չի գործադրվում. շատերին նույնիսկ հայտնի չե, բայց վորին վիճակված ե մեծ ապագա: Այդ աշնան բավուս վիկն ե: Նա ցանվում ե նույնպես աշնանը, հարոսի վրա, հացահատիկի հետ խառն: Թափուտ վիկը ձմեռում ե տարեկանի կամ այլ հացահատիկի հետ միասին: Իսկ առաջիկա գարնանն ամենից վաղ ե տալիս կանաչ կեր:

Չոր խոտ դարձնելու համար հնձվում են նույնպես ծաղկելու ժամանակ կամ քաղում են քիչ-քիչ անասունին տարեկանի հետ միասին կանաչ կեր տալու համար: Սերմի քանակը մի գեսայատինի համար պետք ե վերցնել 9 փութ վիկ և 3 փութ համար (տարեկան):

Հացի բերքն այդպիսի զբաղված հարոսից քիչ կը լինի վաղահարոսի վրա ցանածից, բայց այդ պակասը լիապես կը ծագածկի կերի մեծ քանակով և, վոր կարևորն ե, բերքը ժամանակին կը ստացվի:

Պետք ե ի նկատի առնել, վոր զբաղված հարոսների շնորհիվ, վիկի խառնուրդն ուժեղ կերպով չորացնում ե հողը: Դրա համար յերաշտ տարին ընդհանրապես ամեն տեղ և մասնավորապես այն շրջաններում, վորտեղ խոնավություն, մթնոլորտային տեղումները քիչ են, այդ խառնուրդով հարոսին զբաղվեցնել չի կարելի: Իսկ այնտեղ, ուր բավական քանակությամբ խոնավություն ե թափվում և վորտեղ մշակելի հողերը սաստիկ ուժապատճեն չեն յեղած՝ զբաղված հարոսները տալիս են փայլուն արդյունքներ: Այդ կարող ե ամեն մի տնտեսատեր անձամբ փորձել և համոզվել:

Զբաղված հարոսների ոգտակարության մասին պարզ գաղափար կազմելու համար ստորև բերվում ե

հարոսների տված բերքի համեմատական արժեքների  
աղյուսակը:

Աղյուսակը կազմված է ըստ Տիմիրյազեի Գյուլ-  
ղատնեսական ակադեմիայի փորձնական դաշտի տըկ-  
յալների:

Այդ աղյուսակից յերեսում ե, վոր զբաղված հա-  
րոսները բերք տալիս են վոչ պակաս ուշ հարոսից և,  
բացի այդ, ամենադժվար ժամանակ փրկում, աղա-  
տում են տնտեսությունը և ամբարում անառողջների  
համար կեր և վաղահաս կարտոֆիլ:

| ԱՏԵՑՎԱԾ Ե ՄԵԿ<br>ԳԵՍՑԵՑԻՆԻՑ   | ԴՆ<br>ԱՀ<br>ԲՐԱ<br>Ք | ՎԵ<br>ՖԻ<br>ԲՐԱ<br>Ք | ՎԵ<br>ՖԻ<br>ԲՐԱ<br>Ք | ՎԵ<br>ՖԻ<br>ԲՐԱ<br>Ք | ՎԵ<br>ՖԻ<br>ԲՐԱ<br>Ք | ՎԵ<br>ՖԻ<br>ԲՐԱ<br>Ք |
|---|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------|
| Տարեկանի հատիկ.   | 121 դ.               | 27 դ.                | 138 դ.               | 141 դ.               | 186 դ.               |                      |
| Տարեկանի ծղնոտ.   | 225 դ.               | 250 դ.               | 278 դ.               | 285 դ.               | 330 դ.               |                      |
| Կեր (վիկի չոր խոտի<br>արտատեղից, կարտո-<br>ֆիլի տերևները)                       | $6\frac{1}{2}$ դ.    | 241 դ.               | 145 դ.               | —                    | —                    |                      |
| Կարտոֆիլ  | —                    | —                    | 512 դ.               | —                    | —                    |                      |
| Բնդամենը ռուբլի-<br>ներով, գները նշանակ-<br>ված են նախապատե-<br>րազմական հաշվով | 170                  | 277                  | 762                  | 198                  | 234                  |                      |

### ԲԱԶՄԱՑԱՆՔԱՅ ՍԵՐՄՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կանոնավոր բազմացանքս սերմնափոխությունը  
պահանջում է, վորպեսզի զանազան տեսակ հացահա-  
տիկներ հերթով ցանվեն և միմյանց հաջորդեն խո-  
տեր ու պալարա-արմատապտուղ բույսեր: Վերջին  
բույսերի թվին պատկանում են՝ կարտոֆիլը և ար-  
մատապտուղներ՝ կերակրային տակը, գազարը, կերակ-  
րային բողկը—տուռնեպսը, շաղկամը, ևայլն: Տաք յեր-  
կըրների համար դրանց պետք է ավելացնել նաև յեգիպ-  
տացորենը և արևածաղկերը: Բույսերի ցանքսի այդ-  
պիսի հերթապահության անհրաժեշտությունն առաջ  
է գալիս հետեւյալից՝ բույսերը վերցնում են հողից զա-  
նազան սնագարար նյութեր, այն ել վոչ միենույն քա-  
նակությամբ: Այսպես, հացահատիկները գործադը-  
րում են շատ ազոտ և չափազանց կարիք ունեն ֆոս-  
ֆորի, իսկ կալիոնի կարիքը քիչ են զգում: Յերեք-  
նուկը և խոտերը վերցնում են հողից մեծ քանակու-  
թյամբ կալիոն, հետո ֆոսֆորաթթվուտ, իսկ ազոտի  
պահանջ չունի յերեքնուկը, ընդհակառակն, ինքն և  
նրանով հողին հարստացնում: Արմագտուղները և պա-  
լարաբույսերը, ինչպես որինակ՝ տակը և կարտոֆիլը,  
ամենից շատ հողից վերցնում են կալիոն, հետո ազոտ,  
և ամենից քիչ՝ ֆոսֆորաթթվուտ: Ներքեւ բերած աղ-  
յուսակը ցույց է տալիս, թե վորքան և ինչպիսի ուշ-  
նընդարար նյութեր են վերցնում զանազան բույսերը  
մի գեսյատինից, հաշված գրվանքայով՝

| ԲՈՒՅՈՒՐ      | Աղոտ    | Կալիոն | Թոսվորա-<br>թըթվուտ |
|--------------|---------|--------|---------------------|
| Հացահատիկներ | 100 գր. | 75 գր. | 40 գր.              |
| Յերեքնուկ    | —       | 203 »  | 65 »                |
| Տակ          | 119 »   | 250 »  | 56 »                |
| Կարտոֆիլ     | 160 »   | 260 »  | 77 »                |

Բացի գրանից, բույսերը սննդարար նյութեր են վերցնում նաև հողի զանազան շերտերից: Հացահատիկները սնունդ վերցնում են վարելահողի խոր շերտերից, իսկ խոտերը՝ բռնում են միջին տեղը:

Հողի խոնավության վերաբերյալ կուլտուրական բույսերը բռնում են նույնպես վոչ միատեսակ տեղ: Հացահատիկները խոնավություն պահանջում են վաղ գարնանը, իսկ պալար-արմատապտուղ բույսերը՝ ընդհակառակը, հաշովում են գարնան խոնավության փոքր քանակության հետ, լավ ոգտագործում են աճառվա և նույնիսկ աշնան անձրևները: Պալար-արմատապտուղ բույսերը պահանջում են ավելի քիչ քանակություն, խոնավություն, քան թե մեր սիրած վաղ գարնանային հացի ցանքսը. այդ ապացուցում են պարզ թվերը: Միջին բերքի ժամանակ բույսերը վերցնում են շուրջ մի գեսատինից—կարտոֆիլը՝ 44,000 դույլ կորեկը՝ 45,000 դույլ, ցորենը՝ 105,000 դույլ, վարսակը՝ 135,000 դույլ:

Դեպի գիծ խոտերը կուլտուրական բույսերը վերաբերվում են զանազան կերպ:

Միատեսակ հացարույսերի ցանքսն առաջ ե բերում գիծ խոտերի ուժեղ զարգացում, վորոնք յերեմի հացահատիկներին գերակշռում են: Յեղել են

գեպքեր, յերբ այլպիսի անմաքուր հացը հարկադրված են յեղել քաղելու անասունների կերի համար:

Յերեքնուկն եւ շնորհիվ իր խիտ աճելուն, շատ լավ ե խեղպում գիծ խոտերին: Պալար-արմատապտուղ բույսերը պահանջում են շարունակ խնամք թոխելու միջոցով, բուկ լցնելով և շարքամեջերը փուխրացնելով, վորից հետո թողնում են փուխր և մաքուր դաշտ՝ առանց գիծ խոտերի:

Հացահատիկների վերաբերյալ կարելի յի ավելացնել, վոր նրանք ուժեղ կերպով չորացնում են և ամրացնում հողը, վորը շուտով կորցնում ե իր գնդաձեկ կազմը: Խոտերը թեև նույնպես չորացնում են հողը, բայց թողնելով մեծ քանակությամբ արմատի մընացորդներ, հարստացնում են հողը բուսահողով: Իսկ բուսահողը, ինչպես զիտենք, լավացնում ե հողի կազմը, բազազրությունը:

Կանոնավոր բազմացանքսի սերմնափոխության շատ կարևոր առանձնահատկությունը հանդիսանում ե այն, վոր նրա միջոցով համաչափ գործադրվում են աշխատավոր ձեռքերը: Ցանքսը, խնամքը և հունձն այնպես լավ են գասավորվում ու իր ժամանակին, վոր աշխատանքի մեջ վոչ մի ժամարացենություն տեղի չի ունենում: Որինակի համար՝ պալար-արմատապտուղ բույսերի ցանքսը հաջորդում ե գարնանացանին, նրա խնամքը՝ բուկ լցնելը, թորինելը և այլն՝ հետաձգվում են ժամանակավորապես մինչև հունձն: Պալար-արմատապտուղ բույսերի հունձը կատարվում ե ուշ աշնանը, յերբ վոր բոլոր մյուս բույսերն արդեն հավաքված են լինում:

Այս բոլորն ապացույց են այն բանի, վոր հա-

ցահատիկների ցանքսի հերթափոխությունը պալարարմատապուղ բույսերի և խոտերի հետ ամենից լավնե, և լիակատար կերպով ոդտագործում ե ինչպես հողի պտղավետությունը, նույնպես և աշխատավորձեռքերը:

## ԲԱԶՄԱՑԱՆԻ ՈԳՈՒԾՆԵՐԸ

Ամեն տերի գաշտերից հնձվում է միլիոնավոր փութ հացահատիկ: Այս բերքի հետ միասին հացահատիկները խլում, տանում են դաշտից և այն սննդաբար նյութերը, վորոնց բույսերը խլել, դուրս են հանել հողից: Դրա համար ել հողն աստիճանաբար կորցնում ե իր ույժը. վորպեսզի բերրիությունը չդադարի, անհրաժեշտ ե հողի կենսական ուժերը վերականգնել: Դրան կըհասնենք բազմացան յեղանակն առաջ բերելով և գործադրելով: Յեթե մենք գործադրենք բազմացան սերմանափոխություն ինչպիսի ոգուտներ կըստանանք դրանից: Առաջին՝ հարսու համար հողի 3-րդ մասը չի կորչի, այլ կըկորչի ավելի քիչ մասը՝ 2-րդ՝ մենք պետք ե սերմանափոխության մեջ մացնենք արմատապտուղների, պալարների ինչպես և զանազան խոտերի մշակությունը: Այդ կըտա մեզ կերակրային միջոցներ: Կերը մենք կըվերամշակենք կենդանի մեքենաներով, այսինքն՝ անասունների միջոցով և կըստանանք թանկարժեք մթերքներ (միս, բուրդ, կաթնային մթերքներ): Այդ վերջին մթերքների մի մասը կըգործադրվի տնտեսության մեջ, իսկ մյուս մասն ել կըծախվի շուկայում, և կըստացվի դրամ, վորը կարելի կըլինի գործադրելու տնտեսության բարելավման վրա: Բացի դրանից, բազ-

մացանը կըտա շատ կեր, ուրեմն՝ մենք կարող կըլինենք շատ աղբ ստանալ վորը մենք կըմուծենք մեր խիստ քաղցած, ուժասպառ յեղած դաշտերի մեջ ու դրանով կըբարձրացնենք մեր հացի բերքը: Մյուս կողմից արմատապտուղների և խոտերի ցանքսերը մեզ ավելի շատ ոգուտ կըտան: Ահա թե ինչու անսիստեմ տնտեսության ժամանակ մենք ցանում ենք միատեսակ բույսեր՝ հացահատիկներ: Բոլորի արմատները գտնվում են հողի վերին շերտում և այդ շերտից նըրանք ծծում են իրենց զարգանալու համար անհրաժեշտ նյութերը: Ահա դրա համար ել վարելահողի վերին շերտը հոգնում ե, իսկ նրա ներքին շերտից չեն ոգտվում, վորը և մնում ե առանց ոգտագործելու: Արմատապտուղները, պալարները և զանազան խոտերը իրենց համար սնունդ են քաշում վարելահողի ներքին շերտից և կարիք ունեն զանազան տեսակ սննդի: Յերեքնուկի արմատները իջնում և հասնում են 12 վերշոկ խորը և ավելի, յոնջայի (վորը գլխավորապես աճում և հարավում) արմատները հասնում են մինչև մի սաժեն խորության: Շատ կարենոր ե նույնպես և այն, վոր յերեքնուկի և մյուս բակլայանման խոտերի (վորոնց թվին պատկանում են՝ վիկը, յոնջան, կորնգանը, ևայլն) արմատների վրա գոյանում են գնդարմատներ կամ պալարներ: Նրանք մնում են հողի մեջ, և յերբ մենք հնձենք յերեքնուկը ու յերեքնուկի գաշտը կըլին վարենք, արմատները սնունդ կըդառնան այն բույսերին, վորոնց կըցանենք դրանից հետո: Արմատապտուղները և խոտերը կոզնեն մեզ պայքարելու գիր խոտերով լցված դաշտերի դեմ: Հացահատիկների, հաճարի և վարսակի տերեները նեղ են, բավականա-

չափ ստվեր չեն ձգում հողի վրա և հնարավորություն են տալիս գիծ խոտերին զարգանալու: Խոտերի խիտ ցանքը կըխեղդե գիծ խոտերին: Խոտերը կողնեն մեզ կովել հացահատիկների զանգան վնասատու և վնասակար միջատների դեմ: Յեթե, որինակի համար՝ մեզ մոտ վարսակն ուժեղ կերպով վնասված ե ժանգով, իսկ մենք վարսակից հետո ցանենք յերեքնուկ, վորն այդ ժանգից չի վախենում և չի կարող այդ հիվանդությունով բռնվել, այն ժամանակ այդ վնասատուները չեն կարող բազմանալ մեր դաշտերում:

Ամեն տարի հացահատիկներ ցանելով, մենք տարեց տարի վերամշակում ենք հողը և նրան այնպես ենք մանրացնում, փոշի դարձնում, վոր նա կորցնում ե իր հատիկավոր կազմը, վորն անհրաժեշտ ե, վորպեսզի ոդը և ջուրը լավ թափանցեն, ազատ մուտք ունենան դեպի արմատները: Խոտաբուծություն առաջ բերելով, հողը կըվերադառնա հատիկավոր կազմին: Այդ բոլորից մենք տեսնում ենք, վոր մենք շատ մեծ ոգուտ կըստանանք բազմացանի ժամանակ՝ բուսցընելով խոտեր և արմատապտուղներ: Բայց այստեղ մի հարց ե առաջ գալիս. արդյոք, կարելի՞ յե չափազանց ավելացնել ցանքսի տարածությունը արմատապտուղներով և դրանով կրճատել հացահատիկի հողամասը: Դրան կարելի յե պատասխանել վոր մինչեւ այսոր տնտեսությունները, վորոնք արդեն անցել են խոտաբուծության և արմատների մշակման, չնայած հացահատիկի հողամասի կրճատման, հացի ընդհանուր բերքը բարձրացրել են:

## ՊԱԼԱՐ-ԱՐՄԱՏԱՎՏՈՒՆԴ ԲՈՒՅՍԵՐ

Կանոնավոր դաշտային տնտեսություն կազմակերպելիս պալար-արմատապտուղ հողամասի վրա պետք ե ամենալուրջ ուշագրությունը դարձնել: Պալար-արմատապտուղ բույսերը, առանձնապես կերակրային արմատապտուղները շատ առատ բերք են տալիս: Նրանք տալիս են տնտեսությանը շատ լավ, հյութալի և սննդարար կեր կաթնատու կովերի համար: Արմատապտուղները մի դեսյատինից կարող են տալ 2,000 - 4,000 ֆութ արմատ:

Հացահատիկի բերքը պալար-արմատապտուղ բույսերից հետո նկատելի կերպով բարձրանում ե:

Պալար-արմատապտուղ բույսերը, չնորհիվ ամառային և աշնանային անձրեներն ոգտագործելու ընդունակության, ապահովում են տնտեսությունն աննըսպաստ տարիների անբերրությունից և սովից: Յեթե հացահատիկները բերք չտան, պալար-արմատապտուղ բույսերը կըփրկեն և կազատեն: Նրանք կեր կըտան անսառունին և կարող են գործադրվել մարդկանց համար, վորպես կերակուր:

Ուրեմն՝ կանոնակօր բազմացան սերմենափոխությունը դաշտերում, յերեմնուկ յեկ պալար-արմատապտուղ բույսեր անեցնելը, վաղ կամ զբաղված հարժու լուծում են զյուղացիական յերկրագործության ամենակարեվոր խնդիրները: Բերքը բարձրանում ե, հողի պտղավետությունը վերականգնում է յեկ անսառուներն ապահովում են կերով:

Այստեղից յերիտասարդ աշխատակիցների համար բղիսում ե առաջին և ամենակարևոր մի խնդիր՝ ամեն

տեղ, ուր կարելի յե միայն, պրոպագանդա մղել զյուղով տնտեսության մեջ բազմացան ներմուծելու անհրաժեշտության մասին:

## Ա Ր Մ Ա Տ Ա Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր

Արմատապուղները—սա «կախարդական քանալին է կարնավազնի»: Յեվ այդ բանալին անհրաժեշտրեն պետք է ունենա յուրաքանչյուր տեսեսուրյուն, կովատեր: Միայն այն ժամանակ կարելի յե ունենալ կարի առաւ բանակ, յերբ կովերն ստանում են բավարար քանակությամբ արմատապտուղները: Արմատապտուղները ձմբանը փոխարինում են ամառվա կանաչ կերին, ահա այդ պատճառով կովերն ձմռանը պակաս կաթ չեն տալիս, քան ամառը, իսկ յերբեմն ել նույնիսկ ավելի: Արմատապտուղներն են՝ կերակրային ճակնդեղ, շաղկամը, կերակրային բողկը, և այլն: Առանձնապես լավ ե աճում կերակրային բողկը: Դրա համար անհրաժեշտորեն պետք է արմատապտուղներ ցանել:

## Ի՞՞Ս Ե՞Ն ՏԱԼԻՍ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԸ

Արմատապտուղները՝ համեղ կաթ տպող կեր են: Նրանք գարնանային կանաչ խոտի նման ազդում են կովի վրա, ավելացնում նրա կաթի քանակը և բաց են անում կենդանու ախորժակը: Արմատապտուղներին խառնելով կալի տակի չոր մնացորդը կարելի յե կենդանիներին լավ կերակրել խառնելով նաև թեփը, կոպտոնը, վարսակի ապուրը, վորոնք մեծ ոգուտ են բերում:

Չնայած նրան, վոր արմատապտուղները շատ մեծ աշխատանք և խնամք են պահանջում, բայց դըրանք ամենահժան կերն են:

Արմատապտուղները միենույն հողամասում տալիս են հինգ անգամ ավելի բերք, քան լավ մարգագետիները:

Մի ութերորդական դեսյատինի վրա ցանած արմատապտուղների բերքով կարելի յե ամբողջ ձմեռվաընթացքում վստահորեն կերակրել 1—2 կով, մի քիչ ավելացնելով կալի կեր և չոր խոտ: Արմատապտուղներն այնքան չեն վախենում յերաշտից, ինչքան հացահատիկները, վորովինեան նրանք հնարավորություն ունեն ոգտվելու ամառային ուշ անձրևներից:

Արմատապտուղները թույլ են տալիս գործադրել միջշարքային մշակում, վորը յերաշտի ժամանակ հանդիսանում է փրկիչ միջոց: Արմատապտուղներն իրենցից հետո թողնում են փուլսը և մաքուր դաշտ, վորն ավելացնում է նրանց հետեւող բռւյսի բերքը:

Վոչ մի բույս մարդու աշխատանքն այնպես չի վարձարում, ինչպես արմատապտուղները: Արմատապտուղ աճեցնելը—դա լավագույն միջոցն է անսիստեմ տնտեսության և գյուղացիական անշահեկան տնտեսության դեմ կովելու համար:

## ՑԵՐԵՔՆՈՒԽԿԻ ՑԱՆԵԼԸ ԴԱՇՏՈՒՄ

Զբաղված հարոսներն իրենց ոգտակարությամբ դեռ լիակատար չեն լուծում կերակրային խնդիրը. այդ մեծ խնդիրը վճռում է յերեքնուկը:

Ցերեքնուկը—բազմամյա բույս և: Մի անգամ

ցանելով, նա դաշտը զբաղեցնում է վոչ պակաս 3 տարի. գրա համար նրան չի կարելի ցանել անսիստեմ տնտեսության մեջ՝ Յերեքնուկը ցանվում է միմիայն բազմադաշտում: Յերեքնուկը — լավագույն կերն է կաթնատու կովերի համար:

Աճում ե սա մեզ մոտ շատ լավ: Նրա համար այստեղ բավարար չափով խոնավություն կա. հողի վերաբերյալ պահանջկոտ չե: Տալիս ե հունձ դեսյատինին 250 փութ լավ, շատ սննդարար չոր խոտ: Խոնավ տարիներին հունձը հասնում է 300 փթի, նույնիսկ ավելի՝ մի դեսյատինից: Ըստ իր սննդարար ուժի՝ յեթե վերածենք հացի, կըտեսնենք, վոր 250 փ. յերեքնուկի չոր խոտը հավասար է 100 փութ վարսակի կամ հաճարի:

Բացի իր նշանակությունից, վորպես կերակրային բույս, յերեքնուկն առենից լավ ե վերականգնում հողի պտղավիտությունը, հողի կազմը դարձնում է մանր, գնդաձև: Յերեքնուկով ցանված հողը դառնում է վորպես յերկար տարիներ առանց վարելու մնացած հող: Հողը նրանից հետո փշրվում է մանր գնդերի:

Յերեքնուկը, շնորհիվ իր ուժեղ գարգացած թելու արմատների, թողնում է հողում շատ բուսական մնացորդներ: Հաշված ե, վոր մի դեսյատինում արմատների մնացորդները յերեքնուկից հետո իրեն սընընդարար, պարարտացուցիչ ուժով հավասար է 80 սայլ աղբի: Հետո յերեքնուկի արմատներն ունեն մի այլ առանձնահատկություն:

Յերեքնուկի արմատների վրա կան մանր ուռուցքներ, այսպես կոչված կոճղեղներ, վորի մեջ կան

հասարակ աչքով անտեսանելի կենդանի ելակներ—բակտերիաներ, վորոնք հավաքում են հողի մեջ ողի ազուից՝ բորակ: Բորակը հանդիսանում է թանկագին պարարտանյութ դաշտերի համար:

Յերեքնուկը տալիս ե գյուղացիական տնտեսությանը շատ ավելորդ կեր: Ունենալով ավելորդ կեր, կարելի յե ձեռք բերել ավելորդ անասուն: Կըլինի շատ կաթ և աղբ: Յեթե աղբի քանակն ավելանում է տընտեսության մեջ, ապա դաշտերը լավ կըպարարտացվեն: Պետք ե ավելացնել վոր մեր դաշտերը շատ մեծ կարիք ունեն պարարտացման:

Այդ բոլորը միասին վերցրած բավականաչափ ավելացնում են բերքը և բարձրացնում տնտեսության արգյունաբերությունը:

Այստեղ, վորտեղ ցանվում է յերեքնուկը, 100 փթից պակաս բերք չի ստացվում: Բացի գրանից յերեքնուկից հետո լավ լուծվում է արոտաեղի խընդիրը: Արոտաեղի բացակայության դեպքում անասունը գարնանը և ամառը կարելի յե արածացնել յերեքնուկի դաշտում: Դրա համար յերեքնուկը թողնըվում է դաշտում յերրորդ տարին հատկապես արոտաեղի համար:

Ուշ հարոսի կեղտոտ (զիբիլոտ) բուսականության փոխարեն անասունը կերակրվում է լավ, հյութալի խոտով, կանոնավոր կշտանում է և շատացնում է կաթի քանակը:

## ԻՆՉՈՎ. Ե ՆՇԱՆԱՎՈՐ ՅԵՐԵՔՆՈՒԿԸ

Յերեքնուկը չափազանց քիչ բան ե վերցնում հո-

ղից և այնուամենայնիվ տալիս ե շատ և շատ բան, այսինքն.—

Յերեքնուկը տալիս ե մի դեսյատինից միջին թվով 250 փութ առաջնակարգ չոր խոտ:

Յերեքնուկը տալիս ե կեր, վորն իր սննդարարությամբ մեկ և կես անգամ բարձր ե լավ մարդագետնի չոր խոտից: Յերեքնուկը բարձրացնում է կաթի քանակը և տալիս ե յուղալի կաթ:

Յերեքնուկը հնարավորություն է տալիս հրաժարվելու, վերջնականապես ձեռք քաշելու ատելի դարձած անսիստեմ տնտեսությունից և անցնելու շահավետ բազմադաշտ ցանքսափոխությանը:

Յերեքնուկը բազմադաշտի ժամանակ պակասացնում է հարոսի տարածությունը և դրանով կը ճանապատ ե անոդակար հողի կամայական բացակայությունը:

Յերեքնուկի ժամանակ անսպունը տալիս ե շատ աղբ, վորը գնում ե բչացրած հարոսի դաշտի վրա:

Յերեքնուկից հետո, հողը նորից պտղավետ ե դառնում, կարծես, թե նա մի դեսյատինին ստացել ե 100 սայլ լավ աղբ:

Յերեքնուկն ուժասպառ չի անում, այլ ընդհակառակը՝ հարստացնում, ուժեղացնում ե հողը:

Յերեքնուկն այնքան ե բարձրացնում դաշտի բերքը, վոր չնայած հացի ցանքսի տարածության կը ճանապատ ստանալիք քանակությունն ավելանում ե:

Յերեքնուկը հնարավորություն է տալիս ամենամեծ չափով ոգտագործելու հժանագին հանքային պարարտացումը (մոխիր, ֆուֆորիտ):

Յերեքնուկը նպաստում ե զարգանալու կտավհատաբությանը, (վորովհետեւ կտավհատն ամենից լավ

բերքն ե տալիս յերեքնուկից հետո), կաթնատնտեսության, գյուղագործության և գերացող անասնապահության:

Յերեքնուկը բանալին է շահավետ գյուղացիական տնտեսության: Յերեքնուկը բուսնում է ամեն տեսակ հողերի վրա, բացառությամբ չափազանց ավագային և կավային հողերի: Բայց եժանագին հանքային պարարտացման նյութերի ոգնությամբ և համապատասխան մշակմամբ յերեքնուկը կարելի յե աճեցընել ամեն տեղ:

Յերկարամյա փորձերը և պրակտիկան անվիճելի պարզությամբ հաստատել են, վոր յերեքնուկը նպաստում է կերի ավելանալուն և դաշտերի բերքի բարձրանալուն:

Յեթե մենք դիմենք զիտությանը, ապա նա կը հաստատի պրակտիկայի փաստերը և կը պարզաբանի, թե ինչու մի վորեւ խոտ, վորը ցանքած ե դաշտում, կատարում է տնտեսության զարմանալի փոփոխություն:

Ամբողջ գաղտնիքը կայանում է այն առանձնահատուկ վորակի մեջ, վորը հատուկ է յերեքնուկին և ուրիշ նման խոտերին:

Վորպեսզի հասկանալի լինի այդ գաղտնիքը, պիտի զիտենալ, վոր բույսերը կարիք ունեն մի հատուկ սննդաբար նյութի, վորը կոչվում ե աղոս:

Այս ազոտը կազմում է աղբի և ընդհանրապես ամեն մի բուսահողի եյական մասը:

Հողում սովորաբար պակասում է ազոտը, գրանով ել բացարկվում ե աղբով չպարարտացված դաշտերի սակավ բերքը:

Յեկանական առաջարկը և պատման հիմքը, այսպիս կոչված լորիացեղի խոտերն ստանում են ազուրը վոչ թե հողից, այլ ուղղակի ոդից, և գործադրվում են այնպիսի մեծ քանակությամբ, վոր դրանից հետո հողի մեջ մնում ե շատ ազոտ՝ արմատների հետ միասին:

Դիտնականները հաշվել են, վոր հողը յերեքնուրից հետո ստանում ե այնքան ազոտ, վորքան ազոտ պարունակում ե 100 սայլ լավ ազբի մեջ:

Այս յերեքնուրի հատկությունը, նա տալիս ե բացի չոր խոտից, նույնպիս ձրի ազոտային պարարտացում:

Ուրիշ խոսքով՝ յերեքնուրի վոչ միայն կերակրում ե անասունին, այլև հողին: Բացի յերեքնուրից, ունենք նաև այլ լորեացեղ բույսեր, վորոնք նույնպիս կերակրում են թե անասունին և թե հողին: Դրանց թվում պատկանում են՝ վիկր, առվույտը, կորլնգանը, և այլն: Սակայն հիշված բույսերն այնքան տնտեսական դեր չեն կատարում, ինչպես յերեքնուրի:

Յերեքնուրի մյուս լորիացեղ խոտերից տարերվում ե նրանով, վոր ցանքսափոխությունը դարձնում է ճկուն և տիրոջը տալիս ե զանազան դաշտային հողամասերի մեծ տարածություն (փոփոխելու իմաստով). այսպիս որինակ՝ յերեքնուրի կարող ե դաշտում պահպել մեկ-յերկու-յերեք և նույնիսկ չորս տարի: Հետեւ վարար, յերեքնուրի կարելի յե բաց թողնել, վորպիս հարուսային բույս, ինչպես խոտհարքի և նույնպիս արոտային (3-րդ և 4-րդ տարիներում):

Յերեքնուրի կարելի յե վերացանել թե աշնանացանի և թե գարնանացանի:

Հետեւապես, յերեքնուրի կարելի յե սկսել ցանքսափոխությունը և նրանով ել ներփակել:

Յերեքնուրի աալիս ե կտավհատի համար լավագույն հողը, միևնույն ժամանակ պիտանի յե, վնդպիս լավ նախորդ նաև այլ բոլոր ցանքսերի համար որպարհնանացանի, աշնանացանի, պալար, արմատապտուղբույսերի:

### ՅԵՐԵՔ ԳԼՈԽՎՈՐ ԿԱՆՈՒՆ

Վերսիշալից կարող ենք դուքս բերել հետեւալ գործնական կանոնները: Հողում խոնավությունը պահպանելու գիսավոր միջոցներից մեկն ե իր ժամանակին վարելը:

Դաշտը վարի ինչքան կարելի յե վաղ յեկ անմիջապես հենց գուրանի հետեւից իսկ տափանի ր:

Այդ վոսկի կանոնը պետք ե կատարեք անխտիք միևնույն ե, լինի դաշտը գարնան, թե աշնան ցանքսի համար:

Յեթե դաշտն արգեն վարած ե, ապա տափանեւ չի կարելի գանդաղացնել մի ժամ անգամ:

Գարնանը պարապ անցկացրած յերկու—յերեք տրախ որերը կարող են ամբողջ աշնան խոնավության պաշարն ի չիք դարձնել:

Պետք ե հիշել, վար գարնան արևի տակ, ժամանակի ընթացքում, նատած, խտացած ձյունից և կենդանու տրորելուց հողը գոլորշիացնում ե ջուրը:

Հետեւարար, վաղ վարելով մենք կանխում ենք, ավելորդ ջրի, խոնավության գոլորշիացումը: Նույն քանը անում ե և տափանը, վորը ջարդում ե զնդերը,

Գյուղատնեսուրյան բարձրացման ուղիները 4

հավասարեցնում և թմբերը և վոչնչացնում և աշնան վարած դաշտի պնդացած ծակոցը:

Այս մեկ կողմից: Մյուս կողմից՝ վաղ կատարված վարը նպաստում և անձրեային ջրի պահելուն, վորն ավելի շուտ և ծծվում փուխը հողի մեջ, քան թե պինդ:

Գիտական մշակման յերկրորդ կանոնն ասում է՝ դաշտ պնդանալիս անհրաժեշտ է անմիջապես յերեսանց փոխացում կատարել:

Այդ արգում և նրա համար, վորպեսպի վերեի, արգեն նստված դաշտի շերտը վոչնչացվի, վորը դուրս եքաշում ներքեւ գտնվող շերտերից չուրը:

Այս դեպքում առանձապես վնասակար է կեղելը, վորը գոյացել և ձյունից կամ ուժեղ անձրեներից հետո: Այսպիսի կեղելը, արեգակի տակ տաքանալով, չորացնում է հողը:

Հողի յերեսանց փուխբացումը հաճախ կախված է Յ. Ր. պարտավորեցուցիչ կանոնի հետ, այսինքն՝ պահի՛ր դաշտը սեվ տեսլով, այսինքն՝ զիժ խոտերից, աղբու բույսերից ազատ:

Քիժ խոտերն անկոչ հյուրեր են, և հողի խոնավությունը շատ ագահ սպառողներ: Մեկ ամսվա ընթացքում նրանք կարող են խլել հողի ջրային պաշարը:

## ՅԵՐԱՇՏԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

Իմացիր և ըմբռնիր բնության ոլենքը — և այն ժամանակ չես վախենա յերաշտից:

Հիշիր, վոր յերաշտն անձրեւ չգալու մեջ չի կայտնում և այդ վոչ թե ջրային մթնոլորտի պակասուաթյան մեջ և, այլ նրա տարվա յեղանակների դաստիարակության մեջ:

Հիշիր, վոր ամենայերաշտ տարին անգամ տեղում և վոչ պակաս խոնավություն, ինչքան այդ պահանջում է դաշտային բույսերի միջակ բերքը:

Յերաշտը — դա բնության սխալն է, վոր հանկարծ սկսում է խոնավությունը տալ անհարմար ժամանակին:

Յերկրագործը պետք և ուղղի այդ սխալը մշակման միջոցով, պահպանելով անժամանակ թափված խոնավությունը:

Յերկրագործը պետք և ցանի այնպիսի բույսեր, վորոնք կարող են ոգտագործել ուշ-ամառային և աշնային անձրեները, վորոնք հաճախ տեղում են յերաշտի վայրերում: Այլպիսի բույսերն են՝ կարտոֆիլը, արմատապտուղները, կորեկը, յեղիպտացորենը, եայլն, վորոնք ունենում են ավելի յերկար ժամանակ մեծանալու, աճելու. դրա համար համարձակ կերպով կարող են ոգտագործել հունիս, հուլիս և նույնիսկ ոգոստոս ամիսների — տաք վայրերում նաև սեպտեմբեր ամսի — անձրեները:

## Ս Ե Բ Ա Ր Ե Բ

Լավ բերք ստանալու համար միենույնը չե, թե ինչպիսի սերմ կըցանենք:

Պետք է ցանել մաքուր, խոշոր և ծանր սերմեր: Դրա համար սերմերը ցանելուց առաջ ուշադրությամբ և խնամքով պետք է չոկել, դտել և մաքրել կողմնակի խառնուրդներից՝ հատուկ մեքենաներով, վորոնք կոչում են քամհար, զտիչ և տրիյեր:

Մի դիսյատինն ավելի քիչ զաված սերմ կըպա-

հանջի, բացի այդ՝ բույսերը կաճեն և կըթփակալեն ավելի լավ, և ընդհանուր բերքը զբանով կավելանա 15—20 փթով։ Շարքացանը և սերմերն և խնայում, և բերքն և բարձրացնում։

Մի փորձագաշտում համեմատել են ձեռքով ցանածի և շարքացանի ցանքուր։ Շաղ տալով մի դեսյատինի վրա ցանված եր 8 փութ հաճար, վորից հավաքվեց 69 փութ բերք։ Միկնույն տարում ցանած եր շարքացանով միմիայն 4 փութ, իսկ ստացվեց մի դեսյատինից 81 և կես փութ հաճարի բերք։ Ուրեմն՝ տարբացներ բացի սերմը խնայելուց, սկեց ավելորդ հաճար 12 և կես փութ։

Կա գյուղացիական տնտեսության մի այլ կողմ ես։ Խոսքս նեղ և լայն հողացրվածության մասին ե։ Սա մի մեծ չարիք և մեր գյուղի համար և նրան պետք և արմատախիլ անել։ Ընդհանուր հողի վերաբաժանման ժամանակ, բազմացանին անցնելիս, անպայման անհրաժեշտ և անցնել նեղ հողացրվածությունից դեպի լայնը և առաջինի քանակը, վորքան հնարա վոր և, դարձնել քիչ։

## ՇԱՐՔԱՑԻՆ ՑԱՆՔԸ

Սերմելու լավագույն միջոցը շարքացանն ե։ Շարքային ցանքսի առավելությունը կայանում և նրանում, վոր՝ 1. Ցանքսի համար պահանջվում և քիչ սերմ։ տնտեսվում և սերմը։ Շարքացանի ժամանակ սերմը մի հինգերորդ մասով ավելի պակաս և գործադրվում։ 2. Ցանցմն եժան և նստում։ 3. Սերմերը ցանքում են հավասար խորությամբ։ 4. Սերմերի զե-

անդելու խորությունը կարելի յե կատարել ըստ ցանկացած պահանջի։ 5. Սերմերը մեծանում են շատ արագ, հացն աճում և մի յերկու որով առաջ։ 6. Ծիլերն ստացվում են հավասար, համաչափ։ 7. Բույսերը լավ են թփակալում, հաջող կերպով արմատ բանում և մեծ հաջողությամբ կովում աննպաստ պայմանների գեմ։ 8. Շարքային ցանքսի ժամանակ գաշտում սերմի համաչափ դասավորումն ապահոված կըլինի։ 9. Բույսերը կանոնավոր և հավասար չափով են ողտվում հողից։ 10. Բույսերը կանոնավոր կերպով են ողտվում արեգակի լուսավորությունից և շատ լավ են ծաղկում։ 11. Ողն ազատ կերպով ե մուտք գործում հողի մեջ, և բույսը շատ լավ և հասնում։ 12. Գիր խոտերի զեմ կորիվ մղելու գործը հեշտանում ե։ 13. Հնարավորություն և արվում, վոր կուլտուրական ձեերը գործադրվեն հողի յերեսը մշակելու (թորինել, չափայել) ժամանակ։ 14. Բույսերի քաղհանը, յերբ անհրաժեշտ ե, շատ և հեշտանում։ 15. Շարքային ցանքսն ապահովում և ավելի հաստատ բերք, տալով բացի այդ՝ բարձր հատկությամբ հատիկ։ Հասկն ու հատիկը խողոր են ստացվում, իսկ բերքը 15—20 փթով ավելի, քան ստացվում և ձեռքով ցանքածից։ 16. Շարքացանով կարելի յե ցանել նաև քամու ժամանակ։

## Ա Ն Ա Ս Ն Ա Բ Ո Ւ Խ Ծ Ո Ւ Ն

Մեր գյուղական տնտեսության ամենակարևոր հերթական խնդիրներից և անասնաբուծություն զարգացնելը և մեր՝ տեղականի անասունների լավացնելը,

ազնվացնելը։ Անասունների քանակը մեր հանրապետությունների մեջ համաշխարհային և քաղաքական կոփների ընթացքում բավականաչափ պակասել է։ Առանց անասնաբուծությունը բարձրացնելու, յավացընելու—արգյունավետ անտեսություն լինել չի կարող։

Յեթե յերկրագործության մեջ գյուղացու առաջդրված և սուր և անհետաձելի խնդիր՝ յերկու-յերեք հասկ ստանալ այնտեղ, որ առաջ մեկն եր բուսնում,— ապա անասնաբուծությունն ել պետք և ձգտի ստանալ շ վեցրո կաթ այնտեղից, այն կովից, վորից առաջ ստացված եր միայն մեկ կամ պակաս վեցրո կաթ։

Մեզ մաս շատ տեղերում, կարծես թե անասունը պահում են միայն աղը—աթար ստանալու համար, իսկ կաթ ստանալու և պարարտացման համար շատ քչերն են մտածում։ Իսկ այդ աննպատակ ե, և նույնիսկ միանգամայն թափակար։ Պետք և զործը դնել այնպես, վորպեսի առասունը ոպուտ տա։ Աղը ստանալու նպատակին ծառայող հին անասնաբուծությունը պետք և փոխարինել արգյունավետ, կաթնառատ անասնապահությամբ։ Փախարին տօրեկան 60 վեցրո կաթ ստանալու, պետք և ստանալ 120 և ավելի։ Այսպիս վոր վոչ թե տերը կերակրի կովին, այլ կովը կերակրի տիրոջը։

Կենդանու վրա պետք և նայել վորպես մի կենդանի մեքենայի վրա, վորի շնորհիվ կարելի յե վերամբշակել ափելի քիչ արժեք ունեցող անտեսության արդյունքն ավելի արժեքավոր արգյունքի, ինչպեսիներն են՝ կաթ, միս, և այլն։

Պետք և մեր տեղական անտառները պահել բազմացնել և լավացնել։ Յեթե նա ներկայումս քիչ ե-

արգյունք առլիս, այդ նրանից ե, վոր մինչև այսոր շատ քիչ ենք ուշադրություն դարձրել նրա վրա և չափազանց անփոյթ ենք յեկի գեղի կովի։

Մեր տեղական անտառներ, յեթե լավ պայմաններում պահվի և կերակրվի, յեկրտպական ազնիվ ցեղի կովի չափ առայ կաթ կըտա։

Բուսաստանումն ել նույն կարծիքին են, վոր իշրենց տեղական անտառներ լավ չե, և շարունակ աշխատում են ձեռք բերել յեկրտպական լավ ցեղի անտառներ։ Վերջիրս Մուկվայի մոտ մի կաթնառանտեսկան ձեռնարկություն պահում և բացառապես սուսադան տեսակի կովիր Յարութափի և Վաղիմիքի ցեղերց։ Այդ անասնաբությունը զրանցից տաշիկան միջին հաշվով ստանում ե 345 գույլ (վեցրո)կաթ։ Զկարծեք, վոր ամեն մի յեկրտպական ցեղ կարող ետակ արդքան շատ հաթե։ բացի այդ՝ մեր, ինչպես և սուսական կովիրի կաթնաբելի յուղալի յե, քան թե յեկրտպականինը։ Մեր կովի նույնբան կաթից ավելի շատ յուղ և սացգում։ Այդ բարորից հետո, մեր տեղական անտառն իր լավ առողջությամբ և զետի կերն ունեցած սակավ պահանջկոտությամբ ավելի յե ձեռնուու, քան յեկրտպականը։ Յեկրտպական անտառնը, ընկնելով մեր խիստ կլիմայական և պահելու կողմից վատ պայմանների մեջ շատ շուտ և մրում հիվանդանում առերերկուց յազրվ և կորցնում իր արժեքավոր հատկությունները։

Անասուն ընարելիս տեսակի վրա քիչ ուշադրություն պետք և գարձնել։ Գլխավոր ուշադրությունը պետք և կենարոնացնել նրա արգյունավետության վրա։

Բայց ինչից սկսել անասնապահության բարձրացման աշխատանքը:

Առաջին գործը պետք է լինի ձեռք քաշել կերպելու անշահավետ ձերից՝ առանց չափի և կշռի կերպարուց: Կերակրել կանոնավոր նորմայով: Նորմաների համաձայն կերակրելն ավելացնում է կաթի քանակը, բայց գրանից տերը տնտեսած կը լինի շատ կեր: Անասունի համար կանոնավոր և նոր ձեի սարքած մոռւրը նույնական նպաստում է կերի խնայելուն: Այդպիսի մոռւր ամեն մարդ հեշտությամբ ինքն ել կարող է շինել: Հաշվում ել վոր միայն այդպիսի մի մոռւրը ձմեռվա ընթացքում խնայում է 30 փութ չոր խոտ:

Կանոնավոր կերակրելու հետ միասին կենդանուն պետք է լավ խնամել:

Չեն ժամանակ անհրաժեշտ և կովերին պահել տաք զոմի մեջ: Յուրաք գոմում անասունն ավելորդ կեր և ուսումն վարը գործադրում և իր մարմինը տաքացնելու համար: Տաք պահել շինությունը կարելի յի տնական միջոցներով: Պետք և միայն իմանալ և հասկանալ վոր յիթե տաքությունը քիչ ե, քիչ ել կաթ կը լինի:

Հետո պետք է անասունի լավ սցնելուն անցնել: Բայց այստեղ մենակ վոչինչ չի կարելի անել: Պետք և կազմակերպել անասուններին աղնվացնելու, լավացնելու գործը կազմակերպող անասնապահական միություններ: Ինչ վոր հնարավոր չե մեկին, հնարավոր կը լինի միացյալ ուժերով գործողներին: Գյուղացիները կարող են և պետք և իրենց տեղերում ստեղծեն հասարակական, այսպիս կոչված՝ կոլեկտիվ բուժաներ: Այդպիսի բուժարաններ գոյություն ունեն հյու-

սխային մուսաստանում: Մեզ մոտ դեռ նախագծվում են: Բուժարաններ կազմակերպել կարելի յե շատ հասարակ կերպով: Ամբողջ հոտից ջոկում, հավաքում են լավագույն կովերը: Նրանց ցուցակագրում են հատուկ մատյանի մեջ: Այդպիսի կովերն ազատվում է տուրքից: Նրանց շատ լավ են կերակրում, զուգավորում են լավ ցուլով, ինկ ստացած սերունդը բաժանում են զյուղացիների մեջ:

Կերի լավացումը և անասունի խնամքը նույնական գյուղացիներից պահանջում է կազմակերպել, այսպիս կոչված՝ «վերանկիչ» միուրյուններ:

Վերև հիշված կազմակերպությունների վերաբերյալ պետք և դիմել գտվառակի գյուղատնտեսին և անպայման խորհրդակցել նրան հետ:

Կաթի և կաթնային մթերքները ծախելու համար անհրաժեշտ և ստեղծել կարնասիսեսական արտելներ: Առաջնիրում սպեկուլյանանները շատ եժան գնով գյուղացիներից գնում եյին կաթը և շատ թանգ գնով ծախում եյին քաղաքում: Այժմ գյուղացիներն այդ սխալը այլիս չպետք է կրկնեն: Այդ ոգուտը պետք է մնան գյուղացիներին՝ իրենց տնտեսության համար: Մեզ մոտ ևս սկսել են հիմնել արտելներ: Պետք և ամբողջ յերկիրն արտելների ցանցով պատել: Լավագույն որինակը կարող է ծառայել Միքիրի կաթնատնտեսական արտելները, վորոնց թիվը հազնում է մի քանի հազարի:

Մի խոսքով՝ մեր անասնապահությունը վերականգնելու գործը կախված է հենց ազգաբնակչության ինքնազգությունը: Խարկավոր և կազմակերպել ամբողջ զյուղացիներից, իսկ դա պիտի լինի վոչ քե լոկ խոս-

սկսեց Յեվրոպա ներմուծել միծ քանակությամբ եժան  
հացահատիկ: Յեվրոպական այդ ժողովուրդները չկա-  
րողացան մըցել ամերիկական եժան հացի հետ, վոր-  
տեղ հողը գեռ ուժասպառ չի յեղեւ հալից չի ընկել.  
Նրանց հարկավոր եր մի վորեն յելքը միջոց գտնել  
զուրս գալու այդ ծանր զրությունից: Յեվ նրանք գը-  
տան այդ ճանապարհը՝ իրանց ամբողջ ուշըն ու միտ-  
քը դարձրին իրենց անասնապահության զարգացման  
վրա: Հուկա յին զուրս բերում, վաճառում են վոչ թե  
հացահատիկներ, այլ անասունների տված արդյունքը:  
Բայց մենք վորտեղից վերցնենք անասունների համար  
կերակրային մթերքներ, միջոցներ: Չե վոր այժմ մե-  
զանում կերի շատ սուր կարիք ե զգացվում:

## ԱՆԱՍՆԱՊԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՅՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՑՈՒԹՅՈՒՆԻ

Հացն այժմ եժան ե: Գյուղացին իր ամրող ուշ-  
ժերը գործադրում սպառում ե հացահատիկների մք-  
շակեան վրա, իսկ ինչ ե ստանում զրա փոխարենց  
Գութանի կամ այլ տնային իրերի վրա բավականա-  
շատք ծախսում ե այդ հացահատիկից: Յեվ համար թուլանում են զյուղացու կուները, յերբ տեսնում ե,  
վոր իր տշխատանքը չի գնահատվում: Բայց գյուղա-  
ցին եժան հացից չպետք ե վախենա, այլ պետք ե  
գործի ընթացքն այնպես փոխի, վոր եժան հացից ոգու-  
վերդ, առաջ տանի իր անտեսությունը, զարգացնի և  
ամրացնի նրան, և վոչ թե մի կերպ, յուտ գնալով, կա-  
ռավարվի և ոզուս ստանա, վորով բարելավի իր  
կյանքը: Դրա համար նա պետք ե կերաշինի իր տնտե-  
սությունը նոր ձեռվ, վորտիսզի կարողանա առաջ զը-  
նալ և հիշք զնի վոչ միայն հացահատիկի արտադը-  
րությանը, այլ զիստվորապես անասուններից ստա-  
ցած արդյունքներին: Յեվրոպական մի շարք յերկրնե-  
րի զյուղացիության գործերը մի քանի առանձմյակ  
առաջ նույնպես վաս եյին ընթանում, յերբ Ամերիկան

## Վ Ո Չ Խ Ա Բ Ա Բ Ո Ւ Ծ Ո Ւ Խ Ա Խ Ա

Վոչխարը նույնպես անհրաժեշտ ե զյուղացու  
համար, ինչպես կովը, ձին և խոզը: Չե վոր զյուղա-  
ցին հազվագյուտ գեպքում ե մորթում խոշոր կենդա-  
նիներ: Վոչխարը զյուղացուն կերակրում ե, մա-  
տակարարում ե հազուստեղին և հագցնում ե վոտնա-  
մաններ: Նա մեզ համար արժեքավոր ե, վարովհետեւ  
նա գտնում ե կեր իր համար այնտեղ, վորտեղ ու-  
րիշների համար այդ կերը կըկորչի իզուր տեղը: որի-  
նակի համար՝ լեռան գեշերին, ստորոտներին, փոսե-  
րում ևայլն: Վոչխարը մինչև այսոր չի տվել զյու-  
ղացուն զգալի ոգուտ: Նրա կոշտ բրդի պահանջը չկար  
զործարաններում: Իսկ այժմ, յերբ բրդի գործվածքը  
և բուրդը չեն կարող ստանալ արտասահմանից, ինչ-  
պես այդ առաջ ելին ստանում, բրդի պահանջը բավա-

պայման ձեռքի տակ պետք և ունենալ մեծ քանակությամբ վոչխարներ և այդ հնարավոր և այն գեպքում, յերբ գյուղացիներն այդ գործում կըմիանան և միասին կաշխատեն: Դրանից հետո, յերբ եղ վոչխարները կըլավանան աճումով, բոյզի, պաղատվությամբ և բրդի վորակով, այն ժամանակ կարենի կըլինի լավացը ներ և հոտում պահի միմիայն լավ արու վոչխար, խոյ, իսկ մնացած արուներին կրտե, ապա եղ վոչխարները տատիճանաբար կըլավանան. ի հարկե, դրա հոտ միասին պետք և լավացնել կերը և խնամքը, նաև մոնավանդ յերբ ուշադրություն դարձի փոքր հասակից: Ի՞նչ պետք և անել մեր վոչխարը լավացնելու համար: Նա մանը և կենդանի քաշն մեկ և կես փթից մինչեւ Յ փութ, մեր վոչխարից ստացվում և Յ. ից Յ ֆունտ բուրդ: Ամենից առաջ պետք և նրան դարձնել խողոր: Դրա համար սերունդ ընտրելիս պետք և ջոկել խողոր մաքի և խոյ: Պետք և անողետք համարել այսպիսի վոչխարներին, վորոնք ունեն վորեն արատ: Փաքրիկ վոչխարին պետք և լավ կերակրել: Յերբ վոր հոտն իր մարմնով կըմեծանա, կամի, ապա պետք և ուշադրություն դարձնել նրա պտղավետության, բազմածնության վրա: Առհասարակ անպետք են համարվում այն վոչխարները, վորոնք շատ են բազմածին, վորովհետեւ շատ բազմածնությունից ստացվում և թույլ բուծում, նույնպես և քիչ պաղատվությունից, քանի վոր այդ ել շահավետ չե: Հետո անցնում են բրդի լավացմանը. աշխատում են ընտրել այնպիսի արտադրությի, վորի բուրդը լավ և և շատ: Խոյ ընտրելիս ան-

## Խ Ա Զ Ա Բ Ո Խ Ծ Ո Խ Ն Յ

Հարկավոր և լուրջ ուշադրություն դարձնել, և խողարուծության դարգացման վրա:

Խողարուծությամբ զբաղվելը շատ շահավետ և, վորովհետեւ խոզի միաը շուկայում շատ թանգ և զնահատվում: Վոչ մի անսուն չի տալիս այնքան շատ յեկամուած այն ել կարճ ժամանակամջջոցում, ինչպես խոզը: Խոզը բազմածին եւ նա կարող և տարեկան 2 անգամ ցնկնել և ամեն անգամին բերել վոչ պակաս 10 խոչգոր: Բացի գրանից խոզը շատակեր և, ուսումն ամին տեսակի կեր: Խնամելու տեսակետից պահանջեկու չե և շատ արագ չաղանում եւ: Խոզերին կարելի յե չաղացնել արոտներում: Ցեկրոպայում այդ ձեր բազմաշափ լայն տարածված եւ: Սակայն խոզերի բուլոր տեսակները շահավետ չեն բազմացնելու համար: Մեր տեղական կամ ոռւսական խոզեր բազմացնելը

նպատակ չունի: Նրանք չափից դուրս կեր են լափում, իսկ արգյունք քիչ են տալիս: Պետք ե բազմացնել զտարյուն անգլիական սպիտակ խողերը կամ հակառակ դեպքում՝ խանարյուն տեսակները:

## ԿԵՐԻ ԱՐՏԱԴԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեզանում անասնապահությունը դարձացնելու համար անհրաժեշտ ե ավելացնել կերի քանակությունը. զրա համար անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել մեր մարզագետիների բարելավման վրա, իսկ զինավորն ե՝ վերջ տալ անսիստեմ տնտեսությանն իր արոտային հարոսով և անցնել բազմացան սերմանափոխության, ցանելով կերակրային խոտեր և կերակրային արմատապուղներ, այսինքն՝ բույսեր, վորոնք մենք մշակում, աճեցնում ենք նրանց արմատների շնորհիվ, որինակ՝ բազուկ, գազար, կերակրային բողեր ժամանակին անսիստեմ տնտեսությունը զյուղացու աշխատանքը և ծախսը հանում եր լիովին, բայց այդ այն ժամանակն եր, յերբ բավականին շատ արտատեղեր և խոտնարքներ կային: Կամաց կամաց նրանք կրծատեցին, պակասեցին: Ցամաք հովիտները, զաերն անգամ սկսեցին վարել: Բնական ե, կերը քչացավ. սկսեցին ավելի քիչ թվով անասուններ պահել և նրանց վորակն ել վատացավ. աղբն ստացվում եր քիչ, հողն ուժասպառ յեղավ և շարունակում ե հետզհետե ուժասպառ լինել, և այդպիսով անսիստեմ տնտեսությունը դարձավ անբավարար, վնասակար:

## ՄԱՐԳԱԳԵՑԻՆՆԵՐԻ ԼԻՎԱՅՈՒՄԸ

Շատ անգամ տնտեսություններում պատահում են այնպիսի մարգագետիններ, վորոնք մի ժամանակ լով եյին, ժամանակի ընթացքում վատնում և մինչեւ անգամ համարյա տնտեսության համար անսպաքանում են, տալով շատ քիչ քանակությամբ խոտ:

Մարգագետինների վչանալուց խույս տալու համար պիտք ե կերակր հատկայալ կանոնները: Նախ և առաջ չպիտք ե նախիրն արածելու ուղարկել շատ վաղ գարնանը, վորովհետեւ անասունները վոտնատակ են տալիս, կոխուում են լով խոտերի քնքուրշ ծիլերը և, բացի այդ, ուղեկու ժամանակ բույսերն արմատով են հանում հողից: Հետո, արածելու միջոցին, յերբ վոր մարգագետինը գետ շատ և թաց ու խոնավ, անասունը, վատնատակ աւորով, պնդացնում է հողը, և վերջապես, վաղ գարնանն արածացները նպաստում ե մարգագետիններում թմբեր (ԿՕՎՔԻ) զոյնալրուն: Չի կարելի նորյնպես արածացներ անասունը մինչև ուշ աշունը, յերբ տեղում են հողդ անձրեներ և թուալ հնձելուց հետո չպիտք ե անմիջապիս անասունը մարգագետինի վրա թողնել, այլ պիտք ե մի յերկու շաբաթ սպասել մինչև վոր խոտն ամրանա, զորանա: Մարգագետինը պիտք ե հարել այն ժամանակ, յերբ լով պիտունի խոտերը կիսով չափ ծաղկաթափ լինեն: Մարգագետինը ուշ վարելու դիպում անպիտք, զիժ խոտերի սերմերը կը հասունանան, կը ցրին մարգագետինի վըրա, հետեյալ տարում կը ծին և այդպիսով ավելի եթ կը վչացնեն, կազրոտեն մարգագետինը:

Խոտնարքի ժամանակ չի կարելի ուշադրություն

չդարձնել գիտ խոտերի, թփերի, վրա, նրանց անհրաժեշտ և հատել, կտրել, վորպեազի նրանց սերմերը չաճեն:

Հետո զանազան պատճառներով մարգագետնի հողը հետզհետե պնդանում, նստում ե, մինչդեռ լավ մարգագետնի խոտերը, ինչպես և գաշտային բույսերը՝ ցորենը, վարսակը, հաճարը սիրում են փուխը, չընստած հող: Պնդացած հող ունեցող մարգագետիններում լավ խոտերը հետզհետե սկսում են այլասեռվել և վերջապես բոլորովին վոչնչանում են, տեղի տալով անպետք մոլախոտերին (բոշի, մամուռ, հայլն): Դրա համար անհրաժեշտ և յերբեմ-յերբեմ մարգագետինների հողը փխրունացնել, կամ ինչպես ասում են՝ անհրաժեշտ և թարմացնել ճիմը: Ճիմը թարմացնելը պետք է կատարել մարգագետինները փոցինելու միջոցով: Վերջապես, մարգագետինների աստիճանաբար վատթարացման պատճառներից մեկն ել կարող և լինել հողի ուժասպառ լինելը, հալից ընկնելը: Ամեն տարի մարգագետնից խոտի բերք հավաքելով, յերկրագործը հենց զբանով պակասեցնում և հողի միջի սննդարար նյութերի քանակը, ուրեմն և ուժասպառ և անում նրան: Իսկ ուժասպառ հողի մեջ, լավ ուտելի խոտերը վոչնչանում են և խեղզվում անպետք գիտ խոտերով: Այդ պատճառով մարգագետիններում անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ պարարտացնել հողը:

**ՃԻՄԻ ԹԱՐՄԱՑՈՒՄԸ:** Յեթե մարգագետնի վրա աճում են զանազան մոլախոտեր (ընձախոտ, ժանկախոտ կամ ծծուկ, մամուռ, հայլն) ապա մարգագետինը բարելավելու համար նախ և առաջ պետք ե մաք-

րել հեռացնել մամուռը և գիտ խոտերը, հետո փըխ-բացնել հողը:

Այդ նպատակի համար կան հատուկ մարգագետնի փոցիներ, բայց զրանք թանգ են, այդ պատճառով ել փոքր տնտեսություններում կարելի յե ոպտվել այդ նպատակի համար սովորական յերկաթե ատամնավոր փոցիներով: բանացնելու ժամանակ, յեթե կարիք լինի, լավ և փոցիների վրա գարսել քարեր:

### ՄԱՐԴԱԳԵՏՆԻ ԽՆԱՄՔԸ

Վորպեսպի մարգագետինները խոտի լավ բերք տան, պետք և զրանց վրա համապատասխան խնամք տանել: Այդ խնամքը կայանում և հետեյալում:—

1) Անասուններին չի կարելի վաղ գարնանը և աշնան արածացնել: յերբ հողը խոնավ և փափուկ և լինում: Թաց մարգագետնի վրա բաց թողած նախերը կոխուում և պատում և փափուկ ճիմը, զորեց փչանում և ճիմը և վոչնչանում են լավ խոտերը: Մարգագետնի վրա արածացնել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ մարգագետինը բավականին չորացած, ցամաքած և լինում:

2) Ամեն տարի գարնանն անհրաժեշտ և փոցինել մարգագետինը, վորպեսպի չպնդանա, և ողը կարողանա թափանցել հողի մեջ, դեպի բույսերի արմանները: Պետք և փոցինել գարնանը, հենց վոր հողը՝ 1—1 և կես վերշոկ խորությամբ կըհալվի և անապունը չի խրվի, չի թաղվի ցեխի: մեջ: Լավ կըլինի փոցինել մարգագետնի հատուկ փոցիներով, հակառակ դեպքում սովորական յերկաթյա փոցինով 4—5 հետք:

3) Փոցիսելու հետ միաժամանակ լավ կրթինի նաև մարդարացնել մարգագետինը, վորի հոմար նուխքան փոցիսելը շաղ են տալիս մարգագետինի յերեսին հանքային պարարտանյութեր՝ չոր, վոչ թթու թեթե հողունեցող մարգագետիների վրա «թումաս շակ» 8—12 փութ յուրաքանչյուր գեայտինին և պարանիզ» նույն քանակությունը. իսկ թթու ծանր հող ունեցող մարգագետինի վրա—«թումաս շակ» 8—12 փութ և կալիսնի աղ 4—6 փութ կամ ուղղակի մոխիր 40—60 գ. յուրաքանչյուր գեայտինին. Լավ և պարարտանյութերը շաղ տալ գարնանային առաջին փոցիսել հետա և ապա կրկին փոցիսել.

4) Յեթև մարգագետնի լավ խոտը նոսրանում և, նվազում և քիչ և մնում, կարելի կրթինի փոցիսելու ժամանակ ցանել յուրաքանչյուր գեայտինի վրա 20 գ. մարգագետնի խոտերի սերմ. Այդ ցանքուր լավ և կատարել խոտհարքից անմիջապես հետո և տեղի ու տեղը փոցիսել.

5) Անհրաժեշտ և մարգագետիններն իր ժամանակին հարել և թույլ չտալ վորը խոտը նշանակած ժամանակից ավելի յերկար մնա. Խոտն ուշ հարելու պատճառով մարգագետինները փշանում են, վորով հետև մոլախոտերը կարողանում են իրանց սերմերը հասունացնել, սերմնակալել և դրտնով բռնել, աղբուտել ամբողջ մարգագետինը. Զի կարելի մարգագետինը, ինչպես այդ հաճախ մեղ մոտ պատահում են, հարել զիժ թփերը թողնել առանց հարելու. Նրանք բազմանում են և փշացնում մարգագետինը. Ըստհակառակը, անհրաժեշտ և այնպիսի խոտեր, ինչպես թրթնջուկը եայլն, արմատահան անել և վոչնչացնել:

6. Անհրաժեշտ և վ. չ չացնել մարգագետինների թփերը, մամուռվ ծածկված թմբերը և խլողի բները: Թմբերը պետք և կտրել բահերով և այրել, իսկ մոխիրը շաղ տալ մարգագետնի վրա:

7. Վորպեսպի լրանից հետո այլևս թմբեր չգոյանան և մարգագետնի մակերևույթը հարթվի, փրխուռն և ճաճային հողերի վրա անսառւնն արածացնելուց հետո, հարկավոր և յուրաքանչյուր գարնանը մարգագետնի վրա գլորել ծանր հարթիչներ:

Այդպես գլորելու, հարթելու չնորհիվ, հողն ավելի լավ միանալով բռւյսերի արմատների հետ, բռւյսերն ավելի յեն ամրանում, ճյուղավորվում և ավելի արագ են աճում:

8. Յեթև մարգագետինը խիստ և ամրացել, ծածկվել և մամուռվ—մամուռկալել են, լավ խոտերը կերպանափոխվել են, այլասերպիվել են, այն ժամանակ հարկավոր և զիմել մարգագետնի հիմնական բարեկավման: Արվում են գա այսպիս՝ աշնանը հերկում են, մարգագետինն այնպիսի գութանով, վոր լավ կարողանա շուռ տալ հողաշերտը: Գարնանն այդ հողաշերտը ամրացընում են սկզբում «Ռիանդալի» փոցիսով և ապա փոցիսում են սովորական փոցիսով: Տափանելուց հետո մարգագետինը պարարտացնում են հանքային նյութերով, ինչպես ասվել և վերեսում, իսկ պարարտացնելուց մի յերկու շաբաթ հետո ցանում են վիճը՝ վարսակի հետ կամ կտավհատ: Այսպիս են վարվում 2—3 տարի շաբանակ, մինչև վոր մարգագետնի ճիմերը կըլուծվեն և կըքայքայվեն, վորից հետո նորից ցանում են վարսակի հետ խառնած այլ խոտերի սերմեր: Յեթև այսպիսի արմատական բարեկավումը կատային, արմատահան անել և վոչնչացնել:

տարգի աստիճանաբար, բաժանելով մարդագետինը  
մասերի և բարելավելով նրանց մեջը մյուսի հետեւից,  
այն ժամանակ աննկատելի կերպով կարելի յի ամ-  
բողջ մարդագետինը բարելավել, պիտանի գարձնել:

## ՓՈԲՉԸ ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

Գյուղատեսությունը՝ այն զիտությունն ե, վո-  
րը սովորեցնում ե գյուղական տնտեսությունը կանո-  
նավոր կերպով ղեկավարել և միշտ ճանապարհով  
տաներ

Գիտությունը հնարովի չպիտի լինի, այլ հիմ-  
նը ված լինի սուույգ գիտելիքների վրա: Իսկ զիտելիք-  
ներն ել իրենց հերթին հիմնված պիտի և լինեն փորձե-  
րի վրա:

Սակայն մեղ կարող են տռարկել թի ապա ել  
ինչու համար և պետք գյուղատնտեսությունը, քանի  
վոր ամեն մի հողագործ ել ունի իր սեփական փորձը:  
Այս հենց զրա համար ել հարկավոր ե գյուղատնտե-  
սական գիտությունը, վորովհետև միայն իր փորձով  
հողագործը հեռու չի կարող զնալ: Անհրաժեշտ ե ու-  
նենալ հազարավոր փորձեր, վորոնք կատարված լի-  
նեն հողի զանազան պայմաններում, յեղանակի և  
տվյալ տնտեսության ուրիշ առանձնահատկություն-  
ների վրա: Միմիայն այդ դեպքում ե, վոր կարելի յի  
դատել գյուղատնտեսության տվյալների անսխալա-  
կանության մասին, յերկրագործության այս կամ այն  
ձեի վերաբերյալ: Սոյզպիսի փորձը մի մարդու ուժե-  
րից վեր ե: Ի հարկե, իր փորձի մեջ խորը թափան-  
ցած հողագործը, իր յերկարամյա դիտողություննե-

րից կարող ե իր տնտեսության մեջ վորոշ զրական  
հետեւանքների հասնել: Բայց հետեւանքները կըլինեն  
նրա անձնական պրակտիկան (գործնականությունը)  
ընդորինակած տվյալ տնտեսությունից: Բավական և  
այդպիսի պրակտիկ հողագործին փոխել մի այլ տեղ  
և նրա ամրող կենցաղը, սովորությունները կանգնետ-  
քանան և միայն վնասակար կերպով կանգրադառնան  
աշխատանքի վրա: Այդ բանը լավ են փորձել իրենց  
վրա այն գյուղացի՝ գաղթականները, վորոնք տեղա-  
փորվել են իրենց առաջգա կիմայական պայմաննե-  
րին հակառակ վայրերում: Ակզենտան շրջանում շատ  
ցավ ու վաս կըպատճառի այդ տեղափոխվողներին  
իրենց անձնական փորձը և նախկին պրակտիկան:  
Նույնիսկ անձնական փորձը միշտ ել փրկիշ չի հան-  
դիսանում, անգամ իր հին բնակավայրում: Կարող են  
կիմայական պայմանները մեկից մեկ խմստ փոփոխ-  
վել. որինակ՝ կարող ե յերաշտ լինել և յեղած պրակ-  
տիկան անկարող կըլինի պատասխան տաք յելք չի  
գտնի, վորովհետեւ նպ հարմարեցված եր լոկ-սովորա-  
կան միջակ յեղանակների պայմաններին: Վերջապես,  
վոչ մի անձնական պրակտիկա չի կարող ոգնել այն-  
տեղ, վորտեղ փորձը վերաբերվում ե նոր, ամելի ար-  
դյունավետ գյուղական տնտեսության ձևերին. որի-  
նակ՝ անսխատեմ տնտեսության փոխարին բազմազաշ-  
յանին անցնելը, կատարելագործված գործիքների և  
մեքենաների կիրառումը, արհեստական պարարտացու-  
մը, նոր բույսերի կուլտուրա, մշակման նոր տեսակ-  
ներ առաջ բերելու հայն, եայն: Իսկ այնինչ այդպիշ-  
ու շատ նորություններից և նորմուծումներից չի կա-  
րելի հրաժարվել հակառակ ղեպքում մեղ բոլորովին,

զերջնականապես կը ճնշեն, կը նկացնեն ավելի առաջադիմ և յեռանդու, ձեռնարկող յեվրոպական ժողովուրդները:

Այս հենց այստեղ ե, վոր գյուղատնտեսությունը առաջ ե գալիս հողագործին ոգնելու: Նա տալիս ե ստույդ և պարզ պատասխաններ տնտեսությունը բարեկավելու գործի մասին: Գյուղատնտեսության ոգնությամբ հողագործն ազատվում ե իր անձնական փորձի դանդաղ և կույր ուղիով զնալու անհրաժեշտությունից: Բայց հարց ե ծագում, ինչպէս կարող ե գյուղատնտեսությունը վստահացնել թե իր տված խորհուրդները կարեոր են: Զե՞ վոր ամենքն ել գիտեն և տեսնում են, վոր գյուղատնտեսները հազիվ են պարագում գյուղական տնտեսությամբ: Ունենալում են իրենց ագարակը, նրանք մեծ մասամբ շրջում են և սովորեցնում: Բայց գյուղատնտեսները սովորեցնում են այն, ինչ վոր իրանց են սովորեցնում փորձնական կայանները, փորձնական դաշտեր և այլ փորձնական հիմնարկությունները: Գյուղատնտեսները հանդիսանում են միջնորդներ փորձնական հիմնարկների և ազգաբնակչության միջև: Իսկ փորձնական հիմնարկները տալիս են գյուղատնտեսներին ճշտություն, պարզություն և վստահություն դեպի այն գիտելիքները, ինչ վոր անհրաժշտ և տնտեսությունը բարելավելու համար: Փորձնական հիմնարկները փորձերը վոչ թե կուրորեն են կատարում, այլ գիտակցաբար, առաջադրելով իրենց համար վորոշ նպատակներ, վորոշ հարցերին պատասխան ստանալու համար:

Փորձերն այստեղ կատարվում են խնամքով, ուսումնասիրելով հողի բոլոր պայմանները, յեղանակը,

բույսերի և կենդանիների բնությունը և այլ պատճառները, վորոնք կարող են ազդել վորձի համեսնքների այս կամ այն կողմի վրա:

Փորձերն այնտեղ կատարվում են յերկար տարիների ընթացքում և ստուգվում են հարկան փորձնական հիմնարկներում, վորպեսզի պարզեն այն ըջանը, վորակեղ կարելի յետարածել փորձի միջոցով ստացած այս կամ այն յիշրակացությունը: Բայց վրանից փորձնական հիմնարկներից ստացած բարօր հետեւանքները նախորդ ստուգվում են գյուղացիների գաշտում կատարած բազմաթիվ փորձերի ոգնությումբ, և միայն դրանից հետո գյուղատնտեսների համարձակությունը համարձակություն և ունենում վերցնել իր վրա այս կամ այն նորությունները գյուղական տնտեսության մեջ մտցընելու:

Այդպիսով, փորձնական հիմնարկներ հանդիսանում են գյուղատնտեսների գիտելիքների աղբյուր: Յեկայդ աղբյուրներից գյուղատնտեսների միաբը գյուղատնտեսների և գրականության միջոցով կերպարում ե, սնուցանում և ժողովրդին:

Դրանում և կայանում փորձնական հիմնարկների ամբողջ խոշոր նշանակությունը գյուղական տնտեսության համար:

Փորձի վրա յի հիմնված գյուղատնտեսների գիտությունը: Ուսադիր դիտե՛մ յեկայդ փորձանական հիմնարկների ձայնը՝ նրանցից ե, ինչպես կենդանի աղբյուրներից, սնուցանում ամբողջ յերկրագործությունը:

Անցե՛մ փորձերին: Փորձի լուսագույն ստուգիչն ե: Գյուղատնտեսների գիտությունն առաջ և զբանում վոչ միայն գյուղատնտեսների փորձնական

հիմարկների աշխատանքներով, այլի գյուղացիական պրակտիկայով:

## ՏՐԱԿՏՈՐԻ ԶԱՅԻՆ

Տրակտորը՝ քաշելու և ծանր բեռներ փոխադրելու համար մի մեքենա յի: «Տրակտոր» խոսքը լատիներեն և և նշանակում են «այն, ով վոր քաշում ե»:

Տրակտորները լինում են գազի, շոգու և ելեքտրական: Ելեքտրական տրակտորները մեզ մոտ գես ևս շատ քիչ են փորձված: Նա գործադրվում ե և հարմարեցված ե միայն անյտեղ, վորտեղ կա եժան ելեքտրական եներգիա: Շոգու տրակտորներն աշխատում են շոգեմեքենայով՝ կամ լոկոմորիլով, վորը գործադրվում ե տնտեսության մեջ, կալսելու համար: Շոգու տրակտորները մեծածավալ են, աշխատանքի համար պահանջում են շատ վառելիք և ջուր, վարելու համար առանձին հարմարություններ չունեն. ընդհանրապես շատ քիչ են հարմար և զրա համար ել չեն տարածված:

Ներկայումս ամենից շատ տարածված են գազի տրակտորները, ներքին այրելու շարժիչով, ինչպես ավտոմոբիլինը. Դրանք աշխատում են նավթով, ոև մազութով, մի քանիսն ել՝ բենզինով, բայց նավթինն ամենից հարմարն ե և գյուղի համար հասարակ: Բենզինը գործադրվում ե և նավթի շարժիչով (ուժկալով), բայց միայն տրակտորը բան գցելու

ժամանակ, առաջին 5 րոպեն, վորից հետո աշխատանքը տարվում է նավթով:

Տրակտորից շղթայով կապում են գութաններ, տափաններ—շարքացաններ, հարթիչներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, նայտ պահանջին, վորոնց նա քաշում է իր հետևից:

Սակայն տրակտորով կարելի յի վոչ միայն վարել և դաշտային այլ աշխատանքներ կատարել, այլի կարելի յի նաև կալսել շարժել զանազան մեքենաներ և լնդհանրապես գործադրել տնտեսության մեջ վորապես շարժիչ: Ըստ վորում տրակտորը տեղում՝ և տեղավրավում, իսկ նրա փոկագնաց անիվի (Ճախարականիվ) վրա հազցնում են փոկ, վորը միանում ե վորեւ մեքենայի հետ—կալսելու, ջրաղացի, բնոցու, ևայլն մեքենաները աշխատեցնելու համար:

Տրակտորներն ունենում են զանազան ույժ՝ 10-ից՝ 80 ձիու ույժ, բայց ամենից շատ գործադրվում 20—30 ձիու ուժանոց տրակտորները:

Ըստ շինվածքի՝ տրակտորները լինում են անիվալոր և «թրթուուի», վորն անիվների փոխարեն ունենում ե թրթուուներ, ինչպես պատերազմական «տանկերը»:

Անիվալոր տրակտորներն ավելի շարժուն են և դրա համար հարմար են շուռ գալիս: «Թրթուուի» տրակտորներն անշնորք և ծանրաշարժ են, բայց հարմար են ճահճուտ և ամուր հողերի համար: Չնայած իր մեծածավալ լինելուն և անձոռնի տեսքին և ծանրությանը (կշիռ), զրանք, շնորհիվ լավ թրթուուների, հողի վրա և անգամ քիչ են ճնշում գործում, քանի թի ձին,

և գրա համար աղատ անցնում են այնպիսի խօնավ մարդագետիների վրայակ, վարտեղ ձին թաղվում, իլը վում և Զսի վրա աշխատելիս տրակտորին հարմարեցնում են առանձին կեռ ձող (սայլակներ):

Սակայն նորագույն սիստեմի անփափոր տրակտորներն այնքան ել ծանր չեն: Տրակտորի կշիռը, վոր հավասար և միջին հաշվով մեկ խոփանի գութանի քաշելուն, միջին թվով հավասար և մեկ ձիու քաշի Այդպիսի 20 ձիու ուժ ունեցող Ձորձումի տրակտորը կշռում և ընդամենը 72 փութ, այդ տրակտորի քաշած յերեք խոփանի գութանի հաշվով կազմուա և մեկ խոփանի գութանի միջին քաշը 36 փութ, իսկ միջին հաշվով ձիու քաշը հավասար և 25—40 փթի:

Տրակտորի աշխատանքների արտազրությունը կախված և նրա ուժից և նրանով աշխատող գործիքի լայնությունից և աշխատանքի զժվարությունից, նայած թե քանի խոփանի գութան և Պակաս դորեզություն, 20—25 ուժ ունեցող տրակտորին՝ լծում են սովորաբար յերկու կամ յերեք խոփանի գութան, այն ժամանակ դրանց արտազրողականությունը 3 և կեսից 4 փերշոկ խորության հող վարելիս՝ հավասար և լինում 10 ժամվա բանվորական որվա, և 2—3 դեյտինի: Մեծ ույժ ունեցող 75—80 ուժով տրակտորները կարող են քաշել—տանել իրենց յետելից 6—8 խոփանի գութաններ և այդ ժամանակ դրանց արտազրությունը հասնում է որեկան 6—8 դեյտինի, 20 ուժանոց տրակտորը և նրա լծած տափանները մինչև 3 մետր լայնություն վերցնելիս, որական տափանում և մինչև 13 դեյտին: Շարքացանով 2 մետր լայնու-

թյուն վերցնելիս ցանում և մոտավորապես 8 դեյտին, և այլն:

Վառելիքի ծախսը (տրակտորը յուղելիս, և այլն), ըստ տվյալների՝ մոտավորապես հավասար և հետեւյալին:

20—25 ձիու ույժով տրակտորով 3—4 փերշ. խորությամբ վարելիս մի դեյտիատինին գնում և 1 փութ 20 ֆ., 1 ֆ. 30 ֆ. նավթ, բենզին վառելու համար մոտարորապես 2 փունտ, բսելու յուղ 4—8 փունտ: Հնձելիս մի դեյտիատինին նավթ քիչ և գնում, մինչև 30 փունտ:

20 ձիու ուժանոց տրակտորի աշխատանքի արժեքը, յեթե հաշվինք մեկ վարը, և նկատի առնելով բոլոր ծախսերը՝ վառելիքը, տրակտորի քշողի պահելը, մեքենայի արժեքը, հանգստելը, և այլն նստում և որեկան 7—8 ս. և շատ անգամ նստում և ավելի թանգ, քան թե ձիով կամ յեղով վարելիս: Տրակտորի աշխատանքի վորակը նույնպես լավ չե ձիուց: Սակայն այստեղից չպետք է յերրակացնել վոր տրակտորն իր ծախսը չի հանում:

Տրակտորը գնահատելի յե նրանով, վոր նրա ոգնությամբ կարելի յե այնպիսի աշխատանք կատարել, վոր սովորական միջոցներով չի կարելի, որինակ՝ խոմ հողի մեծ տարածությամբ վարելը: Բացի դրանից, տրակտորը հեշտացնում և տրակտացնում է աշխատանքն ու ընդհանրապես փոխում է աշխատանքի գործադրույան հնարակարգությունը՝ տեսեաւթյան մեջ: Կատարելով մի տեղ զժվար աշխատանք, նա աղստ և թողնում ձիերին, յեզներին վարոնք կարող են այդ ժամանակ կատարել վորնե այլ աշխատանք, և այլն: Տրակտորը հաճախ

փոխում և հողագործության ձևերը, ընդունակ դարձ։  
Նելով տնտեսությունները միացած զեկավարելու։

Պետք է նկատի առնել վոր տրակտորը, ինչպիս և ամեն մի մեջենա, նրա համար ե, վորպեսզի իրեն ծախսը հանի, պիտի ե նրան ոգտագործել ամբողջապես յեվ բազմապիսի կերպով։ Իսկ ոգտագործել տրակտորը միայն վարելու համար՝ դա քիչ ե։

Վարելուց հետո տրակտորի ուժկալը պետք է ոգտագործել ուրիշ տնտեսական աշխատանքների համար՝ հնձելու, կալսելու, յուղագործարանի, թե՛ո տեղափոխելու, ձմեռը ջրաղացների ելեքտրական լուսավորության, մեքենաներն աշխատեցնելու համար, հայլն, հայլն։

Միմիայն այն ժամանակ տրակտորը կուտագործվի այնպիս, ինչպիս հարկն և և կտա տնտեսությանն այն ամբողջ ոգուաշը, ինչ վոր նրանից սպասվում ե, Ամերիկայում վարը, տափանելը յեվ ցանելը կատարվում են միանգամից։ Թեթև տիպի, 20—30 ձիու ուժանոց տրակտորն արժե 2000—4000 ռուբլի, ավելի ուժեղ տրակտորներն արժեն ավելի թանգ, մինչև 10 հազար ռուբլի և ավելի։

Մեծ մասամբ տրակտորները բերվում են Ամերիկայից, վորտեղ նրանք ամենից եժան են։ Հետո բերվում են Գերմանիայից, Խոտալիայից և ուրիշ տեղերից։

Վերջին ժամանակներում սկսել են նաև տրակտորներ պատրաստել Ծովասատանի գործարաններում։ Մակայն ուստական արտադրությունը գեռ մեծ քանակությամբ չի արտադրում և ուստական տրակտորները թանգ են նստում, քան թե արտասահմանին։

Վորովնետե տրակտորը չափագանց թանգարժեք

ե, առանձին տնտեսությունները միայնակ հնարավորություն չունեն ձեռք բերելու։

Ահա թե ինչու կանոնավոր կը լինի, վորպեսզի տրակտորները ձեռք բերվեն մեքենայական ընկերությունների կամ այլ կոռպերատիվ կազմակերպությունների միջոցով, վորպեսզի տրամադրվին մասնավոր տնտեսություններին, զանազան ընկերություններին և առանձին տնտեսներին։

Գյուղացիական ընկերությունները «զյուղատընտեսական միությունից» տրակտորներ վնելիս «զյուղական տնտեսական պահեստից» բաց են ֆողնում ապառիկ 2—3 տարում վճարելու պայմանով։

Ներկայումս ամենաշատ գործածվող տրակտորներն են անիվավոր տրակտորները, վորոնք աշխատում են նավով, դրանք են՝ «Ֆորձոն» Ամերիկական ֆորդ գործարանի, փոկավոր, 20 ուժանոց և 72 փթանոց, յերեք խոփանի գութանով, 3 և կեսից 4 վերջոկ խորությամբ աշխատող, մի բանվորական որում 10 ժամի հաշվով վարում ե 2—2 և կես դեսյատին։ Մի դեսյատին վարի համար ծախսվում ե 1 և կես փ. նավթ, քենզին վառելու համար կեսից մինչև 2 ֆունտ, արժեքը գութանի և պաշարի մասերի հետ միասին 2000 ռուբլի։ Ծառայության ժամկետը 4—5 տարի յի կան տրակտորներ՝ «Խնտերնացիոնալ» Գեյս, Ոլոյու

Ամենաոգտակար մեքենան—ելեկտրականն է: Նա շատ եժան է, հեշտությամբ և աեղափսիվում: Յեզրոպայի և Բուռաստանի տուադիմ գյուղացիական տնտեսություններն արդեն շատ վաղուց են հանկացել ելեկտրականության նշանակությունը և նրան գործադրում են ժամանակակից տնտեսության բոլոր ճյուղերում: Գերմանիայում, Շվեյցարիայում, Դանիայում և այլ պետությունների մեջ ելեկտրականությունը լուսավորում և գյուղերը, շարժում՝ ջրաղացներ, գութաններ, յուղագործական գործարաններ ենին, ևայն:

Յերկիրը յենթարկել ելեկտրոֆիկացիայի—նշանակում և փոխարինել ձեռքի, ձիու և այլ աշխատանքները ելեկտրական հներգիայով, ույժով, ելեկտրականությամբ շարժել յերկրագործի գութանը, շարժել գործարանների մեքենաները, գործիքները, «գազգահները»: Ելեկտրականությամբ լուսավորվում և գյուղը, ևայն:

Յենթարկել ելեկտրոֆիկացիայի խորհուրդների յերկիրը—նշանակում և առաջ տանել սոցիալիստական արտագրությունը, բարձրացնել տեխնիկան, ամրացնել մեր Հռոմեական Սոցիալիստական հեղափոխությունը տեխնիքական հեղափոխությամբ:

Յենթարկել խորհուրդների յերկիրը յելեկտրոֆիկացիայի նշանակում և վարարած գետերի ջրի ուժը ոգտագործել, դարձնել ելեկտրական հներգիա գյուղի և քաղաքի բնակչության համար:

## ԵԼԵՔՏՐՈՖԻԿԱՑԻԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղացուն գեռ քիչ եանսիստեմ տնտեսից բազմաշղաշտին անցնելը, նա պիտք ե ավելի լավ մշակի հողը, վարպեսզի լավ բերք ստանա: Դրա համար անհրաժեշտ է հողի մշակման համար ունենալ բավարար գործիքներ և այլ գյուղատեսական մեքենաներ:

Խորհրդային իշխանությունը հաշվում է, վոր յերկրի ելեկտրոֆիկացիան և միայն կարող բարձրացնել և ամրացնել գյուղական տնտեսությունը, և հանձնարարի և զիտնական ճարտարագետներին և տնտեսագետներին մշակել գյուղատնտեսական ելեկտրոֆիկացիայի նախագիծը: Այդ համագծով՝ 10—15 տարվա ընթացքում ԽՍՀՄ-ը պիտք ե ծածկվի ելեկտրական կայարանների ցանցով: Բացի զրանից՝ բանվորագյուղացիական կառավարությունը նպաստում է տեղական նշանակություն ունեցող մանր ելեկտրական կայանների զարգացմանը և գյուղացիներին բացարձում և այդպիսի ելեկտրական կայանների կառուցման սպուտը: Ելեկտրական հներգիայի գործադրությունը գյուղական տնտեսության մեջ շատ մեծ ոգուտներ և ըստեղծում գյուղացիական տնտեսության համար, վորովհետեւ հեշտացնում ե մարդկային աշխատանքը, ուրիշ խոսքով՝ կրծատում է բանվոր անասունի պահանջը և նպաստում է գյուղական տնտեսության բարգավաճմանը:

Ելեկտրականության ոգնությամբ կարելի յե մը-

շակել հողը: Ելեքտրականությունը կարող է ծառայել տան, ախոռի և գոմի լուսավորության համար, կալսեգու համար: Կարելի յէ գործադրել տնայնագործական արհեստներում, գյուղատնտեսական արդյունքները վերամշակելիս, ջրաղացներում, ջրային պարենավորման և աներում ել՝ տնային պետքերի համար:

Ելեքտրականությունը պակասեցնում է գյուղացու աշխատանքի ժամի քանակը: Գյուղացին ավելի ազատ ժամանակ և հնարավորություն կունենա նվիրվել ինքնաղաբացման, հասարակական և այլ աշխատանքների մասնակցելուն: Հեռախոսի ոգնությամբ գյուղը սերտորեն կըմիանա քաղաքին: Ելեքտրոֆիլացիայի նշանակութան վերաբերյալ կըբերենք մի քանի կարճ որինակներ:

Տեինիկայի զարգացումը հնարավորություն տըշվեց ելեքտրականությունը գործադրել նաև հողի մըշակման համար: Գործիքները կոչվում են՝ ելեկտրոգուրաներ: Ելեքտրոգուրանը փոխարինում է բանվորանումին: Ելեքտրոգուրանը հնարավորություն է տալիս խոր վար կատարել, այնինչ անասունները դըրահամար անպետք են: Ելեքտրոգուրանի ոգնությամբ կարելի յէ վարել մի դիստինք մեկ ժամվա թերացեում 4-8 վերօնկի խորությամբ:

Կալսելու համար գործադրում են ելեկտրական կալսելու մեթենաներ: Մրանք այլ տեսակի կալսելու մեքենաներից շատ ովտավեա են: Մեքենան շատ ել ծանր չե և սիանգամայն անվտանգ է հրդեհի կողմից: Ելեքտրական կալսելու մեքենան (25 ձիու ուժանոց) մեկ ժամում կախում է 100 փուր հատիկ: Մեկ անգը ձիու կալսելու մեքենայով կախում է մեկ ժամում 4 փութ

հատիկ և մի բանվորը՝ ցորենի թմբիչով կախում է մեկ ժամում մեկ փութ հատիկ: Ելեքտրական կալսելու մեքենան կորցնում է 100 փութ կախած հատիկից 3փութ, ձիու կալսելու մեքենայի կորուսալ 100 փութ հատիկից 8 փութ ե, իսկ ցորենի թմբիչով կորչում է 100 փութ հատիկից 15 փութ: Ելեքտրական կալսելու մեքենան արագ և աշխատում ձիու և ձեռքի մեքենաներից և անտեսության մեջ հատիկ 2-5 անգամ պակաս ե կորցնում, քան ուրիշ մեքենաները. Նրա աշխատանքը շատ եժան և նստում:

Գյուղացին կարող է իր տնահասության մեջ կառուցել մի փոքրիկ ջրաղաց, վորը կաշխատի ելեքտրական ուժակալի ոգնությամբ. Այդպիսի ջրաղացը գյուղացու համար շատ մեծ հարմարություններ ե ստեղծում մանավանդ այն ժամանակ, յերբ աղալու համար հեռու տեղ պիտի գնա: Մի ժամում տնային ելեքտրական ջրաղացը (ալրաղաց) կարող է աղալ 25 փուր մաներ ալյուր և 40 փուր ել խուռոր ալյուր:

Կարնատեսեսության և բոշաբուծության մեջ նույնպես գործադրվում են ելեքտրական գործիքները: Ցեղորպայում շատ և տարածված ելեքտրական կթելու գործիքը, վորի ոգնությամբ կթում են կովերին: Ելեքտրականությունը գործադրվում է կաթից յուղ և պանիր ստանալու համար:

Ելեքտրականությունը գործադրվում է նույնպես արհեստական ճուտեր հանելու համար, հնարավորություն և տալիս տարվա բոլոր յեղանակներին ճուտեր հանելու: Ելեքտրական եներգիայի արժեքը շատ մեծ չե: Ճուտեր գուրս բերելու ամբողջ ժամանակը ձուն նստում ե յերկու կոպեկ: Յեղ այսպես շատ որինակներ կարելի յէ

Գյուղատնեսետության բարձրացման ուղիները 4

բերել ելեքտրոֆիկացիայի կարեռը նշանակությունն ապացուցելու համար: Ելեքտրոֆիկացիան պետք է գյուղական լայն մասսաներին հնարավորություն տառ ոգտվելու լույսից և ելեքտրական եներգիայից, և հենց գրանով բարձրացնի, ամրացնի գյուղական տնտեսությունը, արդյունաբերությունը՝ տանելով ժողովրդական տնտեսությունը դեպի սոցիալիզմ: Ելեքտրականությունը պետք է միացնի, մոտեցնի գյուղացիությանը և բանվոր դաստկարգին: Միայն բարձրացնելով գյուղացիական նետեսուրյունը, մենք կրբարելավենք բանվորների դրությունը:

Մեր՝ Հայաստանի Հանրապետության մեջ կառուցվում կամ կառուցվելու յեն հետեւյալ հիդրոկայանները (ջրի ուժով աշխատող).—

Յերեանում—քաղաքի և գավառի վորոշ շրջաններին ելեքտրական եներգիա տալու համար, Զանգու գետի վրա արդեն կառուցվել է 5000 ձիու ուժ ունեցող ջրահելեքտրոկայան:

Լենինականում—քաղաքի և նրա վորոշ շրջաններին ելեքտրական եներգիա տալու համար, քաղաքից գումար, Ղանլիջա գյուղի մոտ Շիրջրանցքի ջրի մի մասը ոգտագործելու յեն հիդրոկայանն աշխատեցնելու համար: Այդ կայանն արդեն շինվում է: Ջրա եներգիան ոգտագործվելու յե, նորակառույց Մանվածքային գործարանն աշխատեցնելու համար:

Իջևանում—Իջևանի և Դիլիջանի շրջանների կարիքները բավարարելու համար Աղմբափինկա գետի վրա կառուցվում է 1500 ձիու ուժ ունեցող հիդրոկայան:

Բացի սրանցից, նախագիծ և մշակվել ապագա-

յում Քոլագերանի մոտ շինելու 25,000 ձիու ուժ ունեցող ջրահելեքտրոկայան:

### ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վորպեսդի բարելավվի և, ինչպես հարկն ե, տընտեսությունը առաջ տարվի, գյուղացիներին անհրաժեշտ ե գիտություն և լուսավորություն: Զի կարելի շարունակ հին դրությամբ մնալ, կարծելով, վոր մենք ամեն բան գիտենք, կարիք չկա սովորելու, կապրենք՝ ինչպես մեր հայրերն ու պապերն են ապրել: Կյանքը փոխվում է, առաջ և գնում, փոխվում են տնտեսության պայմանները և դրա հետ միասին փոխվում են նաև տընտեսությունը զեկավարելու ձեռքը: Նոր պայմաններում պետք է իմանալ, թե ինչպես վարել տնտեսությունը նոր ձեռք, իսկ դրա համար պետք է ունենալ վոչ միայն տնտեսության վերաբերյալ գիտություն, այլ ընդհանրապես՝ լինել կրթված, լուսավորված մարդ:

Միմիայն այն տնտեսը կըկարողանա կանոնավոր տնտեսություն վարել, վորն ընթանում է կյանքի և ժամանակի հետ, և նա միայն կարող է հասկանալ իմանալ այն ամենը, ինչ վոր տեղի յե ունենում իր շուրջը:

Լավ, կրթված տնտեսը կարող է իմանալ իրեն շրջապատող պայմանները, իմանալ, թե վորտեղ և ինչպես պետք է ոգնություն գտնի իր տնտեսությունը բարելավելու գործում, ինչպիսի կազմակերպություններ կան դրա համար, վորտեղից կարող է ձեռք բերել լավացրած սերմեր, մեքենաներ, և այլն: Կրթված տնտեսը յերբեք չի շփոթվի, գլուխ չի կորցնի և ա-

մեն դրությունից յելք կըդանի իր համար։ Հետ մնացած, խավարամիտ մարդը թե իրեն և թե իր տնտեսությանը շարունակ խանգարում է և վնասում։

Ահա թե ինչու տնտեսությունը բարելավելու համար առաջին յեվ ամենից կարելոր հիմքը հանդիսանում է տնտեսների գրագիտուրյունը յեվ լուսավորուրյունը։

Ամեն տեսակի լուսավորությունն ել անհրաժեշտ է, — թե գյուղատնտեսական, թե հասարակական - քաղաքագիտական և թե յերկուսը միասին, իզուր չե Լենինը ասել, թե «քաղաքագիտական լուսավորուրյան արդյունքներով կարելի յէ չափել միայն բարելաված տնտեսուրյուն»։

Եեվ իզուր չե Խորհրդային իշխանությունն այժմ ամեն տեղ աշխատում հասկացնել հանրապետության բոլոր քաղաքացիներին թե ընդհանուր և թե գյուղատնտեսական անգրագիտությանը վերջ տալու անհրաժեշտությունը։

Բարելավել յերկրի գյուղական տնտեսությունը և բարձրացնել աշխատանքի արտադրությունը կարելի յե միայն բարձրացնելով մեր ընդհանուր քաղաքակրթությունը՝ լուսավորության հիմունքներով։

## ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՓՈԽԱՄԱՐԶ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ

Լուսավորությունից հետո տնտեսությունը բարելավելու համար 2-րդ տեղը բոնում է ինքնագործունեյությունը, կենսունակ աշալը ջությունը, հենց իրենց դյուղացի տնտեսների ձեռնարկության վոզին և յեռանդը։

Գյուղացի տնտեսները չպետք է յենթագրեն և սպասեն, վոր ահա հանկարծակի կփոխվի ամեն բան և կըլավանա, վոր բոլոր դժվարությունները կըվերանան և կյանքը կըդառնա հեշտ և առանց հոգսի ծիշտ ե, կան գյուղական տնտեսությանն ոգնող զանազան միջոցներ՝ հասարակական և պետական։ Գյուղական ազգաբնակչության այդպիսի ոգնության համար կան հատուկ կազմակերպություններ, գյուղատնտեսներ, հողաշինարարներ, հայլ։ Այդ բոլոր կազմակերպություններին և մարդկանց — ի հարկե, տնտեսության բարելավման համար կարելի յե և պետք է դիմել ոգնության և խորհրդակցության։ Բայց դրանց հետ միասին մի բան միշտ պետք է հիշել. վոչ քե կազմակերպությունից-իրենից յեվ վոչ ել միայն գյուղատնտեսներից պետք է սպասել տնտեսության խսկական բարելավումը յեվ բարձրացումը։

Տնտեսության բարելավման խսկական հիմքը — այդ իրենք՝ գյուղացի տնտեսներն են։ Իրենց ինքնագործունեյությամբ, իրենց գիտակից ձգտումով, սեփական ջանքերով, ուժերով լավացնել տնտեսությունը և վերաշնել կյանքը նոր հիմունքներով, ահա ինչի վրա պետք է կառուցվի բարելաված տնտեսությունը։

Եեթե կա այդ հիմքը, ապա զանազան հասարակական և պետական կազմակերպությունների, գյուղատնտեսների և այդ մարդկանց աշխատանքներն ոգտակար և հաջող կըլինեն, իսկ հակառակ դեպքում դըրսից ոգնություն ստանալու համար ամեն տեսակի ճիգը աննպատակ և անոգտակար կըլինի։

Իրենց կյանքի և տնտեսության բարելավման դործն ամենից առաջ հենց իրենց՝ գյուղացի — տընտեսների գործն և լինելու, իսկ մնացածը կանեն գյուղա-

տնտեսները, կազմակերպությունները, ևայլն։ Դրսի ուժերը միմիան այն ժամանակ կարող կըլինեն ոգասակար լինել, յերբ գյուղացիներն իրենք իրենց կանոնավոր կողագործեն։ Փոխարինել գյուղացի—տնտեսների ինքնագործունեյությունը և ձեռնարկության վոգին չեկարելի վոչ մի միջոցով, բայց բարձրացնել նրան, ուղիղ ընթացք տալ, ավելացնել նրա ուժը և գործի ընդունակությունը՝ կարելի յե և անհրաժեշտ ե:

Ինչքան ել տնտեսն իր տնտեսությունը բարելավելու ցանկությամբ լցված լինի, ինչքան ել նա գործունյա լինի և ձգտող, այնուամեայնիվ շատ հաճախ մենակ անկարելի յե կատարել այն, ինչ կարելի յե կատարել միայն ընկերությամբ, միությամբ, ուրիշների հետ միասին։ Ահա այստեղ ե առաջանում փոխադարձ ոգնություն ցույց տալու համար յեղած անհրաժեշտությունը։

Աշխատավոր ազգաբնակչությանը փոխադարձ ոգնություն ցույց տալու համար Խորհրդային իշխանությունը տրամադրում ե ամենալայն հարմարությունները։

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

Կոռպերացիան իր բոլոր տեսակներով մեր գյուղատնտեսության վերականգման գործում կարենք պատասխանատու գեր ունի կատարելու։

Այն խոշոր գրամական միջոցները, վորը տրամադրում ե Խորհրդային իշխանությունը գյուղատնտեսությունը բարձրացնելու համար, ուղարկվում են գյուղակարպված ճանապարհով, այսինքն՝ կոռպերացիայի միջոցով։

Իսկ ինչ ե կոռպերացիան։ Կոռպերացիան միասնական, ընդհանուր համաձայնության բերած աշխատանք ե,—այժմ զրա մասին բոլորը գիտեն։

Միմիայն կոռպերացիայի ոգնությամբ գյուղացին կարող ե իր գյուղատնտեսական մթերքները շահավետ գներով սպառել խուսափելով մասնավոր միջնորդների, կուլակների և սպեկուլյանտների ձեռքն ընկնելուց։

Միայն ընկերություն կազմելով, գյուղացիները կարող են ձեռք բերել իրենց համար ամեն տեսակ մեքենաներ և գործիքներ։

Կոռպերացիայի ոգնությամբ կարելի յե լավացընել անասնապահությունը և կարգավորել կաթնատընտեսության արդյունքների շահավետ վաճառումը։

Առաջ բերելով մելիորատիվ ընկերություն (հողի բարելավման) կարելի կըլինի մեր արոտատեղերը լավացնել։

Կոռպերացիան մի ուժեղ, խոշոր ուժ ե, վորն ընդունակ ե արագ առաջ տանել մեր գյուղատնտեսությունը։

Ամբողջ գյուղական ազգաբնակչությունը պետք ե հրապուրվի և տարվի կոռպերացիայի գաղափարով։ Յել այդ կըլինի լավագույն ապացույց նրա, վոր կոռպերացիան գյուղում դրված ե լավ հիմունքների վրա և ճիշտ ե ըմբռնել իր ինդիքները։

### ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

Ազգաբնակչությանը փոխադարձ ոգնություն ցույց տալու մյուս ձեզ հանդիսանում ե կոռպերացիան։ Կոռ-

պերացիան ոտար խոսք ե, վոր նշանակում ե՝ աշխատակցություն, փոխադարձ ոգնություն, համաձայն վործունեյություն կամ համագործակցություն:

Յեզ իրոք՝ տնտեսության բարելավման գործում հաճախ հանդիպում ենք այնպիսի արգելքների, վորոնց մենակ մարդն անկարող ե հաղթահարել, որինակ՝ մետնտեսություն կամենում ե ձեռք բերել ազնվացեղ, թանգարժեք մի ցուլ կամ կատարելագործված մեքենա, վորը մենակ չի կարող ոգտագործել և չի յել կարող գնել։ Այդ բոլորը կարելի յե անել միայն ընհանուր համաձայնությամբ։ Ընդհանուր համաձայնությամբ հեշտ ե կարգավորել, հայթհայթել և հոգալ աընտեսության պետքերը և մթերքի սպառումը շուկայում։ — Հենց որինակ յուղ պատրաստելիս, եայլն։ Ընդհանուր համաձայնությամբ հեշտ ե դրանք գտնել աընտեսությունը բարելավելու համար, առանց կուտակների հետ գործ ունենալու—մտնելով վարկային ընկերության մեջ։ Շատ լավ կազմակերպված կոոպերացիան հաճախ, իրոք, հրաշքներ ե գործում տնտեսությունը բարելավելու գործում և այդտեղ են քույերը դառնում ուժեղ։

Առանձնապես կոոպերացիան կարելոր ե թույլանկարող գյուղացիության և գյուղական չքավորության համար։

Առանց միանալու, առանց փոխադարձ ոգնության մեր անկարող գյուղացիությունը չի կարող վորտի կանգնել և իր աշխատանքի արդյունքն ոգտագործել այնպես, ինչպես հարկն ե։

Անշատված, թուլացած մանր գյուղացիական տնտեսությունն անխուսափելի կերպով գնում ե դեպի կործանումը։

Այդ դրությունից չափոր գյուղացիությունը յեկ գրանել յեվ վորի կանգնել կարող ե միայն կոոպերատիվ միությամբ։ Ահա թե ինչու այս բոպեյիս Խորհրդային իշխանությունն իր ամբողջ ուշադրությունը լարել ե այդ հանգամանքի վրա, վորպեսզի պահպանի չքավորությանը, նրան կոոպերացման յենթարկի և այդպիսով նրան ոգնություն մատուցանի և լինի նրա նեցուկը ու պաշտպանը։

Սակայն կոոպերացիան կարելոր ե վոչ միայն առանձին տնտեսությունցիների համար, վորոնք միշտ կը գտնեն նրա մեջ ամենահարմար ձեւը բավարարելու իրենց զանազան պահանջները։ Կոոպերացիան կարելոր նշանակություն ունի մեր ամբողջ տնտեսական և ամբողջ պետության կյանքում։ Կոոպերացիան մի այնպիսի վործ ե, վորտեղ շահերը համաձայնության են գալիս և առանձին անհատների, և՝ ամբողջ հասարակության, և՝ պետության հետ միասին։

Ինչպես առանձին գյուղացի տնտեսներին, նույնպես և ամբողջ պետության համար կարելոր ե, վորպեսզի մեր տնտեսությունը լավանա։ Յեթե ուժեղանան մեր գյուղացիական տնտեսությունները, ապակուժեղանա և ամբողջ պետությունը, ու ընդհակարակը, Ահա թե ինչու բանվորա գյուղացիական կառավարությունը զարգացնում ե մի ամբողջ շարք միջոցներ, գյուղատնտեսական, դրամական, տնտեսական և այլ ոգնություն հասցնելով մեր գյուղացիական տնտեսություններին։

Բայց ինչպես անել այդ, յերբ մեր գյուղացիական տնտեսությունները ցրված են հանրապետության ամբողջ տարածության վրա միլիոնավոր առանձին

տնտեսություններով։ Ի՞նչպես այդ բոլորին ոգնել։ Ի՞նչպես իմանալ, թե վորոնք են, վոր շատ կարիք ունեն սերմերի, վորոնք՝ մեքենաների և վորոնք՝ անառունների կամ դրամի, Պետությունն ե, վորը ոգնություն ե հասցնում և առանձին գյուղացի—տնտեսների, վորոնք ցանկանում են ստանալ այդողնությունը—յեթե տնտեսությունները միանան, նայած իրենց կարիքներին, այս կամ այն կոռակերատիվին։ Վարկ՝ գյուղի մատակարարումը մեքենաներով, սերմերով, ազնըցեղ անասուններով ևայլն, ևայլն հարմար ե և ամենից լավն ե ցանկանալ կոռակերացիայի միջոցով։

Յեվ ահա թե ինչու Խորհրդային կառավարությունը գերազանում ե ոգնություն հասցնել կոռակերատիվ միությունների միջոցով և վոչ առանձին, անջատ անհատների։ Անջատ ուժերով միլիոնավոր առանձին մանր տնտեսությունները, թուլացած՝ պատերազմի ժամանակ, չի կարելի վերականգնել։ Դրա համար անհրաժեշտ ե, վարպեսզի առանձին գյուղացիներն իրենց տնտեսության բարելավման գործում ընթանային վոչ թե առանձին, իրարից անջատված ճանապարհներով, այլ կապվեյին վորոշ, ընդհանուր ձգտումներով և գործակցությամբ։ Այդ կարող ե անել միայն կոռակերացիան։ Միայն կոռակերացիան կրսովորեցնի գյուղացիներին միաբան աշխատանք լիկ երանց պահանջներն ու ույժը միացնելով՝ կրբերի երանց համար տնտեսության լավագույն ձեվեր։

Յեվ իզուր չե, վոր Համառուսական խորհուրդների 6-րդ համագումարն ընդունել ե, վոր «զյուղական տնտեսության վերականգնումը կարող ե հաջող լինրանալ այն դեպքում, յեթե պետության կողմից գյուղացիական

տնտեսություններն ոժանդակելու այլ միջոցների հետ միասին լայն մասսաներին կրդասիրարակին զյուղական տնտեսությունը վերականգնելու ինքնազործունելուրիան լիկ կոռակերացիայի հիմունիներով։

Ոկե 13-րդ համագումարը 1924 թ. իր կողմից հաստատեց, վոր՝ «Առանձին, լուրջ ուշագրություն պետք ե դարձնել գյուղում կոռակերացիայի զարգացման վրա, ի նկատի առնելով այն բացառիկ դերը, վոր կոռակերացիան պետք ե խսդա գյուղացիական տնտեսության համար։ Գյուղի կոռակերացիայի թուլությունն ամենաթույլ ողակն ե պրոլետարական արդյունաբերության և գյուղացիության միջև լինելիք զոդմանը»։

Լենինը դեռ 1922 թվին գրել եր՝ «Մեզանում կոռակերացիայի վրա նայում են կողմնակիորեն, չհասկանալով այն, թե ի՞նչ բացառիկ նեանակուրյուն ունի այդ կոռակերացիան նախ յիկ առաջ՝ սկզբունքային տեսակետից լիկ 2) վորպես նոր կարգերին անցնելու մի նաևապարհ—ուստ հնարավոր են հասարակ, բերել յեվ մասէիկ գյուղացու համար»։

Համերաշխությունից փոքրիկ գործերն աճում են, իսկ անհամերաշխությունից նույնիսկ մեծ գործերը քայլքայլում են։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   | Ցերես |
|---|-------|
| 1. Յերկու խոսք իմ աշակերտներին                              | 3     |
| 2. Առաջաբան   | 4     |
| 3. Գյուղատնտեսությունը և գյուղյերի տասարդ                   | 10    |
| 4. Գիտությունը փրկում ե                                     | 12    |
| 5. Արդյոք հարկավիր ե գյուղացուն գիտություն                  | 15    |
| 6. Գյուղատնտեսական խմբակներ կամ բջիջներ                     | 18    |
| 7. Ի՞նչ սովորեցրեց փոքրիկ Դանիան                            | 21    |
| 8. Ինչպես են ապրում Դանիայի գյուղացիները                    | 24    |
| 9. Հողը և բույսը  | 29    |
| 10. Պահպանիր խոնավությունը                                  | 33    |
| 11. Խոնավության սպառումը հողից՝ Մազականություն              | 35    |
| 12. Ի՞նչ են ասում մազականության վերաբերյալ փորձերը          | 40    |
| 13. Ի՞նչ ե «մշակելի» հողը                                   | 42    |
| 14. Հողի վերնաշերտի մշակումը                                | 47    |
| 15. Ի՞նչ նպատակների յե հասնում հողի մշակությունը            | 50    |
| 16. Վերնաշերտի մշակության ազդեցությունը հնձի բարձրացման վրա | 51    |
| 17. Բույսերի բաղկացուցիչ մասերը                             | 54    |
| 18. Հողի պարարտացումը                                       | 55    |
| 19. Մոխիր   | 59    |
| 20. Կոմպոստ (աղբախառնուրդ)                                  | 26    |

|  |     |
|--|-----|
| 21. Ինչու գյուղացին իր դաշտից քիչ բերք է ստանում   | 68  |
| 22. Անսիստեմ տնտեսության պակասությունը             | 71  |
| 23. Կոիվ անսիստեմ տնտեսության դեմ                  | 72  |
| 24. Վաղահարոս                                      | 76  |
| 25. «Զբաղված» ցել                                  | 79  |
| 26. Բազմացանքս սերմնափոխությունը                   | 83  |
| 27. Բազմացանքի ոգուտները                           | 86  |
| 28. Պալար-արմատապտուղ բույսեր                      | 89  |
| 29. Արմատապուղներ                                  | 90  |
| 30. Ի՞նչ են տալիս արմատապտուղները                  | 90  |
| 31. Յերեքնուկի ցանելը դաշտում                      | 91  |
| 32. Ի՞նչով ե նշանավոր յերեքնուկը                   | 93  |
| 33. Յերեք գլխավոր կանոն                            | 97  |
| 34. Յերաշալ և նրա դեմ պայքարելու միջոցը            | 98  |
| 35. Սերմեր   | 99  |
| 36. Շարքային ցանքս                                 | 100 |
| 37. Անասնաբծություն                                | 101 |
| 38. Անասնապահության զարգացման անհրաժեշտությունը    | 106 |
| 39. Վոշխաբաբծություն                               | 107 |
| 40. Խողաբծություն                                  | 109 |
| 41. Կերի արտադրության բարձրացման անհրաժեշտությունը | 110 |
| 42. Մարգագետնի զարգացումը                          | 111 |
| 43. Մարգագետինների խնամքը                          | 113 |
| 44. Փորձը գյուղատնտեսության հիմքն ե                | 116 |
| 45. Տրակտորիզացիա                                  | 120 |
| 46. Ելեքտրոֆիկացիա                                 | 126 |
| 47. Ելեքտրոֆիկացիան գյուղում                       | 126 |

|  |     |
|--|-----|
| 48. Գրագիտություն և լուսավորություն . . . . .            | 131 |
| 49. Ինքնազործունեյություն և փոխադարձ ոգություն . . . . . | 132 |
| 50. Գյուղատնտեսական կոռպերացիա . . . . .                 | 134 |
| 51. Կոռպերացիա . . . . .                                 | 135 |

---

Վ. Բ. Ի. Պ. Ա. Կ.

Յերես 26.ում տպված «Տարեկան բերք» բառերը  
պետք ե կարդալ՝ «Տարեկանի բերք»:

ՀՀ Ազգային գրադարան



NL0291513

15691

## ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Գյուղատնտեսական տեղեկատու
2. ԳՈՒՐԻՒՆ, — Գյուղատնտեսական կենդանիների գու գավորումը
3. ԴԻՄԻՑԻՑԻՑԵՎ, — Մարզագետինները, նրանց կյանքը բարելավելը և մշակությունը
4. ՍՎԻՐԵՆԿՈՂ, — Վոչխարաբծություն
5. ԶՈՒԲՐԻԼԻՆ, — Հող
6. » , — Բույսը և նրա կյանքը, և ուրիշները

## ԿԱԶՄՎԱԾ ԵՆ ՆԱՅԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Հողագիտություն
2. Հողի պարարտացումը
3. Հնդկանուր յերկրագործություն
4. Բանջարաբծություն
5. Այգեգործություն
6. Հնդկանուր անասնապահություն
7. Մարզաբծություն
8. Խոտաբծություն
9. Կաթնատնտեսություն, և ուրիշները:

## ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸՏԵՍՆԻ՝

«Գյուղատնտեսության բարձրացման ուղիները»

ՊՐԱԿ Բ.